

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆԿԵՐ:

Ելեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:



Ծնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայթում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Утп түшілтөрө – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhlib.am/>

E-mail: info@artsakhlib.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhlib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhelibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

Ap1
216

Иордан
Симонид

ԵՐԿԵՐ

11
Наш
Симбирь
1846

2259

Литературный
Греческ

Библиотека

• 96 •

Կազմեց և խմբագրեց
Ս. ՌԻՄԱՆՅԱՆ

Ա. Բ. Ա. Զ. Ա. Բ. Ա. Խ.

ՀՄԲԱՏ ՇԱՀԱՅԻ
ПРОИЗВЕДЕНИЯ
(На армянском языке)
Армянское государственное издательство
(Айнетрат), Ереван, 1961

Բանտառեղծ Ս. Շահայիսի անոնքը կապված է անցյալ
դարի 60-ական թվականների հայ առաջավոր գրականության
ու հաւաքականության հետ:

Հանդիս զուրով հայ նորադաշին պոեզիայի զարդացման վազ
տուորում, նա իր բժևաստեղծություններով և մանավանդ
տեսակի միաբարչականությամբ նշանակալից գերխանաց նոր սկզբա-
նավորություն, գերխանական վարդացման զորդում:

Երբ զուրով տավութեղ է կազմ Ս. Շահայիսը, հրապարակի
ժամ Էր Ա. Վահագիանին մարտնչնել պահիան, կորեն լույս
էր տեսել Հայություր, Շնորհրդ արտասուրության մեջ, յե-
րազանցական քայլության համար հայության մեջ շահք գննեցնել
Դաւաճ Պաթիուայի նրդերի կողման մեջուրներ Ս. Շահա-
յիսի ձայնը:

Իր լայափած հորդերու իր աշխարհը բնակչության մեջ Ս. Շա-
հայիսը ուրաքանչ նահապարհ նկազավ, զայց զեսի մեջանդյա-

Նը, պիտիրապրգեց նրա բանակում, բազաքական-հասարաւկան իր հաւաքքներով հակվեց դեպի նա, բանաստեղծական խոսքը գործնելով հասարակական-բազմաբական սայցարի զենքը:

Ա. Եահազիզը ծնվել է Աշտարակ գյուղում 1841 թ. սեպտեմբերի 5-ին:

Վազ հասակում հորից գրկելու պատճառով, մանուկ Սրբաբատի ուսման զործը դառնում է նրա մեծ եղբոր՝ Հովհակիմի մասնության առարկան Խվ անա, ուսումնասեր Հովհակիմը ոչինչ չի խնայում եղբոր ուսման զործը հովար համար:

1851 թվականին, երբ Մերաբը ընդամենք 10 տարեկան էր, Հովհակիմի ջանքերով ուղարկվում է Խուսաստանի առաջազդոր մաքր կենտրոն՝ Մոսկվա, Խոդարյան ճեմարանում սովորելու համար:

Փոքրիկ Մերաբն ընկունքում է Խոդարյան ճեմարանի նորաց նախակրթարանը, որտեղ սովորում էին սրբ նման օհայ անապատանք երիտասարդ Կարճ Ժամանակվա ընթացքում ցուցաբերած փաշուն բնորությունների շնորհիվ, ուզիմ ու ուսումնասեր Մերաբը կարողանում է ասազազիմել ու գառնալ ճեմարանի աշխի ընկնուզ աշակերտներից մեկը Հենց այդ տարիներից էլ նո սկսում է իր ստեղծագործական առաջն բարերը, դրում է կարուախ, վշտի հայրենասիրական զգացումներով համակած ստանավարներ, սրբեր սկզբում լուս են տեսնում ոճուաքաղէ ամսագրում և ապա, 1960 թվականին Հրասարակում են առանձին գրքով «Ազատության ժամեր» վերնազրի տակ:

21 տարեկան հասակում Ա. Եահազիզն ավարտում է կազարյան ճեմարանը և մնում է տեղում որպես վերակացու և նախակրթարանի դասատու:

Այստեղից էլ սկսում է Ա. Եահազիզի ժամկավարժական գործունեությունը, մի անբարի ու եռանգուն գործունեություն, որը տնում է շուրջ 35 երկար ու ձիգ տարիներ:

Ա. Եահազիզի դրական-ժանկավարժական գործունեությունը սկսվում է երեք անդամ՝ 1887, 1892 և 1897 թվականներին. Այդ տանակատարությունների ժամանակ ակտիվ նախամենություն է հանդիս բերում Մոսկվայի հայ հասարակությունը:

Ա. Եահազիզի 30-ամյա հորելանի տոթիվ Մոսկվայի հայ հասարակությունը հավարում է մի բավական խաղոր դրամագույն՝ նվիրելով այն արժանագոր հորիլյարին: Ստկայն Հասարակական շահներով ապրող բանաստեղծը հավաքած դրամը կոչում է հայ նոր դրականության ուղարկիրանիր՝ Արովյանի և նազարյանի անունով՝ տարով նորան սնըրովյան-Նազարյան դրական ֆոնդը սեռությունը Այդ ֆոնդից երկար ժամանակ սիստեմատիկար զրամական ողբություն են ստացել մեր կարիքագոր գրուները, դրականագիտները և կուլտուրայի այլ գործիշերը:

Իր սակագագործական կյանքի երիրորդ էտապում Ա. Եահազիզը զբաղվել է կերպարանցաբն հրապարակախոսությունը: 1881 թվականին լույս են տեսնում նրա ուշապարակիությունը, 1897-ին՝ «Ամսագիր նամակներ», 1901-ին՝ «Շիշություններ Վարդանանց տանի առթիվ», 1903-ին՝ «Մի քանի եռոր իւ ընթերցուներին» աշխատությունները, որոնց մեջ առաջազիմուն գաղափարներից բացի դրանորել է նաև մեր հեղինակի լիբերալ հայացքները:

Ա. Եահազիզը մահացել է 1907 թվականին, Մոսկվայում:



Ա. Եահազիզի սահմանադրամական առաջին մականական, ինչպես առաջինը, լույս է տեսել 1880 թվականին՝ «Ազատության ժամեր» բնուածությունը խորացրի տակ: Անհուն սեր դիմի Արտարակի ու նրա բնությունը, տոշորոշ կարու հարա-

գատների հանդեղ, խոր հրախառափառակոն ու հարգանքի գցացում մանկական և ուսանողական ընկերների նկատմամբ, վեցաշաբաթ մաքուր, անազարյու սեր պեպի իր հոգու փայտ փայտած կուրսը

Չնայած թեմատիկայի ալդ սահմանափակությանը, շոշափած հարցերի ներ անձնական բնույթին ուղարկության ժամերին մեջ այնուամենացնիվ, պարզորու երևում էր կանքի սուցիական հակասությունների ապահու երդից, զարցվում էր բնույթյան զեմ բժրոստացող բանասահծի շոնչք, ուրիշ գրձնում էր ծովովրդի առօրյա հոգեբարի իրորակին ազրող բանատեղ-բաղարացու նախատեսարու

Տակավին 1857 թվականին գրաքար դրած իր «Հայ մասուկ յատարութիւն» ուսանավորի մեջ, պատանի բանտուելու պատմելեւով պանդիստիյան մեջ առաջնորդ հայ մանուկի փիաներ, ակնարկում է մեր ծովովրդի առանձնության կյանքը առանառարկու Թատրության մեջ սննդած իր անձնական ապրումների հմարտացի փերտրապատիյումը, երիտասոր դու պետք հիշյալ բանասականության մեջ կարողութ է մասնակի երեսովը լինանարացնել և սեփական վիճակի պատկերման միջոցով ներկայացնել բազարական անբարենպատա պայմանների հնականորվ հայրենի հողից պոկիւմ հայ ծովովրդի թափառ կամքու

Այդ շրջանի սահմանագործությունների մեջ իր նորարական զարգացմանը առ հայրենիքը տաճած չեմ տուին սիրով արձեքավոր է նաև Ս. Շահազիդի «Ալշատին հրամարական Աշտարակի Ընտառ ոսմանավարը, որտաշ Երիտասարդ պետք թուժախոս լիցվով արահանյունում է իր բուռն կարուց հայրենի երեր!» ձնեղավայր Աշտարակի նկատմամբ:

Նույն ոսկով են զրված երիտասարդ Շահազիդի «Իմ միջնա կը», «Ի՞զ որտիս» և «Ելզուտության ժամեր»-ում զետեղված մի շարք այլ բանասամենդություններ:

Ս. Շահազիդի ալդ շրջանի սահմանագործությունների մեջ

զարգմունքի թարմության տեսակետից կարեռ են պատանի բանասամենդի սիրո երգերը, նրա ոռմանները, որոնք գրված են եւրչչափով, ալիքի հոգեբուի են, զառ երեակայությամբ տալուրիած Անհնալով իրական հմքը, սիրո այդ երգերը կոնկուրս են, հնաւագես և տպափորչ, նրանց մեջ լիբանաց էր կրտներ, նրանցում կար հոգի, մարդկային ապրումներ իսկ ուրաքամանները վկայում էր այն մասին, որ անրյալ գարի առ ական թվականների վերջերին հայ գրականության մեջ մուար էր զործում մի նոր բանասական, որն իրավամբ զառն նույն էր մեր նորագույն պուեզիայի սկզբնավորուներից մեկը:

ՀՀՀ

«Ազատության ժամեր»-ից մի քանի տարի հետո, 1863 թվականին լույս տեսած Ս. Շահազիդի սահմանադարձորդությունների երկրորդ ժողովածուն, որի մեջ զետեղված էին «Հայական բանատություններ» և «Հեռունի վիշտը» պոեմը:

Մանկագործությունների ար նոր ժողովածուն միանդամենց հրակ երեց Հեղինեակին և հաստատեց նրա մնայուն տեղը կոնցը վերափոխելու վեմ զաղափարներով տոգորված 60-ական թվականների մեր զրականության մեջ:

Ծրբագրած կատարելով դեպի հասարակական կյանք, արձարձելով զարի ամենահուզող հարցերը, Ս. Շահազիդի 60-ական թվականներին զրած սիրո երգերը զերծ են վերացական, ունիտական պատկերներից, նրանք հազեցված են հասարակական բանահություններ, տոգորված են հումանիստական գուղքաբանությամբ, ունիտական պատկերներով և ունեն սոցիալական մեծ արժանիքները Բանասականի անկեղծ զգացուների արտահայտություններ հանդացաց այս սահմանագործությունները խոր մարդասիրական դադարիարների հետ միասին ունեն նաև բարոյա-դաստիարակական եւ ականակություն, որով էլ հայ բանատեղածը հակա-

կրվում էր բուրժուական աշխարհի քաղթենիական գրողներին, բոլոր ժամանակների բուրժուարային զրականությանը

Ա. Շահապիջի սիրային բանտվածքներությունները զուսպ են, նրանց մեջ պահպանված է խոհքի շափակրություն, ամեն մի տոդի մեջ զգացգում է անկեղծություն ու նվիրվածություն և, որ ամենակարենորն է՝ խոր հարգանք սիրած էակի նկատմամբ:

Դու համեստ աստղիկ, ամեաշխատ լուսին,
Դու իմ խնդուրյօն և վիշտ իմ խարին,
Դու իմ պայծառ օր և ախատ զիշեր,
Իմ միակ կյանքում դու միակ քններ:

Այդ անկեղծ ու նվիրվական սերն էլ ահա մեր բանաստեղծի հոգում առաջացնում է ուժին ատելություն մարդու անհատականությունը ոտնահարող, նրա 'սրբազն զգացումները որտեղ այն աշխարհի նկատմամբ, որտեղ սոցիալական անհավասարության պատճառով շատ շատերի սիրու հետ խաժում է նաև մեր բանաստեղծի առաջին սերը: Այս հոգի քառ էլ աշաւ, ինչպես Ս. Շահապիջի ողջ պեղյալում, այնպես էլ սիրու երեքրում բարձր է հնչիւմ սոցիալական բողոքի նուան:

Ա. Շահապիջի սիրու երգիրը («Առաջին սեր», «Միրս կարուս, «Միրալիսպ», «Ծնորքրդապոր դիշեր» և այլն) թեև այս օրվա ընթերցողի համար սոսկ պատմական արժեց առեն, բայց իրենց ժամանակին հուզել են սրտեր, ազդել են մեթերի վրա... Այդպիսիններից է նրա հոչակավոր սերազը, որի նյութը դարձալ սերն է, բայց այս անզամ մորն ու հայրենիքին նվիրված: Թեև 100-ամյակ է անցել այս օրից, երբ ոչյուսիսափայլը ամսազրում տպազրից այդ բանաստեղծությունը, բայց նա միշտ եղել է հայ մարդու շորթերին, երգվել է թե՛ ուրախ և թե՛ տիուր պահերին:

Հինեւով Գեղինակի անձնական լիրիկալի բարձրակետը,

ուրի բանաստեղծությունը միտամանակ հայ բազմադարյան գոհովայի լավագույն նմուշներից է, մեր պոետական արվեստի ուժովներից մեկը:

Նույն հուզը, զգացումների ամենաշականությունը, այդ բանակը մեր բնորոշ տարրերն են, որոնցով էլ պայմանագրված է նրա կատարյալ ձերը:

Ես լսեցի մի անուշ ծայն.
Եմ ծեռացած մոր մօտ էր —
Փայլեց նշույլ ուրախուրյան,
Թայլ ափսօն ս, ու երազ էր:

Այսպիս մեզ է սկսվում այդ բանաստեղծությունը և այսպիս մեզ ու վազարուց չ նա իր ամրողության մեջ: Այդ մեզը ու նվազում տողերի միջոցով անցնում է պոհորի բյուգեղյա զգացումների վճիռ հոսանքը որը համակում է ընթերցողի ողջ կությունը, վարակում է նրան ազնիվ զաղափարներով, հայրենի աշխարհի ու հարազատների նկատմամբ տածած սիրո, կարուսի բազզը տանչանքներով:

Մասկդագործող անհատի սուրյեկտիվ ապրումների ու գոյացումների արտահայտությունը լինելով՝ այս բանաստեղծությունը ունի ընդհանրացնող մեծ սիւծ թառն ճակատաղորի ու բախուի քմարով հեռավոր ափերն ընկած յուրաքանչյուր նոյ մարդ Ս. Շահապիջի օթրազարհ ինքնարուի ու հուզաթաթակ տաղերի մեջ զտավ իր ապրումների ու մտորումների արձարուեները: Նա այդ բանաստեղծության միջոցով կապվեց նոսուր հայրենիքի հնտ, վերապրից մանկութ օրերը, անսալ հայրենի աշխարհի լքնադ բնությունը, նրա կարկաչանու շրերը, զգաց հարազատների գորգուրանքը, սիրառուն մոր տաք ամերայրը: Տիսավ ու զգաց այդ բոլորը և պահպուտի իր հոգու տեհեանքներին նա հագուրդ տվեց անուշ երազներով: Գաղափարական հարազատությունը, զգացումների անկեղծությունը

ո շերմաթյունը և վերքապես բանաստղծության ձևոցինաւէ
տաք հետապնդություն ամփելի ու ամփելի ստվարացրին հզկինակի հա-
մազգացագնների թիգրի եզ և ներազարդ իր մեզմ թափիծով Հռւ-
գեց բուրբն, կարճ մաժանակի բնիքցրում թափանցեց շատե-
րի սրահը, մասք մազպրդի լայն խօսքերը մեջ, զարձակ բռ-
գա սրահը, մասք մազպրդի լայն խօսքերը մեջ, զարձակ բռ-

Ապդիա բաղաբական շեշտիք սկ զարգագործներով համարված ուրիշ շատ բանասիրականների հետ միասն Եահազիդի այս նոր բաղացանում զետեղված էր նաև հնդինակի ռեկցիա սուրբ Պարմեր բանաստեղծութունը, որի մեջ լուսափած Հարությունը պահպանված էր խիստ բնութագրական էին գերը, պահպանված զարգագործները խիստ բնութագրական էին պահպանված լուսափած համար:

Արև բանուստեղծության մեջ Հռիփսակը վերհշում է իր սույնագործակիցներ այն շրջանը, երբ ինքը առնչող քնարի լաւարով է երգի և միան սիրո գեղեցկությունը, նրա թուակացը Առաջան անցել է տարիներ, Երիտասարդ բանաստեղծը ապրել է Հասունացման շրջան, ճանաչել է կյանքը, տեսել է Նրանում գործիքուն ունեցող սոցիալական անարդարություններ, լուս է ծովովդի պար Հառաջաները, նրա պէլիզոն ու գանգոստրա, և ացն ու Հառաջաները նվա անս այս բուրուց հետո բանաստեղծը իրին նշուել է Հասարակական ասպարեզ՝ ժողովրդի կյանքը, նրա վիշտն ու տառապանքը Երկիւու

Ես ոխուցի լինել մակ
Հասաւախաց պիտույքի,
Երգի ուսա զուծ ու վաստակ
Արցա ճայր այս կյանիք:

Առաջին բանաստեղծի գաղափարական հասունացման
վայրագույցն էր, միաժամանակ Կրա շրջադարձը՝ նեղ անձ

Խական ապրումներից զիսիք հաստիական կյանք և կ հրառվի,
Ա. Եռակափիք ՅԵ-ական թիւկանների ստեղծագործության մեջ
որոշակիորեն երեսում է արդեն ձեռագործած աշխարհայցը ու
նեղոց. Հաստիական կյանքով խորացնեա ապրող և ամրութ
բարության կարգիրի եկտաժամբ օպողիցիոն դիրքորոշում
ունենալ պրոգր

Ազ տեսակետից ուշագրավ է նրա ռեզգային վիճակից բահանակացնությունը, որտեղ շատ ցայտուն է Նալրանդյանական պատրիարքերի ազգեցնությունը, և որտեղ այնքան Հայութեան թափառ ներում է մերկացնող խոսքը՝ չուրց տարածված ապահովության դեմ, ոգեշնչության կերպով փառարանված է Ժարդու պատրիարքությունը, հանդեմ և բերլուս բողոքի ու բնգվարման բացահայտ որոշակարությունները:

Ապատութիւնը համարելով տառը աքսորական, Ա. Եամագիդը իր ազգ բանասականության մեջ հանդու է եկել բնագիտ ամեն տեսակ բնակալության, իր ժերդացնող խորը է առել արքու բազարական կարգերի և կեատմամբ՝ զրանով իսկ ուրագանքերով հայ և ուսու ՅՇ-ականների ազատատենչ գաղափարներին:

Անուշեմեացարիզմի և ամեն տեսակ բնակալության նըլառամքի մեր բահասատեղմի ունեցած այդ տրամադրությունների տեխնոլոգիան էն երա ողջ պանդիալով՝ միքք ազատությամբ զայտաշիրք («Խաղը ըրդառություն բանասելնեցիս»), մերթ ետամաժայր ազատազրական չարձման հերոսների նկատմամբ իր փերարքելունքը բոլոց տալով («Խոտալուհիք և իտալացիք», մերթ իրենց ազատության և անկախության համար մարտնչող դիմունիք բաշէրին փառարանելով («Եղիշաներ և Զեյթուն», և այլի էլ բացարձակապես պոռթիալով բնդդեմ ամեն տեսակի բանախուն կոչ անելով ծողովրդին արյուն թափել կապահենիքց ապահովելու համար

...Մի զի՞ւ կաց, կանգնի՛ր աշխարհն Հայաստան։
Մի բափ տո՛ւ ուժավ, բող նեղդին տապանի
Անմ ևն արյուն իմ նվիշական։
Թող ցողն դաշտերդ փրկարյան նոսան։

60-ական թվականներին ուռաւական իմսերին կրնկի տակ հեծեղ ժողովուրդների կյանքը թեակուսից մի նոր փոլու Այդ շրջանում ավալի ուժեղ էր հեղում ուռաւ ուռուրուցին դեմքրաների Զերնիշնակու, Դորոլյուրովի, Գերցենի և նրանց հայ գինակից Մ. Նալբանդյանի ճամբար։

Ժողովուրդների ազատազրության հարցը, որ կապվում էր ցարական ինքնակալության առաջարձան հետ, զարձել էր օրակարդի խոնդիրը Արքն կատարվել էր նորատարական նույնաստանի և ազատասեր ժողովուրդների միջև հակասությունն ավելի սրբու 1861 թվականի տիրահոչակ ուժորմբ Ռժբուտացան ու ընդդումը սրպես այդ հակասության գրանուրումներ, մոլոքնում էին ամրող երկրով մեկ, որոնք և արձագանք էին զանում նույնաստանի սահմաններից դուրս ապրող ազատասեր ժողովուրդների սրտերում։

Այդ ամենի աղջեցության տակ ևոր թափ ստացան հայկական ազգային ազատագրական շարժումները Թուրքիայում, առանձնապես նրա հայաշատ վայրերում, 1862 թվականի օգոստոսին, Զեյթունի հայրենասեր ժողովուրդը շտանելով թուրքական անարգ լուծը, միտունական ուժով դուրս եկավ արյունական սուլթանի դիմ՝ կյանքի գնով ազատության նվաճելու համար։

Քնաճատելով այդ գեյրերը, Մ. Եահազիցը այն համարեց որպես փառակոր առաջաւացյա հայկական բաշագործության և այդ հերոսական ազգեցության տակ գրեց իր հայտ և եղանակի և Զեյթունս բանասնեղծությունը, որով էլ նա յուակ Զեյթունի հերոսամարտերը երգող հայ դուռանների շար-

քը՝ իր պատվավոր տեղը դրավելով Պեշիկթաշլյանի և ալլոց հոգիքի։

Ա. Եահազիցի տեղիկանիք և Զեյթունի բանաստեղծությունը թուրքական հրոսակախմբերի վեմ հայ ժողովորդի մղած պայտարի զեղարպեստական արձագանքը լինելուց բացի, այն ուզողված էր նաև մեր ժողովորդի ազգային միասնությունը երկվիճուու, ոչչ հայությունը Հոռոմի պատվակի գերիշնանությունը ենթարկել էր անկացնող կաթոլիկ քարոզիչների գեմ, որոնց այնքան կրոստայթյամբ մերկացնում էին բոցաշոնչ նալբանդյանը և իրա արևմտահայ համարոն Հարություն Ավաճյանը։

1864 թվականը Մ. Եահազիցի ամենահասում շրջանն էր Արդ թվականին դրած մենա մի սիրիոս և մի շարք այլ բանաստեղծությունների հիմնական իդեան հայրենակարությունն է։ Մենա մի սիրիոս սահմանադրում նեղինակը մթափելով նախկին տանընդ օրերին և պատ ժանկության թողած ազդեցությունից, իր եռանդը, ուրին ու գրիշը նվիրում է հայրեններին։

Խավար եմ ես, ուսիս զիշեր,
Եմ շուր կօդմին փառորիկ,
Չունիք ևն սեր, չունիք ևն սեր,
Ես սիրում եմ նայեննիք։

Հայրենիքի նկատմամբ չերմ, անկեզծ սիրով են տոգորացած այլ նույն 1864 թվականին, ուստ ռենուրուցին-դեմեկատ Դորուուրովի «Միլան դրց, և Սմիրնու» հայտնի բանասիցության նմանությամբ գրված Մ. Եահազիցի «Երդ մենանց Հայրենիքի ուռանազորը և շատ ուրիշները»

«Այն, ինչ արտահայտեց Մ. Եահազիցը իր բանաստեղծություններում, այն նույնը մենք տեսնում ենք հայինակի պահական ստեղծագործության դրամործոց և նույնի վիշտը պահմում։ Քրաքարի և նոր զարգացող աշխարհարարի լեզվական բառապահի վրա ստեղծված կապիւշնեն այդ գործը զարտցը»

զանի Հասարակական կյանքը արտացոլող գեղարվեստական մեծակտավ կարենը վագերաթիւնը մէկն է Նրա մեջ մարմին և առեւ ճայ ՅՇ-ականների մտքերն ու հույզերը, խռներն ու ապրումները, պատկերված է ժամանակի առաջավոր գործիչների հավաքական կերպարը, բացահայտված է անհատի ներքին արագեցիքն, նրա ողբերգությանը՝ մզգավանշալին իրականության մեջ:

«Էւսինի պիշտը» բարձր դնահաւալից ժամանակի հայ առաջավոր մասնակիւրի կողմից ։ «Հյուսիսափայլը ամսապիրի խըմարակիր Առաջապահը պահմին Ապիրված իր չերծ զրախոսականում այս համարից ու....սուրբ Հոգեգալալիւածը Հափշատակած բահասունութիւրը բարբառս, իսկ Մ. Խալքանդյանը կարգալով այս պոեմը, բաժանել է Նրա հերոսին համակող դասնագիր և, ծրա պիշտը, ինչպես պեղում են ժամանակի խօնները, համարել է իր անձնագան վիշտը Ինչպես իր վիրիկական բանաստեղծություններում, այսպես էլ «Էւսինի պիշտը» պոեմում, Ա. Եանազիլը արժարձեց հայ իրականության ամճացագառ կողմերը, ձադից ազադութ ու շանամու հարուստն, մերկացից անասակա, ասմբարդառ հոգերականներն, զրից կույզ էնասարացիւաթի հարցը, բնադասաց ժամանակի կրթական հնամանաց պիտիմբ, ծառացավ սոցիալագան մնջանաւ ու անսակ անարդարության դեմ, բայց պայման, հիբը, սփրինթյան գույքը նաև անսակ լուսավորության, համելողանը պայացին կրթության մեջ:

Խոլ երե նուրբոն բացվի կը բարորյան
Կը բացվի և Էւզ դաւը վիրուրյան:

Ավելին, բառավորությունը համարելով ամեն ինչի հեղութեանը կանքի զերտափորման միջոց, բանասակածը իր պահանում առաջարկում է ակադեմիա հիմնել ուժացր էջմիածնուուժ և էլեմինի վլամիք մեջ սահանական պահապահիքների մէջ բայց առաջարկությունը կամ առաջարկության մեջ առաջարկության մեջ:

փակիւ միայն Հասարակական կյանքի արատավոր կողմերը մուրեացնելով, և կամ բազարակրթությունը միակ փրկության ուղի համարելով:

Իրկար ժամանակ հայ առաջավոր և հնատղեմ Ծոսներենի միջն օւար վիճերի ասիթ պարձուծ այս պօհմի մեջ արժարակած են, ու միայն բառավորության ու սոցիալական խնդրությունը, ովք զրամատ է նոն զինի միջոցով քաղաքական ազատություն նետաւած հարցը ։ Տես այդ պահանուր, որ եթե լուսարդ գամեմի և որոշականենը եւ առ այսօր սեռ բանակերի ատելությունը բորբոք մի լրահազրուկ նրանք ուսունացում էին պոեմի արդեմք, իսկ նրա հնդինակը, իրք կանկածությունը անձաւած է առաջարկության տակ առնեմի:

Լրահատորի մեջ «Էւսինի պիշտի» հնդինակը մեղարդում էր աշուկական պատահաւությունները անելու հումոր, այս բանի համար, որ նա պոեմի մեջ պաշտինի աղասագրական պայտարի կող է անում. իսորուր է տակես «Էւսինի» յանք զործ զինի ձեռք բերիս լիակատար աղասագրիւթյունը վահագայում նրանց կողեւում է առաջ առած աղասագրական պայտարի սրբնակությունը:

Եթ հրամի սենոնի վլամի մեջ Համադեղը մառարանելով յիշենի, խուտացիների և սրբազն ապրանի ենած առ աղասագրուների առաջարկին բարուրությունը իր Հայրենակիցներին նրանց բնորդինակելու կող է անում:

Բող լողանակոն մեծամեծ զուծես
Այսօր շանցենն ձեղ նամար ունայն:

Զանուար որ պետական դաման սեմիմը միշտ էլ բանաստեղանին հաշկանդել է, նրան զրինի է տարձակ խոսելու հնարաւորությունից, բայց «Էւսինի պիշտը» պոեմի մեջ բաղմանին առաջիկացնել են Հանազիլի աղասագրական գաղափարները:

Աւեման քրե՛ւ, ուշեմն սրե՛ւ

Թող հանդիսանան այստեղ զատավիր.

Թող բափիմն անպարտ աւշտն առաներ.

Դա անման գործի ավետավոր:

Բազմաթիվ այլպիսի պատմութեաններ ունենալով, Ա. Շահազիկ պոեմը, առկային վիրջին մասում արտահայտում է մի մոռով թափահան, ոյն ամարտվում է ամրագին շնչառվ, որոնք անշոշշ կապված են ժամարտական-քաղաքական բարդ իրազրությունների հետ:

Որո՞նք էին այդ իրազրությունները:

1864 թվականից սկսած, այսինքն այն ժամանակ, երբ ստեղծվում էր «Նեսի վիշտը» պոեմը, 60-ական թվականների սկզբանացիստին զեմուկրտատկան շարժումը իր վայրէցք էր տպարանը՝ Արևին բանն էր նետքի այդ շարժման առաջնորդ՝ ն. Գ. Զերնիշնիկին, ձերբակարգած ու աքսորիած էին նրա մարտական զինակիցները, վագուց Պատրոպավլովյան բերդի նկողներուն հեծում էր բոցաշունչ նարանեղանու:

Ճարտակն կառավարության գաժան միջոցառումները տվել էին իրենց նողկարի արդյունքը:

Ռիակցիան ճապթել էր...

«Նեսի վշտի Ծեղինակը լինելով 60-ական թվականների Գասարական-քաղաքական այդ շարժման համակրողներից և Շետերդներից մեկը, նրա վայրէցքի պահին համակրում է մոռով արած սարութամբ, զատկացին խոշիրով և առեմի մեջ ցույնով է արձակաբռում՝ թե ճեաթ շեղալ տապալի շարին, կործանել բռնապետությունը:»

Նորու սիրու լցինց զառն մտածումներ,

Եթ նա շիւրաց բավալել Զարին:

Բանաստեղծի այս խոսքերը պիտի է Համարել սրահ տվյալ պատճառշանի քաղաքական-հասարական զեղիքի աղդեւ

յա թուն հնահանք, սրավճեան ազատություն ազետող ռեպյուտիստան զանան Հարվածների առաջ նահանջում էր, որի հնահանքով էլ յարօւմ էին ինտելիցինցիալի որոշ խավերի հուզմուրը

Հուսունաւությունն ու վճատությունը որպես տիսուր ժամանակիների հնահանք անշառչա գրությալ վն պիսի վերաբիշյալ ուսդիրի միջ բայց ինչպես իր բնթադրում, այնպես էլ ավարտի միջ ունենի վիշտը խոր լավատեսական է. նրա մեջ զրությունի է, մեր ժողովրդի զարիքի նկատմամբ բանաստեղծի ուկանութ հավատը:

Հ. ԼՈՎ. ՅՈՒ. ՓԵՍ. Ն



5

6

A handwritten musical score for piano. The title at the top reads "Pianomusik von Paul Körber". The score consists of two systems of music. The first system starts with a treble clef, followed by a bass clef, and then a treble clef again. The second system starts with a bass clef. The lyrics are written in German and are as follows:

Wachet auf, ruft uns die Stimme
Christi: Kommt, es ist Abend geworden,
und wir sind noch nicht einsam.
Kommt, es ist Abend geworden,
und wir sind noch nicht einsam.

The score includes a dynamic marking "ff" (fortissimo) above the first system and a tempo marking "Presto" below the second system. The page number "19" is at the bottom right.

ԱՐԱՐԱՏԻԱՆ ԴԱՇՅ

Մաքուր վտականի հոսին ի վիմաց
Յայն ի ծաղկազարդ դաշտ լայնատարած։
Մառք շուրջ խիտ առ խիտ կան տերևնազգեաց։
Քաղցրաձայն երգեն երամք կաթաւաց։
Ի ծերպը ծակուց որդանան գաղանք
Յորսողին ձեռաց գոլով անվրտանգ։
Սրփոեալք ի դաշտը ձիարձակ արանց
Ընհանան մըտանեն բուլից վարազաց։
Ընթանան ի գետս մանկոնք ձրկնորսաց։
Դառնան խրախամիտ առ ծեռզ իրեանց։
Բարտիք երկնուղեշթ անդէն ի յուժգին
Եարժին ի հողմոց, տերեվք տատանին։
Ի ծագել լուսոյ սոխակք անդադար
Երգեն հանգելով ի թուսի եւ ի ծառ
Ծիտք եւ ծիծեռումք անդէն անհամար
Ճընուելով թըռչին ընդ օդս տարմարար։

ՀԱՅ ՄԱՆՈՒԿ ՅՈՏԱՐՈՒԹԵԱՆ

Ա՞չ, ե՞րբ եկից ես 'ի դրախտ եղեմայ,
'ի ծաղկածաւալ տունքդ Փորգոմայ
Ըզքարինսըդ քո ե՞րբ համբուրեցից,
Որք ողողյալ են արևամբ վկայից.
Ե՞րբ հաշակեցից յանոյշ պտղոց քոց,
Որք հասեալ փայլին 'ի վերայ ծառոց.
Ե՞րբ արբից արդեօք 'ի քոց աղբերաց,
Որք խոփոշելով հոսին 'ի վիճաց,
Ա՞չ, նման ծաղկանց անկեալ թարշամիմ
Յայս Հիւսիսային երկրիս սիսերիմ.
Չի՞ք ինձ ոք ծանօթ, չի՞ք ոք աղջական,
Ընդ որում լիզուաւ խօսեցայց Հայկեան
Հայստա՞ն թշվուառ, դժբա՞ղդ Հայրենիք,
Հայեա՞ց յո՞ր վայրս են ցրուեալ քոյդ որդիք:

1857 թ.

ՈՂԶՈՒՅՆ ՀՐԱԺԱՐԱԿԱՆ ԱՇՏԱՐԱԿԻ ՀԵՏ

(Խմբ Կ. Սաղունյանցին, ուսանողին Մռսկովական
Կայսերական Համալսարանի)

Վերջին անգամ ես ճեմում եմ
Քո ծաղկազարդ ափերում,
Վերջին անգամ ես շրջում եմ
Քո բարետես վայրերում:

Ճեռանում եմ ես քեզանից
Դեպի հեռու երկիրներ,
Թո՞ղում եմ քեզ արտասվալից,
Խոսք մի տալով ողբանվեր

Որ ես երբեք չեմ մոռանալ
Քեզ, քո դաշտերն սիրելի,
Որ քո խնամբ չեմ ուրանալ,
Խնամբ ասեմ մայրենի:

Այլ հանապազ քեզ կառաքեմ
Որդիական նամակներ,

Եվ ստեղ ստեղ քեզ կնվիրեմ
Մխիթարական իմ ժամեր:

Քասա՞խ, Քասա՞խ իմ սիրելի,
Քասախ պայծառ պերճապառակ,
Վերջին անգամ ահ ողբալի
Խմում եմ չուրդ անուշակ:

Ա՞հ, Աստված իմ, ընչու համար
Պատկերահան շեմ եղած,
Որ այս վայրերս ծաղկագալար
Նկարեի շքեղացած:

Ընչու համար նըկարչական
Վրձինը լէ իմ ձեռին,
Որ այս զրերս Եվելցարական
Գծագրեի քաղցրագին:

Շնորհակալ են սիրոս և հոդիս
Քեղնից, բնություն անվախճան,
Որ շնորհեցիր Քասախ գետիս
Այսպես շքել տեսարան:

Վերջին անգամ, ով գյուղ սիրուն.
Ողջունում եմ քեզ սիրով,
Եվ գոշում եմ ես բարձրածայն.
«Տեղի՝ ծննդյանո, մնրաս բարով»:

Ահա եկավ, ահա հասավ
Հրաժարական ժամանակ,
Ո՞չ, կանչում է ինձ շտապով,
Ների՛ր, ների՛ր, Աշտարակ:

1857 թ.

ԽՄ ՎԻՃԱԿԻ

(Նվեր վեցերորդ դաստիան աշակերտներին)

Չորս պատի մեջ փակված եմ ես
Ամբողջ տարին, պարոններ,
Գլուխս ծռած լոիկ և հեզ
Անկած եմ այստեղ անտեր,

Անկած եմ ես անհայր, անմայր, անծանոթ,
Աստված, ծագի՛ր ինձ նոր, պայծառ առավոտ,

Քեզ ի՞նչ անեմ, ա՞զ իմ բաղդիկ,
Ընշու համար վճռեցիր
Ինձ այսպիսի դառն վիճակիկ,
Կյանք և օրեր տրտմալիր:

Անկած եմ ես անհայր, անմայր, անծանոթ,
Աստված, ծագի՛ր ինձ նոր, պայծառ առավոտ,

Ահա Զատիկ—բոլորեցյանք
Զեռն ձեռն բռնած, անխափան
«Եկե՛ք, եղբա՛րք, եկե՛ք գնանք»:
Ասեն միմյանց և գնան:

Ահա ծնունդ, թարեկենդան,
Ողջ ընկերներս զարդարած,
Վազում են տուն, վարդանման
Ուրախ, շքեղ, զվարթացած:

Անկած եմ ես անհայր, անմայր, անծանոթ,
Աստված, ծագի՛ր ինձ նոր, պայծառ առավոտ,

Միանգամայն ասել, աշխարհ
Զայն է տալիս խնդության,
Եվ երգեռն ուրախարար
Հնչում է խիստ քաղցրաձայն:

Միայն անբաղդս լրոիկ մընջիկ,
Անկյունում մի նստելով,
Խիստ ցավում եմ ես անզրուցիկ,
Փողի ժանտախտ կու տալով:

Անկած եմ ես անհայր, անմայր, անծանոթ,
Աստված, ծագի՛ր ինձ նոր, պայծառ առավոտ,

1857 թ.

Հմայք Հայոց պերճապսակ
Ընդ սաղարթուց սօսաւիմ,
Բազմեալ գ'ծառոց գասակ գասակ
Ճիշտ հըմայեն զապագայս *:

ԵԲԳ

1858 թ.

Էանց ձմեռն՝ խամրիչ ժաղկանց,
Փախեալ ցուրտըն խստաշումն.
Եհաս գարուն՝ բընության թագ,
Յարեալ և օդ բարեխառն.
Նորափետուր զարդարեցան
Մարդիկ, այգիք և պարտէղք.
Ջմրխտագոյն վայրք զգեցան
Ըզպերճ հանդերձ, լքնադիկ:
Սոսնիք ուղեշք և սրբազնեց
Արմենակալ դիւցազն
Ժպտին տեսլեամբ քաղցրահայեաց,
Մափս հարկանեն ընդ գարնան.
Երամք Հաւուց ձշիւ գողտրիկ՝
Հնչմամբ անոյշ, բարձրաձայն,
Երգեն, խօսին յոյժ գեղեցիկ,
Իրքն քնարն Մուսայից:
Զեփիւռն մեղմիկ դոլով
Հնչէ, փշէ անուշակ,
Ցանդ զտերնս տատանելով
Յոգունց արնկոց սրբազան:

* Այս է, զի Շեքանոսական ժամանակս 'ի Հայոց մարդիկ
քանկային գիտել զապասի վիճակ իւրեանց, ոյր աղագաւ երա-
թային և հարցանէին 'ի քրմաց կամ հմայից, որք 'ի մեհենեաց
լաստուածոց տային նոցա պատասխանիւ Սոյնպէս էր և 'ի
ծոյնս. ըստ խոփոշմանց աղբերց և ըստ սօսակին սրբազան
եղեւնեաց, իսկ 'ի Հոռվմայեցիս ըստ հաւուց թռչմանց:

Դուք տեսե՞լ եք գեղեցկավառ
Սիրեկանիս ման գալիս,
Դուք տեսե՞լ եք նորա պայծառ
Գըլիսի զարդը փայլելիս:

ՀՐԵՇՏԱԿ-ՊԱՀՊԱՆԻԳ

(Օուման)

Դուք տեսե՞լ եք գեղեցկավառ
Ա**) իս իմ ման գալիս,
Դուք տեսե՞լ եք նորա պայծառ
Գըլիսի զարդը փայլելիս:

Ինչպես լքնա՞ղ և սիրո՞ւն է,
Երբ որ, բացված վարդի պես,
Նա շարժվելով, հեզ ժպտում է,
Անուշ, քաղցրիկ, պարզերես:

Ինչ տեսարա՞ն և ինչ պատկե՞ր
Նկարվում է երկսին,
Երբ նա, ցըցած երկինք աշեր,
Օրհնվում է յուր արարչին:

Կարծես անմեղ հրեշտակ արդար,
Իշած դրախտից երկնային,
Պետք է լինի մեղ մխիթար
Եվ ինդություն մեր կյանքին:

1858 թ.

ԱՄԵՆԱԽՈՆԱՐՀ ՆԵՐՈՂՈՒԹՅՈՒՆ

(Նվեր Հ. Շահնազիլյանցին)

Ես քեզ երբեք չեմ մոռանալ,
Ո՞վ իմ եղբայր թանկագին,
Քեզ փա՛ռք, պատի՛վ պայծառափայլ,
Քե՛զ, ճեկենաս իմ անգին:

Միտք քո բացված մեծ է եղել,
Մե՛ծ ես եղել, Հովակիմ,
Բայց լիմացա ես գնահատել,
Ների՛ր, ների՛ր, եղբա՛յր իմ:

Մանուկ էի, տըգես էի,
Անվարժ, անկիրթ գլխովին,
Ի՞նչպես թշվառս կարող էի
Ճանաշել քեզ, ո՞վ անգին:

Այժմ զգացի քո անմոռաց,
Քո երախտիքն անսահման.
Այժմ ողբագին, գլուխ խոնարհած,
Կզզամ ես հավիտյան:

Այժմ իմացա, որ առանց քեզ
Պիտի Հովիկ լինեի,
Հովիկ ասեմ, որ սկատես
Թափառում է խղճալի:

Թայց դու, եղբա՛յր, ձայնիս լսի՛ր.
Ա՞հ սկսում եմ ողբալից
Հյուսել քեզ թագ, թագ վարդալիր
Նվաստ քնարիս տողերից:

Թո՛ղ գեղգեղե քաղցրահնչյուն
Քնարիկս իմ լսելի
Քո սրբազան անմահ անուն,
Անուն անուշ, մաքրալի:

Ահա, հսկակ, իմ նվաստ տողեր,
Վեր կա՛ց, կանգնի՛ր գագաղից
Ա՛ս եղբայրիցդ թշվառ վ'անտեր,
Նայի՛ր երեսո ողբալից:

1958 թ

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ

(Խօմանս)

Ըստ Եղանակին

Гляжу как безумный на черную шаху,
И хладную душу теряет печаль.

(Ռուսկին)

Այսօր գնացի տուն իմ սիրելանի.
Երկու վարդ և մի նուռն ես իմ հետ տարա.
Սենյակն երեկցավ. մըտա շուտ այնտեղ.
Ուր հանգիստ քընած էր հոգլակս երկնագեղ.
Շըրթունքները էին վարդագույն, կարմիր.
Մարմինը թըզում էր համեստ, գեղալիք.
Անմեղության նըշան փայլում էր վառված.
Զըքնաղ երեսին նորա գեղեցկացած:
Զարդեցրնե՞լ, թե ոչ. ես մտածեցի.
Բայց սիրտը ինձ ասաց. թե չէ՛, թող նընջի.
Նընջի՛ր դու, ասեցի, նինջ քաղցր է, անդին.
Մուսալք և դիցուհիք քեզ պարզեցին.
Դըրի վարդը և նուռն սեղանի վրա.
Եկի, խոր հառաջելով, լուր մուր դուրս երա:

ԻՎԱ ՄՐՏԻՈ

Տո՛ւք ինձ ճերմակ ճախրասըլաց,
Օդապարիկ երիվար.

Տո՛ւք, զի սլացյալ թռեաց 'ի բաց
'ի շքնաղիկն իմ աշխարհ:

Այո՛, սլացյաց յիշ Հայաստան,
Յերկիր յաւերժ ծաղկաղարդ,
Ուր խոխոցան անմահութեան
Գետք եղեմայ ալեզարդ:

Ուր բարձրանայ խըրոխտ 'ի վեր
Արարատն իմ օրօրան.
Ուր հոտ բուրե խնկանքւեր.
Հոտ զուարթարար Հայութիան:

Ուր և երբեմն պայծառացեալ
Քաշ բանաստեղծք թորգոմեան,
Քնարօք իւրիհանց ոսկելարեալ
Գեղգեղեին սրբաղան:

Ո՞հ, ածե՛ք ինձ զիմն սիգաքայտ։
Սիրու իմ մաշեալ նուաղի։
Քանի՛ ա՛մք են՝ զի չիմ տեսեալ
Ըզհայրենիս ցանկալին

Հայաստան իմ, սո՛ւրբ Հայաստան։
Հո՛գոյս պայծառ յիշատակ։
Է՛ր թողեր զիս ՚ի բացական
Վայրս դառնաշունչ, դժնդակ։

Մաշիմ մաշիմ ես աստանօր,
Ծնդ աստեղօք Հիւսիսի։
Հալիմ. աւա՛զ իս չքաւոր...
Ո՞հ, Հայրենիք քաղցրալի...

1859 թ.

ԱՐԳ

(Տիկե Փ. Տեր Պատոփեուրանցին)

ըստ Խովանակին

Կубок янтарный
Полон давно,
Пеною парной
Блещет вино!

(Пушкин)

Խնդրեմ վեր կացե՛ք,
Եղբայրք անգին,
Դաս դաս կանգնեցեք
Ուրախագին։

Ահա բաժակներ
Ուկեզօծած
Առեք, ընկերներ,
Իմ պվարթացած։

Ահա խնդրության
Եվ գինիներ,
Գույն գույն, զանազան,
Շամպայն, Մադեր։

Ահա Կախեթին
Կովկասյան մեր,
Ահա թանկագին
Խերես, Սոտերն,

Առեք բաժակներ
Ուրախալի,
Լցնենք ի նրվեր
Մեր հայ ազգի:

Կեցցե՞ն, երգեցե՞ք,
Հայ աղջիկներն,
Կեցցե՞ն, հնչեցե՞ք,
Հայ զավակներն:

Եղբե՞ք, կոնծեցեք
Դարձյալ, կրկին,
Ե՛լ մի՛ խնայեք
Պաշտվող փողին:

Խմեցե՞ք խնդագին
Սիրո հայար,
Սե՞րե է ձեր հոգին,
Զեր բաղզն պայծառ.

Երգած է վաղուց.
«Կյանք մեր կարճ է,

Այսօր կանք — է գուց
Կրմենենք գուցեա:

Այսօր կճնդանի —
Եգուց գետնում,
Անելանելի
Պինդ դագաղում:

Ուրեմն զավաթներ
Շխկացնելով,
Առե՞ք, եղբայրներ,
Անուշ պաշով:

1859 թ.

ԱՐԵՎ ՀՈՅՈՅ ԱԿԱԴԵՄԻՅԵՐԻՆ

(Թուակու)

Հայ աղջիկներ նորածաղիկ,
Հայոց քընքուշ սիրումներ,
Առեք, ինգրեմ, իմ նվաստ փունչիկ,
Առե՛ք, հոգուս հատորներ!

Զեզ համար ես միայն անքուն,
Զքնաղ կույսներ, նըստել եմ
Եվ ոռմանսներ փափկանչնչուն,
Զեզնից վառված, երգել եմ:

Ծնդունեցե՛ք, ուրեմն քնարիս
Չնչին վաստակ ի սրտե,
Որ Զեր ձայնիկ միայն լսելիս
Հոգնորված հընչում է:

1860 թ. հունվարի 1

ԱՐԵՎ ՏԵՍԱԿԱՐՅՈՒԹՈՒՆ.

(Հետևողություն իտ. պօստի Պետրաշիայի)

Օրհնյա՛լ լինի այն սուրբ օրը,
Երբ նորա մոտ նստած էի,
Եվ իմ սրտիս խորհուրդները
Մի մի նորան հայտնում էի:

Ես օրհնում եմ այն սուր նետը,
Որ նա ցըցից սրտիս խորքում,—
Եվ այն քաղցր սիրո թույնը,
Որ նա թափեց հոգուս միջում:

Օրհնյա՛լ լինի այն ստեղծված,
Այն սիրուն կույսն, հրեշտակ պայծառ,
Որի առաջ, ծունըր դրած,
Ողբում էի այնքան երկար:

1861 թ. 5 հունվարի

Գիշեր է գալիս —
Մահիճ եմ մտնում.
Տրտո՛ւմ է հոգիս,
Քունս չէ տանում:

Ո՛չ սիրտըս այրված,
Ողջ քեզ է կանչում,
Ողջ քո անմռուց
Անունդ է հիշում:

Մաղեր թո՛ւիս երկա՛յն,
Աշեր գրավիլ
Ի՞նչ հասակ, ի՞նչ ձայն,
Ի՞նչ հոգի կտրիճ:

Անգո՛ւթ, ինձ խաբեց, —
Ուրիշին սիրեց,
Ա՛խ, նա դեռ ինձ վաղ
Պատրաստեց դագա՛ղ:

1881 թ. հանվարի 20.

ՕՐԻՈՐԴԻ ԱՐՏԱՍՈՒՔԸ

Հանգի՛ստ իմ անուշ,
Անցար, գնացիր,
Միայն վերք անբույժ,
Արտումս թողեցի՛ր:

Սոխակ գեղեցիկ
Կանալ պարտեզում
Երգելով քաղցրիկ,
Ինձ չէ գրավում:

Թեզանով միայն
Երցանիկ էի,
Տիկին ինքնիշխան
Ինձ կարծում էի:

Ցերեկը մենակ,
Փակված սենյակում,
Ողբում եմ անհագ, —
Ու ոք չէ լսում:

ԳԻՇԵԼ¹

Սիրուն պատկեր Պարզկա գիշեր:—
Եվ օդեղեն օվկիանում
Փայլում էին անթիվ աստղեր,
Եվ ուրա՞ի էր սիրտըս զարկում:

Ամբողջական ծաղիկներ վառ
Անուշություն էին բուրում,
Եվ երկնքի ցող կհնարար
Բնությունն էր զովացնում:

Եվ ես անխռով երգում էի, —
Եվ իմ երգիս խիստ մաքուր էր:
Ազատություն էի երգում,
Հայրենիքի պարձա՞նք ու սե՞ր:

1881 թ. Գետրվարի 15.

Հառա՞շ հայություն, հառա՞շ ազգություն,
Հուսավոր դարուս գաղափարներով,
Ատիր, ազգ անպին, խավար տգիտություն,
Մի՛ տար քեզ խարել խարդախ խոսքերով:
Կորի՞ր դու խավար և տգիտություն,
Կորե՞ր գարշելի ձեր ծնուղներով:—
Մինչ ե՞րբ մեր վրա այս վայրենություն
Պիտի բռնանա զոռոզ ճանկերով:
Եղբայր է նա մեզ, որ ճշմարտության
Զինվորված այսօր զորավոր սրով
Կամի քայքայել կապանք գերության,
Խավարի բանտը փլատակելով:
Բավական է մեզ, որքան բթացած,
Արհամարհեցինք մարդկության բարիք:—
Այս՝ բավական, որքան կուրացած,
Կտրեցին կյանքից մեզ անկյանք մարդիկ:
Այսուհետև սեր դեպի գիտություն,
Որ առնավատչյա է բարօրության,
Այսուհետև Կամք և Աշխատություն,
Որ մի ծնունդ է առաքինության:
Հանդիսացեք լույս և ճշմարտություն:

Թո՛ղ փախչի գիշեր մռայլված սրտերի,
Հաղթի՛ր, խորտակի՛ր, բանականություն,
Մոլար կարծիքներ, որդիք խավարի:
Ազգ բազմաշարչար, ուու ա՛զգ թորգոմյան,
Թո՛ղ անշարժություն այդ քո մահակիր.
Դե՛պի ասպարեղ առաքինության.—
Մոտենում է քեզ ավետյաց երկիր:
Աստվածեղին ազ մարդկության Փրկչին
Լինելու է քեզ առաջնորդ հզոր.
Դեպի կրթություն հանուն սուրբ հաշին.—
Ա՛յդ է պահանջում դարձս լուսավորւ
Մա՛հ Զոհիներին, նախանձով վառված,
Աքսոր ու կորուստ Վեստ-Սարգիսներին.
Դոցա համար լույս տգիտահալած
Դարձել է մի ժանտ դահիճ դառնագին,
Դոքա անձնական օգտին պարապած
Երավունքն աղզի զարկել են գետին.
Եվ սուտ հայությամբ դիմակավորված,
Փոսեր են փորում բարի մարդերին:
Առողջ մտածողն — աղանդավոր է:
Ճշմարիտ խոսողն — հայի ոխերիմ:
Ինչ որ Հային է — այն երկնքից է,
Դա՛տ արա սոցա, Տե՛ր իմ, Աստված իմ:
Միայն կաշառվածն անարդ արծաթից,
Կարող էր այդպես խորհել ու մտածել,
Միայն մոլորվածն կեղտոտ ախտերից
Կարող է այդպես յուրյան փայփայել:

Նզովլալ է նա և միշտ նզովլալ,
Որ քարոզել է սուս աղգայնություն,
Որ ազգի առջև զարըս լուսափայլ
Խավար է կոշել և տգիտություն:
Թունավորված են օրերս վշտալի
Ազգիս անզգա շահամոներից.
Տիսնելով ձեր գործք, ո՞վ ծնունդ իժի,
Արյուն է կաթում իմ խարշած սրտից:
Սրբություն պղծած, հավատ կաշառած,
Ազգ ու հայրենիք անարդ վաճառված.
Կա՛րդ, օրե՛նք, պատի՛վ — բոլորն ոտնակոխ,
Ամեն տեղ դժոխիք, մասնություն ու ոխտ
Հուսահատության սեամած ամպեր
Ալեկոծվում են իմ սրտի վերա.
Ո՞հ, ի՞նչ դառն վիճակ, ի՞նչ տխուր ժամեր,
Անիծյա՛լ լինիք, մարդի՛կ անզգաւ
Ո՞ւր որդիական արտասուր ու սեր,
Ո՞ւր ցավակցության դառն հառաջանքներ,
Մի՞թե ձեր խեղճ մոր գիտության շղթան,
Զգալի չէ ձեզ, որդի՛ք չարության
Ա՛խ եթե, հայ ազգը, մի օր կամ մի ժամ,
Աստված պարզեր քեզ միտք խելացի —
Դու կտեսնեիր, որքա՛ն անզգամ
Մարդիկ կան քո մեջ, անկյա՛նք, անհոգի՛:
Դու կտեսնեիր, որ քո չորս կողմում
Օձեր են բնակվում, դահի՛ճք կորսույան,
Որ անխիղճ որդիրդ արյունդ են ծծում.

Մահ քեզ խնդրելով, անքա՛զգ Հայաստան:
Նյութապաշտությունն մահու կապանքով
նեղդել է դոցա ծանըր լծի տակ.
Զեռներն ու ոտներ պիհնդ կաշկանդելով,
Վարում է անզյուտ կորսուի հատակ:
Ուսկի ու արծար, արծար ու ոսկի —
Ահա՛ մտածմոմք քո ընտրյալների.
Սորա են նոցա էության կենտրոն,
Կյանքի նպատակ, Աստված ու Կրոն:
Ա՛վ ազատություն, սուրբ աքսորական:
Զոհելու իմ քեզ իմ անձս հավիտյան:
Թո՛ղ ստրկացած դարերով մարդիկ,
Դնեն իմ վերա նզովքի կնիք:
Թո՛ղ սրե շար լեզուն անզոր թշնամին,
Թափելով վերաս թունավոր սլաքներ.
Ես պիտի խնդրեմ, ա՛զգ իմ լալագին,
Ոտնակոխ եղած քո իրավունքներ:
Ոչ ոք չէ՝ կարող հոգուս նպատակ
Ճնշել, խորտակել բռնության զենքով.
Ոչ սո՛ւր, ոչ արյո՛ւն, ոչ բա՛նտ, ոչ կայծա՛կ,
Ոչ նո՛ւնիսկ գեհեն մշտավառ բոցով:
Թո՛ղ անմիտ մարդիկ փրփրան ու գոշեն —
Անվեհեր հոգին կմնա միշտ ազատէ
Թո՛ղ ալիք ժայռը գարկեն ու կոծեն —
Նա, ծաղը առնելով, կմնա միշտ հաստատ.
Բայց սպասեցե՛ք, որդի՛ք խավարի,
Կգա ձե՛ր վերա ահեղ դատաստան

Նորան գրավելու շեն ոսկելի
Գանձերն ու պարկերն ուն հարստության:
Կերթան, կանցնեն այս գաղն օրերը, —
Կգա երևան նոր ազգ, նոր կյանքով.
Նա կդատե ձեր վատթար գործերը,
Ամո՞թ ու արծան ձեզ նվիրելով:

1861 թ. նոյեմբերի 25.

ԱՌԱՋԲՆ ԱԵՐ

Երեկ տեսա քեզ պարտեզում.
Մաղկած էիր վարդի պես,—
եզ քո պատերդ հոգուս միջում
Նկարվեցավ լուսատես:
Այնտեղ, ո՞վ կույս ինձ գերեցիր.
Այնտեղ ես քեզ սիրեցի,
Այնտեղ հոգիս շերմ, սիրալիր
ես քեզ բնծա բերեցի,
Այժմ չունիմ մի ուրախ ժամ.
Տիսուր է սիրտս իբրև գազաղ.
Ես մեռանել մինչեւ անգամ
Յանկանում եմ, ո՞չ, ավա՞ղ:
Որպես օձից ժանոտ, թունավոր,
Դու ինձանից փախչում ես.
Տիսանելով ինձ սգավոր,
Միծաղում ե՞ս, խնդում ե՞ս...

Ա.ԳԱՍ ՄԱՐԿ

Մարդ, զու պատկեր ես և նմանություն
Այն վեհ Արարշին, որ խնամում է քեզ.
Միրիր ուրեմբն միշտ ազատություն,
Հոգով անպղտոր, սրտով սուրբ և հեզ:

Նա՝ ո՞վ ազնիվ մարդ, կարող է միայն
Քո կյանք ու վախճան վերհամբարձ առնել.
Նա՝ միայն հոգին Քրիստոնեության,
Կարո՞ղ է քո մեջ սփոհել, ծավալել:

Ազատությունն է կյանք և զորություն.
Թագավոր, իշխան, և հարստություն,
Ազատությունը — գուստոր սրբության,
Փրկիչ ազգերի, աստված մարդկության:

Նա սեր է մարդոր և երանության հույս,
Առաքինությամբ և շնորհով լի.
Նորա մեջ պայծառ ծավալվում է լույս,
Կաշառել նորան չէ կարող ոսկի:

Նա, որ շէ շնչում սեր ընկերության.
Հարգելով օրինք մհծ և առաջին.
Որին չեն շարժում հուղմունք սրբազան,
Ազատ չէ նա, այլ սպասավոր Դիվին:

Ազատ չէ այն մարդն, որ հասարակաց
Արհամարհելով բարեբաղգություն,
Ասել է սրտում, ի՞նչ գործ անմոռաց.
Փո՞ղ է հարկավոր և հարստություն:

Այն մարդն է ազատ, որ անձնանվեր
Զոհել է յուր կյանքն ազգին, անխռով.
Որ հարուստներին չէ ծխել խունկեր.
Մարդահաճության տաղեր երգելով:

Ազատ այն հոգին, որին չէ գրավել
Անմիտ ամբոխի ծափահարություն.
Որին բնավին չէ վշտացրել
Կոպիտ մարդերի շարագործություն:

1862 թ. ապրիլ.

ՈՒ ԳԵՂԵՑԿՈՒԽԾԻ Կ...

Ես շկամիմ, որ իմ վիշտես
Չար մարդիկը իմանան.
Ում եմ սիրում, ո՞վ է իմ աեր,
Ասոված զիտե այդ միայն:

(Թասիլիոս Խոսինյան)

ԵՐԵ ՆԱԽՈՒՄ ԻԱ ՊՈւ ԻՄ ՎԵՐԱ
Տիրությամբ լի հայացքով,—
Ես տանշվում եմ, Ասոված վկա,
Խորին լոռություն պահելով:

Բնության որդիք քաղցր ձայնով
Ուրախություն են հրեշտամ.
Սիրուն առվակն մեղմ խաղաքրով
Յուր ալիքն է թափալում:

Անտառումը ման եմ գալի,—
Գլուխ են տալիս ինձ ժառեր.
Սոխակները ուրախալի
Ողջունում են իմ քայլեր:

Սակայն ի զուր. սիրո ցնորներ
հոռվում են իմ հոգիս.

Այդ քո կրակոտ զուլգ աշեր
Նկարվում են առաջիս:

Եթե հարուստ ես լինեի,
Գոհարներով և ոսկով,
Քեզ մի պալատ կշինեի
Աղամանդյա դռներով:

Աթոռ պայծառ, ոսկուց ձուլած,
Պալատի մեջ կդնեի,
Եվ քեզ, ով կուս առջեղ շոքած
Մինչև ի մահ կպաշտեի:

Քաղցրահոտ ես իրեն ծաղիկ,
Վայելլագեղ քան էրոս,
Սեր ես շնչում, ով գեղեցիկ,
Վարդ ես բուրում և ամբոս:

1862 թ. հունիսի 20.
Ամառանոցում Դավիթովկա պյուղի մեջ:

ԵՐԱԾ

Ես լսեցի մի անուշ ձայն,—
Իմ ծերացած մոր մոտ էր —
Փայլեց նշումը ուրախության,
Բայց ափսո՞ս, որ երազ էր:

Կարկաշանոս աղբյուր այնտեղ
Թավալում էր մարգարիտ. —
Նա հստակ էր, որպես բյուրեղ,
Այն երա՞զ էր ցնորամիտ:

Եվ մեղեղին տխուր, մայրենի
Հիշեց մանկության օրեր.
Մորըս համբույրն ես զգացի,
Ա՛խ, ափսո՞ս, որ երազ էր:

Կուրծքին սեղմեց կարուագին,
Աշքերս սրբեց — շատ թաց էր, —
Բայց արտասուրս գնում էին...
Ա՛խ, այդ ինչո՞ւ երազ էր...

1864 թ. հոնվարի 2.

ՀԱՄԱՐՏԱԽՈՍ

Եվ ինձ այն օրից, երբ շրթունքս հայտնի
Որհնեցին անունը արդարության,
Ատեցին տգեռք, դատապարտելի
Ինձ փոս փորեցին,— գործի՛ շարության:

Ոխ ու նախանձ, որպես փոթորիկ,
Նոցա կուրծքի մեջ ալեկոծեցավ,
Կուրացա՛ն մարդիկ, սիրեցի՛ն մարդիկ
Խավարի դեր!— Լուսը ծածկվեցավ:

Շատ բան լսեցի նոցա բերանից,
Շատ աքսորանքի տարա ես հարված.
Բայց սուրբ դատավորն օրհնեց վերեկից,
Վահա՛ն հովանի ուղարկեց Աստված:

Ես խոսք տվեցի մարմնով և հոգով,
Արյունով, սրով նորան կնքեցի,
Եվ խաչ առնելով և կուրծքս ծածկելով,
Երկինք և դժոխք վկա կանչեցի:

Եզ այն վայրկյանից գեի փորձություն
Իմ համար, ե՛ղբայրք, չնշի՛ն խաղալիկ:
Այն ժամանակից բազալերություն
Աղակից ունիմ.— անդոր են մարդիկ:

Ես լավ հասկացա կյանքի նպատակ,
Բարվո և Զարի զանազանություն.
Ասացի, թող լա՛րն առնե ոտնատակ
Բարին... սա ունի մի ա՛յլ հաղթություն:

1864 թ. ապրիլի 3.

ԱՐԱՋԱԾԱՐԱՎԱԾՔ

Կյանքը—գեղեցիկ պարզե աշխարհում,
Եվ կյանքից հեռու ի՞նչ ճանապարհ կա.
Ո՞վ մարդ, քո սիրու ո՞ւր է վերանում,
Կապած, կաշկանդած երկրիս վերաս:

Ինչպես կարող ես նորա կապանքից
Եվ ծանրությունից դու ազատ մնալ.
Հող պիտի դառնաս, ծնել ես հողից,
Թե ստեղծողին կամիս հավատալ:

Հողից կարող ես դու նորից փոխվել
Սաղամ կամ զեռուն, նընի կամ ձժմակ.
Ցեցի պես շարձվել, դարձյալ հող լինել,
Մեզ ցեխ պատրաստել — ծեփել պատ ու ծակ:

Նայի՛ր լուրջ աշքով, ահա անապատ.
Ի՞նչ պիտի գործես, որ Տիրոջ առջև
Ստանաս դու վարձ:— Անմիտ հուսահատ,
Զուրկ ես աշխարհից և շունիս պարզե:

Հավաաը գուծով միայն է նախ,
Եվ առանց զործի շունիս դու հավատ.
Քարոզի՛ր անխոնչ զործը Աստուծո,
Եվ մի՛ հեռանալ անմարդ անապատ:

Կարդա՛, ականջ դիր Ավետարանին,
Եվ նրա տողերն ձգիր աշքիդ տակ.
Տե՛ս, ի՞նչ է ասում քեզ աստվածային
Արյունով բրտնած բազմաշխատ մշակ:

Ա՛ռ փշյա պսակ և մտի՛ր աշխարհ.
Այդտեղ է, ո՞վ մարդ, Աստուծո Տաճար.
Այդտեղ քո կյանքը վաստակո՞վ վարժիր,
Այդտեղ սրբությամբ դու գո՛րծ կատարիր:

Այդտեղ ասպարեզ քրիստոնեության, —
Այդ կյանք բարվոքող մեծակշիռ ուսման.
Թե ունիս ականջ լսելու — լսի՛ր.
Թո՞ղ մըին այրիմ; ճգնավոր, փախի՛ր

1864 թ. մայիսի 8.
Բուօ ովտատեղում.

ևվ այն ժամանակ, երբ քեզ հասեին
Կախաղան կամ ոյուն նշավակելի.
Եվ անփառք ճակատդ մրով ծեփեին, —
Արժանի՛ ես զու, թշվա՛ռ, արժանի:

ԱՅԻՑ

1.

Պոե՛տ, Հեռո՛ւ կաց ծափից ամբոխի.
Երբ քեզ տիրում է ողնորություն. —
Նա ծանր ցնորք է մի հիվանդ սրտի,
Մի խախո՞ւտ խելքի թելազրություն:

2.

Դու պաշտոնյա ես վերին սրբության,
Որ նվիրել է Աստված աշխարհն. —
Դու պիտի հերքես հասարակության
Կանխամուտ կարծիք, դու սաստես շարին:

3.

Մի՛ մեծարիր դու կուռքը հարստի.
Ոտնակո՞խ արա, Փշրի՛ր և անց կաց.
Տաճար Աստուծո — Հոգին Պոետի,
Թի մամոն իշխնեց — զժոխք է պղտած:

Ահա՛ ձիթենին կանաշ ճյուղերով,
Ծնորհակալ սրտի զոհարերություն —
Պոե՛տ, զարդարիր ճակատդ նորանով,
Թի սիրել ես աղդդ և արգարություն:

6.

Ահա՛ երջանիկ առաջին հայեր
Քեզ շիրիմներից ողջուն են տալի.
Ահա՛ գալոցքի հեռավոր թռռներ
Երգում են սաղմոս գործիդ պատվելի:

7.

Սծյա՛լ աստուծո, եղիր դու թարգման
Այն մեծակշիռ գաղափարների,
Որ կարող էին անունդ անսահման
Դարբերին բաշխել, փա՛ռ կնքել բարի:

8.

Ո՞վ են մեր օծյալք: — Բայց լեզու: լոխ'ք,
Ո՞ւմ հետ է քո խոսք, ոնա՞յն քո խրատ: —
Միայն բամբասանք, միայն ախտակիք
Հեղոցք որպես ծով կը թափմին վերադ:

9.

Նստած են նոքա բորբոսած բանտում
Տաղաշափության: Հուսահատություն
Ուտում է նորանց: Լույս չէ թափանցում
Այդ մեռած կամքի գերեզմանատուն:

10.

Լուծվե՛լ է, լուծվե՛լ նոցա խելքն իսպառ.
Ո՞ր քժիշկ հմատ, որ առնե մի ճար: —
— եթան զարթուցիշ և ճշմարտություն,
Սո՞ւր որպես նշտար, կծո՛ւ որպես թույն:

1864 թ. մայիսի 25.

Մոնկավ

ԿԵՑՑԵ ՍՈՒՐՅԱ ԳՈՐԾԸ

Եվ ես երբեմն երգում էի
Անհոգ քնարիս լարերով
Դեղեցկություն միայն սերի,
Վառված նորա հուզմունքով:

Եվ իմ մուղաս ինքնահավան
Կամեր այդպես ինձ պահել,
Եվ միշտ երազ, ցնորք քաղցրության
Հոգուս առջև ժողովել:

Ես զորացա... խորտակեցի
Այդ մուղայի բռնություն.
Եվ սերտ սիրով ողջունեցի
Քրտնացա՞ն աշխատություն:

Ես լսեցի խոր հառաշանք,
Եվ վիշտ հոգու, և գանգատ,
Եվ լաց, և սուզ, և աղաշանք,
Այն էր ա'զգ իմ նարազատ:

Ես ուխտեցի լինել մշակ
Հասարակաց պիտույքի.
Երգի՛ ուսա զործ և վաստակ,
Արդար հացը այս կյանքի:

1864 թ. Հունիսի 1

ՄԻԶԻՆ ՏԻԳՐԱՆ

I.

Տիգրա՞ն, փառահեղ հայոց թագավոր
Եվ աշխարհակալ անթիվ ազգերի,
Ո՞ւր է կալվածքը քո հանդիսավոր,
Ո՞ւր է պետություն քո հրաշալի,
Ո՞ւր Տիգրանակերտ, մեզ պատասխանի՞ր,—
Այդ ճոխ քաղաքը, առջած գանձով,
Որ հափշտակեց բազուկի հաղթակիր
Եվ մի հազվագլուխ զարդարեց հրաշքով,
Ո՞ւր գնաց, ասա՛, քո կարողություն:
Դու վե՛ր կաց, կանգնի՞ր,—ի՞նչ ենք տեսանում—
Այստեղ փլատակ, այստեղ պղծություն,
Միայն բուերի ձա՞յն ենք մենք լսում:

II.

Ո՞ւր արենարբու կարող քո սուսեր,
Որով ճնշվեցան Փոքրը Ասիան,
Մենք չենք գտանում անգամ ինչ սովեր,
Բայց թե ավերակ տրված կորսոյան,

Եվ դուրս, փառասեր որդիք Հռոմա,
Դուրս, ով կուկուլոս, Կոստ, Պոմպեոս,
Աւոր ձեր քաջության պսակը դափնչա,
Որով պհճնում էր Հռոմը գոռով:
Դուք խրոխտալով թափեցիք արյուն,
Ծածկեցիք դաշտերն փշրած զենքերով,
Որ այսօր մի ժամեր և մի հավերժ քուն
Ամփոփի ձեր փառք, դագաղի փշով:

III.

Ահա ձեր զենքի մեծ հանդիսաբան,
Ուր ժողովելով վառ լեզիսներ,
Կամեիք նվաճել զորավոր Տիգրան
Եվ նորա վերա տարածել սովեր:
Այստեղ Միջրդատ խորտակված թույնով,
Այստեղ Բարզափրան հաղթության փողով,
Այստեղ դուք իշխան և հրամայող.—
Բայց այժմ տեսէ՞ք... բլորներ բարձրացած:
Շիրիմներ ճնշված... այստեղ և հաղթող,
Եվ տեր, և ծառա մի հողով ծածկված,
Եվ Հայն, և Պարթև, և Հռոմայացին:
Նո՞յն անարդ կորուստը ընդունեցին:

1864 թ. Հոնիսի 8.

ԱՅՏԱՐԱԿԻ

Գեղեցկանիստ է Աշտարակ.
Շատ այգիներ նա ունի.
Այնտեղ երկինքն է կապուտակ,
Այնտեղ ողն է բաղցրալի:

Մեծ, ընդարձակ, կանաչ դաշտեր
Լի են ծաղկով քաղցրահուտ.
Մարդահասակ, խնկանըլիեր,
Բարձրանում է այնտեղ խոտ:

Այդ սիրուն գյուղն ունի մի գետ,
Եվ այն լի է ձկներով.
Այնտեղ իշխան և կարմրախինտ
Խաղաղ են կապում խայտալով:

Եվ հարադատ այդիներից
Տարածվում է բաղցրություն,
Եվ թաղախը ուրախալից
Թերում է ձեզ յուր ողջույն:

Բայց այդ բոլորն ստրկության
Կաշկանդած է կապանքով.
Ժողովուրդը թշվառական
Խեղդված է մեծ խավարով:

Եվ սիրությամբ ես կանգնած եմ,
Եվ ողբում է իմ հոգիս.
Շնո՞վ Աշտարակ, քեզ սիրում եմ,
Բ՞զ քեզ սիրեց, որպես ես:

Կես գիշերին, երբ քնով խոր
Հանգստանում է աշխարհ, —
Վեր եմ կենում ես սգավոր,
Աղոթում եմ քո համար:

1864 թ. Հունիսի 2.
Բագրատով.

ԽՆԶ ՄԻՌ ՍԻՐԻԹ

Ինձ մի՛ սիրիր, ինձ մի՛ սիրիր,
Ես շատ և շատ փոխվել եմ.
Ա՛ռ թաշկինակդ — աշերդ սրբի՛ր,
Ես քեզ սիրել կարող չեմ:

Գնացին անդարձ անհոգ օրեր,
Գնաց և վառ մանկություն.
Կուրծքըս ճնշվեց և մեռավ սեր...
Եվ նա շունի այլ գարուն:

Դու մի՛ ողբար, իմ սիրելի,
Ինձ նոր դու սեր տալու չես.
Կա՛պ է հոգիս կնիքով մահի,
Թեև ողջ քեզ ինձ զոհես:

Խավար եմ ես, որպես գիշեր,
Իմ շորս կողմին փոթորիկ,
Չունի՛մ քեզ սեր, չունի՛մ քեզ սեր,
Ես սիրում եմ հայրենիք:

1864 թ. Հունիսի 19.
Ամառանցում:

ԽՈՐՀՐԴԱՆՈՒԹՅՈՒՆ ԲԱՆԱՍՏԵՂԾԻ

I.

Ի՞նչ անուշությամբ սահում են ժամեր
Գեղեցկատեսիլ, խնկահոտ դարնան.
Ո՞րքան ոգելից վառվում են սրտեր,
Անձնատուր եղած քաղցր անդորրության.
Եվ բնությունը ոսկի ժայիտով,
Զգեստավորված վարդագեղ քողով,
Հանդիպում է օր: Նորեկ առավոտ
Ցոլուն շաղ-գոհար. ճոճում է արոտ
Եվ ծածանվելով կայտառ շատրվան,
Ցայտում է շիթերն յուր աղամանդյան.
Եվ նորա տրտոնջն այնքան սիրելի
Գրավում է աշերդ և սիրտ, և հոգի:

II.

Երկինք կապուտակ: Առողջ, զովարար
Շնչում է զեփյուռ Գառներ և Հորթեր
Խաղում են դաշտում: Թնդում է անտառ:
Երգում է սոխակ: Գողում են թիկեր:

Ամեն մի թոշուն, ամեկ մի չակ
Վերածնվում է այս շնորհաբեր
Ավագանի մեջ, և ձռը ընգարձակ
Եվ հովիտ կանալ, և վառ բլուրներ:
Թեև խռոված լինիս, ո'վ ստար,
Հակառակ կամքիդ, այդ կանալավառ
Տեսարանները քիզ կհրավիրեն,
Որ բազցը ստվեր վերադ տարածեն:

III.

Չորս կողմրդ գարում, կանալ կատարով
Հողաբլուրներ հառաջ ևն գալի.
Եվ խաղաղ, անո՞ւշ, հանգուցիշ քնով
Մոռանում ես գու վիշտը աշխարհի
Վարսագեղ տնկած ծառերի շարքեր
Մեզմիկ շարժվում են: Արախ և զվարթ
Վազում է առվակ:— Սիրելի՝ պատկեր.
Ճղած կոկոնից գուրս նայում է վարդ.
Կարմրում է վարդ, վառ արշալուսի
Զքնաղ դուստրը, բայց համաձայն չեմ,
Որ դա սքողեր ամոթիսած կուտի
Գեղեցկությունը, որին սիրել եմ:

IV.

Սիրո համբուլյաներ նորա շրթունքին
Մաղկում են գարնան հոգելից կանքով,

Կարծես, սաստում են երիտասարդին,
երբ կամեր քաղել դորանց հայացքով.
Եվ մարմարինը նազուք ձեռների,
Եվ իբրև փրփուր լանջքը ձյունափալլ,
Եվ այն շողջողուն մետաքս մազերի,—
Անոդ թուլլ տված ուսերի վերա—
Առնում են նորան հրեշտակ կատարյալ,
Որ ամորում էր վիշտերդ դժնյա.
Եվ տղայական մաքուր ցնորրով
Քացում էր ձեզ կյանք անվերջ հոսանքով:

V.

Ես կարող էի այն սիրողային
Հարմարել դորան խոսքերը լորդի,
Որ նա տալիս է լեզի Յանթային *,
Նախերդանքի մեջ պանդուխտ Հարողի.
Ո՞վ թայրո՞ն, թայրո՞ն, դա ովնորեց
Քո կարող գրիշ Դա քեզ ներշնչեց
Այն վերին թոիշքը բանաստեղծության,
Երկյուղած սրտով քնարիդ մեծության,
Եվ անբոնադատ քո հոգու զեղման
Պետք է նախանձեն բոլոր պոետներ,
Որպես հանճարիդ մի համեստ նվեր—
Երկա՞ր կը պատվեն հիշատակդ ազգեր,

* Լեզի Շարլուտե, Հերի Օքսֆորդյան կոմսի դուստրը,
որ այդ ժամանակ (1812 թ.) դեռևս տասն և մեկ տարեկան էր:

VI

Համաշխարհական պոեմ պանծալի,
Դու քեզ կանգնեցիր երկնահաս արձան.
Ի՞նչպես մոռանանք, փա՛ռքդ Անգլիայի
Որ բարձրագույն է, քան սարերն Ալպյան.
Փա՛ռք—որ ծնել է քո անզին քնար,
Որ ավերակներ երգեց Հուկների,—
Ո՞րպես Հելլադա է հրաշափառ:
Ո՞վ թա՛յրոն, ասա՛, ո՞վ քո մեջ դրեց
Այն վսեմ թախիծն հուսահատության,
Ի՞նչպես քո հոգին յուր մեջ ամփոփեց
Այն խավար դժոխիք ամենակործանւ:

VII.

Եվ ես զմայլած, շատ տեղ ման եկա,
Հանդիսարաններ շթողի մարդկան.—
Գեղեցկությունը մի անգամ գտա,
Երբե՞ք չտեսա գեղեցկիս նման,
Ոչ երազի մեջ, ուր վառում հոգին
Հրաշագործում է պայծառ տեսիներ,
Ո՞չ գարնան շունչը, ո՞չ հարավային
Ինձ շատեղծեցին այգափիսի պատկեր,
Նորան ավանդել ես ձեզ շպիտեմ,
Դուք ինքանք տեսիք — ես ինչպե՞ս ասեմ,
Մեծ գեղեցկությամբ — առավել հոգով:
Եվ պայծառացած գիտության լույսով:

VIII.

Հսեցի և ես խոսքերի հնչյուն,
Երբ ողելսամված երկու սիրահար
Խոսակցում էին. բայց այն շշնջուն,
Գրավիլ լեզուն այն կենդանաբար
Արդյոք, դոցա հետ կը հավասարե՞մ:
Եթե իմ կյանքում մի ես նշարիմ
Այն առավաճեղն ներդաշնակություն,—
Խլեցի՛ երկնքի ես արքայություն.
Այն խոսքերի մեջ կար ամենայն բան,
Ե՛վ դրախտ անուշ, և կյանք անսահման,
Ափսո՛ս, որ շունիմ խոսք բացահայտիլ.
Կարո՞ղ եք զգալ — ո՞վ՛նչ է գրիւ

IX.

Գարուն է: Սիրո իմ, ի՞նչ ես հառաշում,
Մի՞թե շկամիս ողջունել նորան.
Քանի՞ տարի է դու շես շոշափում
Նախկին օրերի շունչը քաղցրության.
Քանի՞ տարի է, որպես թշնամի,
Զկամիս հաշտվել քո վիճակի հետ.
Ինչո՞ւ կծու վիշտ — որպես մտերմի,
Օրով, գիշերով է քեզ կարապիտ,
Գարուն, ո՞վ գարուն, ո՞րքան ժանրություն
Ածում ես վերաս, ո՞րքան տիրալի

Հիշո՞ւմ ես րոպեք: — Ո՞վ դառն հայտնություն,
Նիհրած է հոգիս, նա կը նորոգվի՞:

X.

Բայց գյուղական կյանք բնության ծոցում,
Քանի՞ պարզություն և գեղեցկություն.
Եղեմա դրախտն է այնտեղ փայլում,
Նորից ծնում ես — և նո՞ր մասկություն:
Սարդաշտ ազմուկ մայրաքաղաքի,
Իմ բարեկամներ, չեք լսում այդտեղ,
Ոչ դորոյունը վազող կառքերի,
Ոչ խոշոր հիշոցքը ամբոխի տգեղ:
Խորհուրդ եմ տալի, և այն փրկարար,
Եվ այն մի խորհուրդ քաշառողջության,
Երեք ամսով — թե ունիք հնար —
Դուրս գալ քաղաքից դեպի ծոց բնության:

XI.

Այնտեղ ժաղիկներ թեթև շրջյունով
Թափում են ամբոս և քուն փափկության.
Եվ ժրագլուխ մեղուն բգկալով,
Գնում է գործել մեղր պատվական.
Այնտեղ մանկագեղ, ժամն առավոտյան
Վարդյա ձեռներով հանգիստ է սփոռմ,
Եվ սիրող հեռու աշխարհիս ունայն
Նենդից, կույր բաղդից, սեր է ճաշակում:

Բայց ավա՞ղ եղբայրք, Աինի՞ կարծեք,
Որ ես իմ ներկա կյանքն եմ նկարում.
Այդպես է, եղբայրք, ինձ հավատացե՞ք.
Անշած, գնացած օրերս եմ հիշում:

XII.

Բոգորո՛ղոկ, փիտե՞ս, ո՞վ գեղեցիկ պյուղ,
Ակամա գործըս մի կողմ դնելով,
Երդ եմ բերել քեզ. Թույլ տուր ինձ մի ճյուղ
Քաղեմ բերլողից քնարիս ձոնելով.
Նա մյուս անգամ գուցե լվառվի,
Տեսնելով այդ շլուզն, Ո՞վ կանալ թփեր,
Ստվեր տվեցեք մի օտար Հայի,
Որ այց է զալիս ձեզ օր ու գիշեր։
Բայց, ո՞հ, չեմ տեսնում ես ուրախություն,
Ժա՛մ մի շզգացի նորա արձագանք,
Ճեմում եմ ձեր տակ, Բայց ո՞չ հաճություն
Գզվում է կուրծքս. ո՞չ սև' օձ, կապա՞նք...

XIII.

Գիտե՞ք, ես կյանքից այլ չեմ սպասում
Ոչ հաջողություն, ո՞չ պերճ ապագա,
Ես խանգարվում եմ և չեմ ամսոսում.
Ոչի՞նչ չեմ թողնում աշխարհիս վերա...
Ես գեռ մատղաշ եմ, Բայց մտածելով
Մաշել եմ կյանքս, ունայն ապրելով,

Արդեն իմ կուրծքը այլ բարձրանում չէ,
Եվ առաջվա պես շգիտե շնչել.
Հանգիստ է խնդրում, բայց կրգուանն
Նորան հողի տակ... նա կամի՞ ննջել...
Այսպես նավորդը կոծելով երկար,
Ալիքների մեջ գտնում է դադար։

XIV.

Վազ առավոտուց մինչև խոր պիշեր
Ես թափառել եմ ուղիների տակ,
Երբ բոլոր լուսին գեղեցկացնում էր
Ամպերի միշից. Հնչում էր սոխակ.
Երբ ոսկենշույլ ալիքն առվակի
Թավալվում էին մանկական խաղով,
Քաղցր քան ձայնը արծաթե զանգի,
Յուրյանց հոսանքից խոխոչ հանելով.
Եվ բնությունը այս պատկերներից
Կարծես նոր ծնակ Արարշի ձեռից,
Երկինք ու երկիր նույնպես գեղեցիկ.
Անտառի խորքում քնքուշ դայլալիկ։

XV.

Եվ այստեղ ես շատ երկեր եմ հյուսել
Հայոց բարբառով և հայոց խոսքով.
Ես Հայաստանի կոկիծն եմ լսել,
Այրվել եմ սրտով, այրվել եմ հոգով.—

Ես մտածել եմ երկրիս երեսին
Թե այս ազգը յուր սկահեց գոյություն
Այնչափ վառակից, աւշա՛փ մոլեզին,
Ունի մի խորհուրդ վերին և թաքուն:
Ե՞նչ է, ո՞վ հայ մարդ, զարմանո՞ւմ ես դու
Որ հյուսիսային մութ երկնքի տակ
Հանդիսանում է Հարազատ յեզու
Երբ քո գերության դպում եմ կատանք:

XVI.

Երբ օրհասականդ դամբանի ծոցից
Ներկայանում է հոգուս առաջն,
Երբ արտասուրը Հայիդ աշքերից
Թափում է երկիր, որպես հորդ անձրև,
Երբ հուսահատված սովից մահարեր,
Ժխտում ես կրոն և կճիմ ազդի:
Երբ Վատիկանի Հրապուրից օձնը *
Առաջարկում են քեզ թունոտ ոսկի,
Ոսկի, որ զին է մարդասպանության
Վերշին հացի զին խեղճ ժողովրդյան,—
Եվ այդ անունո՞վ Սվետարանի:

XVII.

Ո՞վ կաթոլիկյան կուրությամբ խոցված
Զար քարողիլներ երկպառակության,

* Այսպիս է կուլում պատի վեհարանը

Ո՞վ մոլի Հռոմ, ո՞վ նեռն ավերած
Մեծին Պետրոսի առաքելության,
Ինչո՞վ, ասացե՞ք, ձեր անմիտ ծեսեր,
Կարկատած շրով հեթանոսական,
Նսիամեծար են, քան իւաղաղասիր
Դավանությունը լուսավորչական,
Եվ ամո՞թ չէ ձեզ, ազգ խեղճ, ազգ անմեղ
Փոխել կրոնից, որ Հիսուսի էր—
Զեզ խեղճիլու չէ՝ արդյոք քրհեղեղ:

XVIII.

Ո՞չ Քրիստոսի, այլ սատանայի
Գայթակղության եք աշակերտներ.
Ի՞նչ է պատվիրում ձեզ Գողգոթայի
Անմահ ճահատակին — Աստելությո՞ւն, թե սե՞ր
Եվ այդ նահատակ, որ Ավետարան
Յուր մահի գնով կտակեց աշխարհին,
Եվ լուսավորիչն ողո՞հ ճշմարտության —
Ո՞չ գույն իսկ ուսումն ավանդեց Հային,
Ո՞չ Թագեռոսի աթոռ նստելով,
Նմանեցավ նորան խոսրով ու գործով.
Զարե՞ր, լսեցե՞ք ձեր խղճի ձայնին:

XIX.

Բայց զգո՞ւշ կացեք դուք փարիսեցոց
Խմութից, այն է կիղծավորություն,

Որոնք բառնալով և կական և կոծ,
Կամին ցուցանել բարեպաշտություն,
Որ խոնարհում են առաջի մարդկան,
Արդար միամիտ յուրյանց կարծելով,
Բայց մեռյալների իսկ են գերեզման,
Եթ ասլականյալ, պիյծ ուկրներով:
Այսպես Քրիստոս երբեմն վշտացած,
Գարձավ կեղծավոր Հրեից ցեղեն,
Այսպես և այսօր մենք վիրավորված,
Դառնում ենք խարդախ Եղվիտներին *:

XX.

Դուքա բերանից մենք լսելու շենք
Սուրբ սիրո ուսմունք և ճշմարտություն.
Դոքա պիտու է — մենք այդ լավ գիտենք —
Միշտ կեղծավորվին և մնան սողուն.
Դոքա պատրաստ են առնել ամեն բան,
Երբ զորավոր էր արծաթ և ոսկի,
Երբ փաղաքշելով, մի պատվի նշան
Պարգևց դոցա պապը Հռոմի,
Բայց ձեր լիզուքը թո՛ղ չհանդինին
Օրենքը սիրո այլապես հնչել.
Թո՛ղ անմեղ զոհից երկինք շփակվին,
Որպես սովորեք ձեզ աշակերտել

* Մեր խոսքը եղվիտների հետ է, չարահողի Քարոզչների,
և ո՛չ ընդհանուր կաթոլիկ քրիստոնեության.

XXI.

Եվ դու, հա՛յ կղեր, բավական է քեզ.
Նայի՛ր դու, Հա՛յր իմ, ի՛նչ մեծակշիռ
Եկել են օրեր, դու այդ շգիտեհ՝
Մի բաց աշերդ և լավ ըմբռնի՛ր,
Թի քո կուրծքի մեջ լի մարել աստված:
Թի դու տեսնում ես լույս արեգակի,
Զէ՛, դու չես կարող մնալ քնեած.
Թի կամակոր ես, քեզ կորո՞ւստ թշվառ.
Իսկ թե ուշագիր, քեզ կյա՞նք մեծափառ.
Գո՛րծ ենք պահանջում, գո՛րծ, արիությո՞ւն:
Ո՛չ անփույթ հանգիստ և գեպարտիրյան:

XXII.

Բա՛րձր բարոզիր սուրբ Ավետարան,
Որպես ճանապարհ դեպի գիտություն.
Թո՛ղ լցվին սրտերն մխիթարության
Սուրբ աղաղակով Եղիք դու արթուն,
Որպես արթուն էր Միածին Որդին,
Յուր անմեղ կյանքը տալով աշխարհին,
Թո՛ղ եմ բարբառում, որ աշակերտ ես
Այդ մեծ Ուսուցչին, դու ինձ լսո՞ւմ ես
Ո՛վ կղեր, կղեր, ծանր է քո բեռն
Աստուծո առջև, եթե դու այսօր

Հոգի շպանուս, շպարզես քո ձեռն
Դիմի սուրբ վաստակ, որ կյանք տա ձեզ նոր:

XXIII.

Մի նալի՛ր, անրազդ քո ազգի վերա,
Տե՛ս, ի՞նչ ալեկոծ ծովի մեջ է նա.
Առագաստ պատուած, կայմը խորտակած,
Եանթեր, կայծակներ մահով զինվորված:
Վե՛ր կաց հոգեոր Հայր վիրավորի,
Ուր ես դու, ձա՛յն տուր, թո՞ղ լսենք քո ձայն,
Լսե՞նք քո քարոզ հայրենասերի,
Որի համար սուրբ է խեղճ Հայաստան:—
Զայն չկա, ավա՛զ Եղբարք, ի՞նչ անենք.
Ի՞նչպես դարմանենք այս մեր վտանգին,
Եվ հոգեորի սիրոր դղրդենք,
Եվ հասարակին կարգա՞նք ավետիս:

1864 թ. Հունիս, Հայփա.

Բագրուցակ.

ՃԵՄԱՐԻՑ ԿՐՈՒ

Мышление есть любовь.

Спиноза

Только свободное наслаждение созерцания и жизни, стремящиеся в бесконечное и к безконечному направленное дает сердцу безграничную свободу; только религия спасает его от тяготящих оков мнения и желаний.

Шлезвигхайер

(Истор. филос. Курно-Фишера.)

I.

Մտածեմ եմ ես — և կարծիքս մոլար
Անհետանում են, ես կամիմ գրկել
Այն մեծ Օրենքը, այն վեհ Կառավար,
Որ գիտե տիեզերք գաշնավոր կշռեր
Պարզ մտածությունք ինձ հայտ հանգիման
Հավերժ օրենքը հառաջ են բերում,
Իմ գոռոզ եւը յուր ինքնահավան
Եվ մոա՛լլ ախտով է փլատակվում.
Մեծ ուրախություն, և այն անվրդով,
Իմ ձգտողությամբ ես գտնում եմ,

Եվ աստուծո հետ մտածող Հոգով,
Եվ Հաղորդվում եմ, և միանում եմ.

II.

Եվ ներդպալով Մշտնչենավորն,
Անմահանում է Կրոնը Հոգուս,
Եվ ծափալվում է, այնքան փառավոր,
Նորա շորս կողմին աստվածեղին լուս:
Եվ բազիսում է սիրաս առավել սիրով
Դեպի գոյական արարածները,
Ընշաներ կրթից նա աղատվելով,
Օրհնաբանում է Զորավոր Հայրը:
Բացվում է այդուղ անխախտ սրազան,
Ուր թագավոր է խաղաղական Սեր,
Ուր անմահ Օրենք համաշխարհական
Բուրում է Հոգուս հաշտության վարդեր:

III.

Ես բարձրանում եմ... և ինձ փայլում չ
Սուրբ նախապատճառն աշխարհ ստեղծաբյան,
ինձ Հավերժ նարգը առաջնորդում է *
Դեպի տաճարը ինը ազգոյնության:

* Հավերժ կարդ ասելով, համահում ենք նույն խօս Աստ-
ված, որ ճարտարապետական պատճառավորությամբ արարշ-
ողործելով տիեզերք, ինքը որպես Կարդ ու Օրենք անօրինում է
նոցաւ

Ես սկսում եմ նոր — նորից ապրել,
Եվ դադարում եմ մտքով վշտանալ,
Եվ այդ վայրկինից կամիմ մտածել,
Այն է հանաշել Որ են — հայլատա'լ:
Ճանաչել Որ են — է այն վերին Սեր,
Որ շաղկապում է ընդհանուր տիեզերք,
Եվ պատրաստում է մարդեղեն սրտեր,
Քաղցր սաղմոսով հնչել նորան երգ:

IV.

Զգում եմ Կրոն ես ճշմարտապիս,
Եվ գիտակցությամբ սերտում եմ նորան,
Եվ ինձ շնչ ճնշում մի հավատի ծես,
Եվ ոչ կուսակիցք մի գավանուիշան:
Նորք է Կրոնըս, և նա ոչ ոքի
Չէ բերում վնաս կամ նախանձ կամ ոխ,
Նա ծնանում է մի մաքուր ոգի,
Եվ խաղաղության է նա ավետող
Նախանձ են նորա և շար ոխակալ,
Որանց իշխում է մի մեռած հալատ,
Որոնք խախտեցին սրտեր անարատ,
Եվ մարդիկ զարձան դահի՛ճ կատարյալ:

XIX ԴԱՐԻ ԿՐՈՆԱՍԵՐԸ

(Քիշեռք)

I.

Համբ է լեզուս, որպես գիշերով
երկնքի կայքը և տարածություն,
ես մտածում եմ երկյուղած սրբով,—
եվ հետզհետե խորհրդածությունը
Ամեն տեղ կյանք է, ուր և անկանի
Քո տեսությունը կեռների շղթան,
Մաղկազարդ բլուրներ, ժողովք ջրերի,
Զեղ քարողում են փառքը բնության,
եվ շշնջում են մի խորհրդավոր
Զորության վերա. և չես շղափում
Այդ զորությունը, միայն հոգնոր
Քննության ա'ոցն է ներկայանում,

II.

Մի անեղրական անվերջ զորություն
Տիրում է մարդու այդ բոպերն,
Նա տեսանում է այն ճշմարտություն,

88

Ար ավանդեցավ զարերից զարին.
Այն սուրբ գաղափարն Արարագործության,
Դաշնավոր հյուսած զեղեցկարյան նետ.
Այն Հավերժ Հոգին անհատ զոյսուրյան,
Անլույժ գաղտնիքին Տե՛ր և Վարդապե՛տ:
Դու լսում ես ձայն — և շփոթվում է
Քո սուր զնություն, քո փորձող խելքը
Երկյուղածությամբ հնազանդում է,—
Այդտեղ հնաշա՞նդ և շրջակայքը:

III.

Եվ մի՞թե, մի՞թե, երբ խանգարելով
Երկրի կապանքն ապականության,
Եվ Հովեղնեն նյութը թոթափելով,
Պիտու է լինիմ ուս ոչնչարյան.
Մի՞թե այն պարզն, որ տված էր մեզ,—
Պարզն ծածածկը, բմբոնել գաղտնիք,
Մի՞թե, ասացի՞ք, պիտք է ծուխի պես,
Անցանի մի՞օր, այդ ինչպես կարծիք:
Բայց ինչո՞ւ իմ մեջ Հավերժ խաղացքով
Խոսում է բանը առաջնորդական.—
Ո՞չ, բնության հետ ես միանալով,
Ես մեռնելու շեմ, և ե'ս անվախճան:

1864 թ. Հունիսի 8
Թոգորոսով.

ՕՐԾՆՅԱԼ ՀԱՆԳԻՄԸ

Օրհնյա՛լ հանգիստ, ողջուզն, ողջուզն
Քո կենսաքեր գալստյան.
Կորավ սև օձ — անհուսություն.—
Ճնշող կապանքը բռնության,

Երկար միջոց ես թագուցի
Եռուն սիր իմ հոգուս.
Ես շներին նախանձեցի,
Եկ չո'մեի մի այլ հույս

Ահա այն տուն, այն բանտ իւավար...
Քանի՛ սև սև հիշատակ...
Այնտեղ էր այն դահիճ վատթար.
Տո՛ւն դու, դարձի՛ր փլատակ:

Թող քո հիմք մինչև անգամ
Փոխսի, որպես մի տխուր դաշտ.
Թող անկասկած ես հավատամ,
Որ ճնշեցավ Զարն անհաշտ:

Քանի դառըն ես արտասուր
Թափել եմ իմ աշքերից,
Քանի՛ հոգոցք, ցուրտ, որպես թուր,
Քանի՛ որտի և կոկիծ:

Ո՞վ մանկություն, իմ կանաչ վարդ,
Որպես ծառա վշտացար,
Թառամեցար — և կորավ զարդ...
Քո հորիզոն չէ՛ր պայծառ...

1864 թ. հունիսի 5.

ԲԻՆԱՎԱՐ ՍՈՒԼԻՔԱՆ

I.

Ահա արկի արյունոտ զնդակ,
Ասկեզօծելով կողմն արևմուտքի,
Մածկվում է խպառ երկնի կապուտակ
Լցվում է աստղով անշափ հրաշալի,
Սպիտակափա'ռ է երկնակամար,
Երկրի վերա զմբխտյա' ամառ.
Աստղը աստղի հետ խաղ է հորինում,
Սայիկը ծաղկին հանգիստ է ասում.
Ո՞ր թշվառական, ո՞ր մահկանացուն
Կարող է խախտել այդ անզորություն,—
Պոետի հոգին, որ վիրավորված
Հեղում է շղթան բռնի կաշկանդած:

II.

Եվ այժմ պոետն այլ երազում չէ,
Ար ճա ուրդի էր վերին եւեկնի,
Եվ նորա հոգին պիտօն է լոհ,
Ուր բան էր վատթար խեղճության ազգի.
Եվ թե ծնել էր, որ լինի թարգման

Քաղցը մեղկարյան և անզործուրյան,
Եվ, ոգեսորված, քնարի հետ խոսեր,
Երբ նա երգում էր միայն զինի և սեր,—
Ո՞չ, նա փոխել էր այդ ծուռ գաղափար,
Նա բաժանորդ է ազգի ցալի հետ,
Եվ ահա այս խոսքս թնդում է Քնար,
Նա՝ ի հաղաքացի, և ապա՝ պահտ:

III.

Ո՞հ, ստրկություն, և բանտ և դագաղ,—
Նույն անարգ կորուստ, այլ միջոց չկա,
Եվ թե բռնավորն աներկյուղ, անվախ
Զգում է յուր լուծ բոլորի վերա,
Երբեւ թե կամեր բարեբախտություն
Դորանով շնորհել յուր ժողովրդյան,—
Այդ փորձիշ — օ՛ձն է, այդ սովինստություն.
Մենք ճո՛րտ ենք նորա, նա կամքիս իշխանն
Երանի՛ նորան, որ սուրբ ձեռին,
Ազատ գտել է և մահ, և անուն.
Անմա՛հ, օրինակ եղավ յուր թոռին,
Նա լավ ըմբռնեց Զարի նենգությունն

IV.

Բայց երբ ազգերը ուսում կստանան,
Երբ այդ առաջ մարդին կսկսն մտածել,—
Այն ժամանակը կարող է միայն

Ազատությունը յուր գանձը հանել.
Սին ժամանակը միայն մարդկություն
Կարող է կրաքանչը իմաստասիրել
Եվ հառարակի բարերախտություն
Անխախտ հիմքերով արարշագործել:
Ինքնակալություն Բոնավորների *,
Որպես թե մի ծովի ցնդելու է վեր,
Ինքնակա՞լ է ազգ, ինքնակա՞լ բարի,
Ինքնակալ նորա հոգու օրենքներ:

V.

Հույս սենեկիս մեջ, ես կես գիշերին
Նստած միայնակ, սովոր եմ քննել
Այսպիսի հարցեր, բայց միշտ վշտագին,
Եթք շդտնելով, տիտոր եմ մնացել.
Սյս մտածմունքով իմ նվիրական,
Եվ այս հոգեոր ցավի կոկիծով,
Կարծեմ, կիշանեմ հավերժ գերեղման,
Մի բարի վիճակ մարդին ցանկալով.

* Այս՝ այստեղ մեր խոսքը անհոգի և տեսատված բոնավորների ժամանելու թև քանի տարել են այդ բոնակալության լուծը մեր Տաճկապանի հայ եղբայրակիցները — զիտե ամեն ոք:

Ես հավատում եմ, ես հաստատում եմ,
Որ ուժական էր այդ վիճակ մարդին,
Եվ գալու է ժամ, երբ ուրախաղեմ
Նախանձելու շէ այլ նա դրախտին.

1864 թ. Հունիսի 11.
Բողոքադակ գյուղում

Եվ բողոք կարդալ, և գավաճանել,
թե այդ զրկեալքը կամ ին խոսել

II.

ԴԱՎԱՃԱԽ

Գարպեմ տխմառ է ընդիննահանք,
անձամբ առեալ պատի և ոչ Աստուծոյ
կուցեալ, աշճարով ընօւժալ է ոչ
նուզով, սակեսեք, նախանձուար, բողեալ
զնեզորին, յուսմ Աստուծ բնակե, եւ
գայլ եղեալ՝ զիւեսեց նուս զիշտանլավ:

ՄՈՒԼՍԵՍ ԽՈԲՆԱՑԻ

I.

Տիուր է, եղբայրք, տիուր է մեր դար,
Հայի վիշտերից և անարդանքից
Թառամել եմ հս, նա, որպես թշվառ,
Աղաւովելու չէ երբեր կալանքից:
Նորան յուր հովիվք, յուր առաջնորդներ
Մինչ հովեվար ժամն պետք է կեղերեն,
Եվ եղվիտական, անփառք թակարդներ
Օտարի առօհ այդ իւեղմին դնեն,
Հովիվ դառնալով ազգին հովեր,
Մի սարսափելի նպատակ ունին.
Որպես մոլեռանդ, դահիճ թունավոր,
Զրկել, պատառել յուր մողովրդին,

Արդա՛ր դատասան, ո՞ր է քո սպատիժ,
Ո՞ր է երկնակառք վրեժինզրություն.
Մի՛թե մի անմիտ, մի դարշելի իժ
Պետք է նվաճե քո արդարություն:
Մի՛թե գու այնքան թուլ ես և անզոր
Այս աշխարհիս մեր, այնքան՝ անհաստատ,
Որ դեպի դագաղ պիտի զնաս այսոր,
Եվ իւեղդես մեր մեջ ամենայն հավատ:
Ճո՛ւց տուր մեզ, ցո՛ւց տուր, որ կենդանի ես,
Կաշկանդի՛ր ձեռներն այդ հանցավորի,
Թո՛ղ այդ Աղիւսը, որպես սեերես,
Ստանա սե վարձ — վա՛րձը Հուղարիւ

III.

Գզված զորգմնաղարդ, փափուկ բարձերով —
(Ծածկոցն է թափիշ, կապույտ — ծիրանի)
Առոք և փառոք մորուր շփելով,
Մերտում է անվանք Հարգս սրբերի.
Նա մտահույզ է, ինչպիս իմանանք,
Ո՞րպիսի ձնշված դավի զզըրդյուն,
Ո՞րպիսի եղեռն նենդության կապանք,

Սկամած թախիծ, մթին ցանկություն,—
Վարագուրում են խորամանկ ճակատ,
Աւր թագուցած է մահապարտ հանցանք
Եվ մի վասակյան ապերախտ գանգատու

1864 թ. Հուլիսի 15.

Բոգորոդուկ.

ԱՅՆ ԵՐԱԾ ԷՐ

Եվ ծանր է վիշտու, և ես քնում եմ,—
Եվ ահա երազ խորին գիշերով.
Այն մեծ երազ է, ես տեսանում եմ.
Հայի մութ տուողը փայլեց մի լուսո՞վ:
Եվ ահա հաւերն, նախանձով վառված,
Դիմում են հառաջ, որպես այլ ազգեր,
Եվ մտանում է նոցա մեջ Աստված,
Բերելով յուր հետ միավորիշ սեր:
Եվ կարծես, այդ սերն պետք է հաստատվի,
Ար վարձատրե արյունով Հոսած
Նոցա արտասուր, և ոգնորվի
Անձաղիկ կյանքը Հայ-հասարակաց,
Զարթնում եմ քնիցս.— ինձ պաշարում են
Նույնիսկ Հոգեկան ցավի սև օձեր,
Եվ Հային չար բաղդ ինձ գուշակում են.
Ցավեցե՞ք, Հայեր, տեսածս — երա՛զ էր:

1864 թ. Հուլիսի 15.

Բոգորոդուկ.

Ես տիսուր եմ և չգիտեմ,
Ի՞նչպես կանցնի իմ դարը.
Ես կարծում եմ, որ բանտում եմ.—
Հեղձամաղձուկ է օրը,
Եվ հանդում է կյանքիս հոգին,
իմ նազելի մանկություն,
Եվ տալու չէ այս աշխարհին
Շնորհակալ յուր ողջույն:
Նա կմեռնի, և ոչ ոք ձեռն
Պարզելու չէ դեպի նա.
Առե՛ք իմ բեռն, իմ ծանր բեռն,—
Կամ հո՛ղ, մոխի՛ր իմ վերա,
Չէ՛, պայծառ չէ՛ իմ հորիզոն,
Հառաջ նայել չկամիմ.
Այնտեղ միայն սև Աքերոն,
Բայց կազմ նավակ ես լուսիմ:
Հոգիս անզոր, հոգիս համըր,—
Ե՛կ և սորան դիմացի՛ր,
Խաշըս դժվա՛ր, խաշըս ծա՛նըր.
Կյա՛նք, ինձ ինչո՞ւ խարեցիր:

1864 թ. Հուլիսի 15.

Թոգորողակ.

ՀՈՎԻՎ

Մասի հովանին, տերնի շրջուն,
Տիսուր ողբերգակ աղբյուրի շաշուն,
Հաճելի դիրքը զմբուխս կանաչով,
Մի սքանչելի գեղեցկութինով,—
Միշտ ասում եմ քեզ. ո՛վ դու անցավոր,
Ո՛վ ինքնահավան դու ճանապարհորդ,
Ինչո՞ւ չես գալի այս հաղարավոր
Բարության լինել մասնակից, կցորդի
Եվ ահա հովտից մի քաղցր քամի
Բերում է յուր հետ աննշան ձայներ...
Լա՛վ ականջ դի՛ր դու... այն խաշնարածի
Թութակի երգն է: Եկել է գիշեր
Կանչում է գառներն հանգել խաղերից,
Եվ պատսպարվել պատառող գայլից:

1864 թ. Հուլիսի 19.

Գերեիկով գյուղումը.

ԱՐ ԻՄ ԸՆԿԵՐԸ

I.

Սեր և մանկություն, — կայտառ եղիկորյակ,
Միմյանց գրեռ անմեկին ընկեր,
Որպես գարնան հետ և վառ ծաղիկներ,
Որպես պարզ օրով և վառ արեգակ...
Սերն է, սի՞րելիք, չկամիմ խարել,
Որ ձեր տրտունջը մեղմացնում է,
Եվ, թե ժերությունդ դեռ չէ ժամանել,
Որպես մի թոշնակ ձեզ միշտ ժպտում է:
Սորա համար չէ՝, երբ դուք տեսնելով
Երկու սիրահար զգված, ճեմելիս
Ծզգում եք ձեր մեջ մի ժամ անխռով,
Երբն բերում էք ձեզ մեծ ավետիս:

II.

Թե վերաբերել այդ ինձ կամեի, —
Ես զմայլելով նայում եմ նոցա.
Նոցա կեցությունն է նախանձելի.
Բաղդավոր բոպեք թափում են ահա...
Սեր մահկանացու աշխարհն անպակաս

Լի է ամենայն տհաճությունով,
Ուր մեկին մեծ շահ, մյուսին մեծ վնաս,
Գանգատ, հայհոյանք զրախոս լեզվով:
Բայց այդ ամոլքը, — այդ սիրո որդիք,
Հեռու այս կյանքի չարություններից,
Միշտ բավական են և միշտ երջանիկ,
Դոցա վերա է ծաղկում սերն անբիծ:

III.

Միայն երբեմբն նախանձի ոգին,
Որպես մի շար գե մեր մեջ շրցելով,
Բերում է կասկած սիրո աշխարհին,
Մինչ նորա կապը խսպառ լուծելով:
Բայց դո՛ւ, իմ ընկեր, գիտե՞ս ինչ է սեր, —
Երկու կողմերի համակրություն,
Իսկ թե առավել, — երբ երկու սրտեր
Աւելին մի վերին զուգավորություն,
Ասանց այդ կապին սերը կյանք չունի,
Եվ այսօր, էգուց պիտո է մեռնի.
Արեմբն սիրի՛ր, քանի սիրում է,
Եվ խեղդի՛ր քո սերն երբ նա մենակ է:

IV.

Եվ դու այդ օրից կորուսանում ես
Քո իրավունքը, որ դու ունեիր,
Բայց անկման խաշը, — եթե խելոք ես —

Եվ զերադ շառնել դու կարող էիր։
Միայն մտածի՞ր, մենք բաղդավոր ենք,
Երբ կառավար է ազատ կամքը մեր,
Իսկ թե մենք նրան բռնաբարեինք,
Մեր կյանքը սաստիկ պետք է նվազեր։
Եվ քո սիրածը բաղդավոր յուրյան
Հաշվում էր մինչև սերդ սիրում էր քեզ։
Այդ սերը անցավ — և նա ինքնիշխան
Գնաց — նո՞ր բաղդի կազմել ասպարեզ։

1864 թ. հունիսի 21.
Բոգորոդսկ.

ՄՐՏԻ ԿԾԿԻԾ

Քանի՛ ժամ է, օտարության
Տվել եմ անձս վշտալի։
Ինձ թվում է, որ հավիտյան
Սածկվեցավ հողն հայրենիւ

Ես, համարյա՛, ցնորժած եմ,
Ես հիվանդ եմ միշտ հոգով։
Բարի՛ մարդիկ, հանգիստ լունեմ,
Ես մեռնում եմ սիրելով։

Ա՛յս մա'յր, առա՛, քանի՛ կսկիծ
Դուրս է թափվում քո կուրծքից,
Ո՞ւր այդ կսկիծ... դեպ ա՞յն աշխարհ...
Այդ բողո՞ք է, ո'վ մեծ հայր։

1864 թ. օգոստոսի 3.

ԵՎ ԴՐԻ ԱՅԴՊԵՍ



Ես այն օրից, երբ քո պատկեր
Շիշավ, որպես մի ճրագ, —
Տաղտկանում եմ ողբանըլիք,
Անմահ է քո հիշատակ:

Ես այց եկա գերեզմանիդ,
Շատ արտասուր թափեցի. —
Թող ճաշակե մաքուր հոգիդ
Խաղաղություն, ասացի:

Եվ թացում են ինձ արտասուր,
Առատ որպես մի առու,
Ախ, հասկանալ կարող չեք գուք.
Ո՞միք սիրու մի զգալու

ԷՎ
Եվ հնչում է իմ ականջին
Սիրու երգը կախարդիչ
Ո՞ւր ես հրեշտակ իմ երկնային, —
Իմ տրտմության սփոփիչ:

1864 թ. օգոստոսի 3.

I.

Ո՞վ իմ մաերիմ ընկեր մանկության,
Դու մտածում ես ինձ դաշտանիլ,
Եվ իմ սիրու ոգեխառնության
Կոլես շկամիս համազգաց լինելի
Եվ ահա շրթունքդ «ներիր» շշնչեց —
Եվ ես աշխարհում մնացի մենակ.
Եվ իմ կուրծքիս մեջ սիրուս նվազեց. —
Իմ ծաղկած այգի, գարձար փլատակ
Կանայք, ձեր սիրուը ես լավ զննեցի,
Եվ այսուհետեւ հազիկ թե խարվեմ.
Եվ թե մանկությունս հավիտյան ծածկվի,
Չեք նենդ արվեստը աշխարհին կպատմեմ:

II.

Ի դեպ է այսուեղ, երիտասարդներ,
Որ դեռ նվիրված չեք կնոջ սրտին,
Որ, դեռ ցնորված, չեք ճահաշել սեր, —
Լսել խորհուրդըս թե այդ խրատին
Ականջ դնեիք — դուք կարող էիք

Լինել բաղդավոր և սիրո աշխարհ
Ռոք կոխել հաստատու— Ո՞վ գուռք պատանիք,
Խեղիցից թ կիրքը ձեր իշխանաբար,
Թեև բորբոքվեր սիրո կրակով
Զեր բոլոր կյանքը։ Արձակ նայեցեք
Սիրած ընկերիզ աշքերին, տեսի՞ք—
Զգառվին նոքա մեղմ աղաշանքով,
Եվ հավատացե՞ք, ախտեր կսկսեն
Եռ գալ նոցա մեջ — և ձեզ կսիրեն։

1864 թ. օգոստոսի 5.
Բոգորոշուկ.

ԱԽՏԱՎՈՐ ԺԱՄ

Ինչո՞ւ այդպիս արտասվալի
Գու նայում ես իմ վերա.
Քեզ չեմ սիրում, իմ սիրելի,
Ի՞նչ է քո միտքը, ասա'՝

Ի՞նչ ես կարդում իմ աշքերում,
Մի՞թե սիրո հավաստիք,—
Ո՞վ խեղճ աղջիկ, ի՞նչ ես անում,
Ի՞նչ պիտ, ասեն քեզ մարդիկ։

Մազերը կախ, և շրթունքներ,
Լի ցանկությամբ ախտավոր,
Խոնարհում են համբուլըներ
Ինձ տալիս է նա անզոր...

Ո՞հ, փրկիլ եմ ես քո, ո՞վ կույս,
Ես խնայում եմ քո տարիք...
Խեղի՛ր այդ շար և տնմիտ հույս,
Հետո կլինես երջանիկ...

1864 թ.օգոստոսի 8.
Չերկեզով գյուղում

II.

ՀԱՎԻՏ ՏԲՏՄՈՒԹՅԱՆ

О родина моя! я вижу стёры, вижу
Колонны, арки, башни и дворцы,
Что были наших предков в достояннем,
Но славы их, но лавров их не вижу,
Но горе, горе изринена она!

(Стихот. иностранных поэтов)

I.

Հովի՛տ տրտմության, անհա՛յր հայրենիք
Հին աշխարհների արգո ալեռոր,
Կապանքների մեջ—վայ բո վիճակիդ—
Խեղդվի՛ է կյանքը քնով դարավոր:
Միթե, ինձ ասա, նո՞րա համար էր
Քո արյունահեղ նահատակություն,
Քո ընտրյալների զոհած դիակներ,
Որ զոռոզանա այժմ բռնություն,
Նո՞րա համար էր, որ Ավարայրը
Էնդունեց յուր ծոց քաջ քաջ վկաներ,
Որ ճնշե հային գերության բեռոր,
Որ գժո՞խք փոխվին նորա պարզ օրեր:

Այսպես տրտմությանս միակ առարկա,
Աշխարհ Վարդանա, աշխարհ Սահակա.
Բարբարոսների անհագ ձեռներից
Ջրկվեցա՛ր վերջին ազատությունից.
Անմեղ գասներիդ դադարեց արյուն
Որով ներկվեցան գաշտերն ամայի,
Եվ անհետացավ նետերի շաշուն,
Որպես և ուժը բռնավորների
Մի դամրահական խորին լուսություն
Մփոնէ է վերադ մահի վարագույր,
Միայն երբեմբն ազոավ սկաթույր,
Հերձելով անբնակ քո տարածություն,
Խնդրում է յուրյան այդտեղ կերակո՞ւր:

III.

Այսպես ոսկրներ, աղջությամբ կնքած,
Դարեւոր փոշու թումբերով ծածկված,
Մարսիրոսներիդ պայծառ մահարձան,
Եվ հերոսներիդ պանծալի դամբան,
Եվ վերջին շաւնչը հարազատ կյանքի,—
Բոլո՞րը կորավ առանց մի հետքի
Կորա՞վ արդարի: Այսպես Հայաստան
Վաճառեցին քեզ որդիք շարության,
Որպես անպատիվ մի կալանավոր,
Խաղալիք դարձար ազգերի ձեռին,

Որպես խավար բանտ սնացավ քո օք
Ամո՞թ առնողին, ամո՞թ տվողին...

IV.

Այժմ կարող ես, որպես դագաղում,
Հանգիստ որոնել անընդիշելի.
Քո նավը շարդվեց — և ալիք ծովի
Խսկույն լոհցան, այլ չե՛ն կատաղում:
Ահա նենգավոր նախանձի ոգին,
Մի դժոխային ժիծաղ երեսին,
Նայում է զերադ, — և փշատակներ
Տիսուր պատկերով հառաջ են գալի. —
Հրո՞վ ու սրո՞վ ածել է ավեր,
Եվ ոչինչ չկա, որ նորից շարժվի,
Եվ Հայ կյանքի մեծամեծ շինված,
Որպես անապա՛տ անշքեղացած:

V.

Սևարյուն հետքով ամենայն մի քար
Նշանակված է. տատասկով, փշով
Մածկած պալատներ, ապարանք, տաճար...
Անգամ շները կատաղի հաշով
Չեն խանգարելու նինջ քո՝ ծանրագին.
Մնաց քո մեջ գեղ, որ լափլիզեին:
Ո՞հ, թե ձեր սիրտը խիստ տաղտկացած է
Մեծ աշխարհային գործավոր կյանքից,

Եկե՛ք Հայաստան, նա ձեզ կսփոփի,
Թեպետ և ձեր մեջ մի ծանրը թախսիծ
Պիտո է եռա, թեև, ո՞վ օտար,
Պիտ գոշես, ո՞վ ազգ, դու ինչպե՞ս ընկար:

VI.

Դու տեսանո՞ւմ ես քո տիսուր վիճակ,
Դառն արտասուրի արժանի դավակ.
Դառն արտասո՞ւրի... շարագույժ ագոռակ,
Անզոլ գիշատիչ քո ջուխտակ աշեր
Սրածայր ճանկով շուտով կփորեն,
Եվ տարածելով հաղթական թեսր,
Հիշատակիդ հետքն անգամ կտանեն;
Եթե քո այգին դալար լծաղկե,
Թե չկանաչի ծառը գիտության, —
Ավե՛ք օրհասի քեզ պիտի ճնշե.
Այսպես է անբախտ հայիդ ապագան,
Անհայր, անտերունչ և թափառակա՞ն:

1864 թ. օգոստոսի 10.
Բոգորոզսկ.

ԻՄ ՎԻՃԱԿԸ

Ես գրում եմ կշտամբելով
Անխիղճ մարդի սև գործեր.
Բոլոր կարծիքն պարսավելով,
Վկայել կամիմ նորան սեր:

Եվ փշյա է իմ ճանապարհ.
Ամբողջ դժոխք և բողոք
Ինձ լարում են կորուստ վատթար:
Ինձ բարեկամ — և ո՛չ ոք.

Հաստատ ոտով ես գնում եմ,
Ճշմարտությամբ ես զինվորված,
Անկեղծ քնարով ես օրհնում եմ
Եվ թշնամիքս և Աստված:

1864 թ. սեպտեմբերի 11.

ՍԻՐՈ ԿՅԱՆՔԸ

I.

Ո՛վ իմ սիրելի, ես սիրող սրտով
Խաղաղ ժամանակս կամիմ քեզել
Եվ հոգուս մաքուր, սուրբ զգացմունքով
Հրաշալի պատկերդ կենդանագրել
Կամիմ հավատալ, որ այսուհետեւ
Անունդ տվեցի ես ապագային,
Տվեցի եթե աշխարհիս առջեւ
Թեզ ճիշտ նկարեց պոետի վրձին:
Պոե՛տ, գիցուք, զու փոքր ինչ հայտնեցիր
Նորա արտաքին գեղեցկությունը,
Բայց զու, ո՛վ պոետ, ինչո՞ւ լուցիր
Եվ հոգու կյանքը և մեծությունը:

II.

Ես խոնարհում եմ, որպես թե հաղթված,
Սունը եմ կրկնում որպես հաղթողի,
Դափնի պսակով, երեք կարգ հյուսած,
Ես բոլորում եմ ճակատն նոր երգի,
Թե զա կարող էր երեան հանել.

Այն աստվածեղին հոգու հատկություն,
Եվ այն սրբության եղեմ նկարել,
Որ երեք շմառվ ոչինչ նենգությունն
Կույսե՞ր հյուսիսի, ճանապա՛րհ արեք,
Ահա ձեր պարձանք — սա ձեր թագուհին
Պետք է ճանալեք. մի՞թե զդիտիք,
Որ Սիրո տաճար սորան ասեցին:

III.

Նա ման է գալի — և սիրո հոսանք
Առատ թափում է յուր ճանապարհին,—
Եվ ձեզ գրկում է մի վերին հրճվանք
Եվ հաղթակա՞ն է շքեղ թագուհին։
Բարձրագե՞ղ հասակ, հրաշալի կաղմված.
Եվ օրորվում է և բիկրիկվում է,
Որպես մի ծաղիկ, գեփյուսից շարժած,
Եվ աշեր կյանքո՞վ փայլատակում է։
Մանո՞ւկ դու սիրո և գեղեցկության,
Թող խաղաղ սահեն քո անմեղ օրեր,
Թող աճե միտքքդ լուսով դիտության,
Մաքուր, անարատ, որպես պարզ եթեր։

IV.

Նա ման է գալի և մատադ սրտերն
Ահա մաշվում են սերից կաթոգին.
Կա ծիծաղում է — և սիրո մատներն

Գծագրում են նորա շրթունքին
Մի ամբողջ դրախտ քաղցր համբույրի,
Որ ես կարծում եմ ձեռը Արարշի
Մի անգամ ստեղծեց Աղամի համար,
Որ եղայի սեռն սիրով րարձանարու
Դու գեղեցիկ ես, ո՞վ թե առավել
Բուման շնորհով գեղեցկանայիր,
Եվ քո քույրերիդ, ալդ քեզ խիստ վայել
Առաջնորդուհի հանդիսանայիր։

V.

Թե սպիտակափառ շուշան ձեռներով
Առնեի՞ր այս թերթս — քո սիրով գրած,
Թե հոգի բերող կապույտ աշերով
Նայեիր սորան։ — ո՞վ իմ մեծ Աստված,
Ո՞րքան հոգեոր ինձ հանգստություն,
Ո՞րքան բաղդ, և հույս, և երանություն
Կարող էիր դու ինձ հասուցանելι
Ո՞վ կույս նաղելի, թե ցանկաս հիշել
Պուեաի անուն, ինչպես մտածեց
Եվ ինչպես մեռավ — կարգա՛ այս տողեր —
Թո՞ղ ես հնչեն պապանձած լարեր,
Իմ քնարն կյանքըս քեզ ընծա՛ բերեց։

ՍԻՐՈ ԿՈՐՈԽԵՍ

Այն բռպեից, երբ Սերբս մեռավ,
Աշխարհիս վերա շատ օրեր անցան,
Բայց Երբեք հոգիս շծիծաղեցավ.
Տխո՛ւր երազներ ինձ երևեցան:

Եվ շնչեց զեփյուռ,— և սոխակն երգեց
Խոր լոռության մեջ, և թնդաց անտառ.
Իմ անդամներից ցուրտ սարսուռ վաղեց,
Եվ սոսկալի վի՛շտ և մաշի՛շ խավա՛ր...

Եվ այժմ շղթայքն անհաստատ կյանքի
Տանում եմ վերաս, հնազանդ նորան,
Եվ ես շեմ սպասում, որ ձեռն կույր բաղդի
Սփռեր առա՛ջիս ոսկի մեծության:

Ոսկի մեծության... և ինչո՞ւ ինձ այդ,
Միթե դորանով կզարթնի հոգիս.
Ա՛խ, շուտով շուտով մահվան որոգայթ
Կծածկի ամպով հորիզոն կյանքիս:

Կհանգիի աստղը... կծածկվի արև
Մայր մտանելով: Հավիտենական

Կհափշտակն ինձ քուն ծանրաթե,—
Եվ շվարում եմ... որպիսի՞ վախճան...

Գիտեմ. կկանգնի կյանքիս զորություն,
Կմեռնի մարմին, կփոփ դիակ,
Եվ անվերջ է այս հեղափոխություն...
Բայց դու ո՞ւր, ճո՛գի, սֆինքս անգուշակ...

Կծիշե՞ս երգչիդ, կտխրե՞ս ծածուկ,
Շագանակահե՞ր կույս կապուտաշյա,
Կուղարկես նորան երկու արտասուր,
Երբ հավերժ սիրո սուրբ առհավատցաւ:

Մոսկվայի մեջ, մի դաստակերտում,
Գուցե, փայլում ես անհոգ հրճվանքով,
Բայց դու չես զգում, բայց դու չես լսում
Երգչիդ մրմունջը, շաղախվա՛ծ թույնով:

1864 թ.

Զեյթոնին, սրբազն մնացորդ անցյալի,
Տավրոս լեռների Հայ ազգ բնակիլ,
Արթո՛ւն կաց.— գիտե՞ս, վերագ է գալի
Եղվիտ ամրոխը, գայլեր գիշատիչ
Նոքա յուրյանց հետ շատ ոսկի ունին,
Նոքա կըռում ևն գորանով կրոն...
Ականց շղնես գետնաքարը յեղվին,
Թքի՛ր լրտեսին, — զինվորվի՛ր, Զեյթո՛ւն:
Լայոլի ստրուկ, բարեպաշտ քսուն
Պիտի նախատե քո կուսավորիչ,
Որ կյանքիդ համար շխնայեց արյուն,
Եվ բազմաշարշար եղավ քեզ փրկիչ:

Անտառան.

I.

Անա՛րդ ծառաներ, որ Քրիստոսի
Աննախանձ ուսման խեղդել եք հոգին,
Որ երանությունն հանգերձյալ կյանքի
Տալիս եք միայն սուրբ Կաթողիկին.—
Արդյո՛ք, կրախի՞ն կուրծքըդ կաշառած
Մարդասեր դարիս առողջ հոսանքներ.
Կփշրե՞ն մտքիդ կապանք ժանգոտած
Եվ ժամանակը, և նորա փորձեր,
Բայց պատրաստ է նավն, արդեն, լողալով,
Օվկիանոսի հերձում է ալիք,
Եվ սպիտակափայլ առագաստներով
Թողում է ձեր հետ,— բայց ո՞ւր, շար մարդիկ:

Հարազատ եղբա՛յր, որդի քաջության,
Թո՞ղ շկաշառե եղվիտի ոսկին
Քո սուրբ հավատը, քո նրվիրական
Ավանդություններ, քո եկեղեցի՞ն:
Կարմրի՛ր, ևթե պապի արքանյակ,
Յուր ամոթապարտ որոգայթներով,
Կարաց քեզ որսալ. կարաց խայտառակ
Հաղթություն կանգնել, և, ծաղր առնելով,
Կործանել ամուր քո բնակարան,
Ուր հաղարավոր Սուլթանի զորքեր
Սրով մաշեցան և սասանեցան.—
Այսպէ՞ս պիտ' լինի եղվիտի նետեր:

IV.

Շատ ժամանակ է, որ Ելբոպայից
Այդ աղվեսներն արտաքս հանվելով,
Եկել են ձեր կողմն — շահվել ձեզանից,
Արհածախնդիր եղվիտ մնալով։
Ո՞վ Զելթո՛ւն, Զելթո՛ւն, վերջին շո՛ւնչ զոհիր,
Զո հիր քո երկրին ո՛չ ամբարշտին,
Ո՞չ քո թշնամուն սատանայակիր. —
Սուրբ անկախության, ազգիդ պարծանքին
Բե՛ր գորան, Զելթո՛ւն. — Թող գերեզմանի
Տարածվի վերադ ապականություն։
Ազատ ծնել ես, — թո՛ղ ազատ մեռի
Զելթունի որդին, քեզ անմահությո՛ւն։

V.

Կգտնե՞նք ձեր մեջ մենք Հայաստանի
Ախոյանները, որ կյանք կնքեցին
Անմահ պարծանքով, և բռնավորի
Եղթայք ու կապանք գոռող փշրեցին.
Ո՞վ արդյո՞ք ձեր կուրծքն առաքինական
Կիանձե հրով, կարո՞ղ եք մեզ տալ
Մի Ավարայրի նահատակ Վարդան,
Կամ թե մի Վահան, առյուծ կատարյալ
Թե սոքա ինքանք պետք է դագաղից
Նորիդ գան հանդես, որ ստրկության

Խորտակվին պարիսպը, որ Հայի կուրծքից
Բխում է հորդառատ աղբյո՛ւր քաջության։

VI.

Ո՞վ ազատություն, դու սպառազին
Տավրոս լեռներից մեզ երևեցար,
Եվ արենարբու Ազիզն անօրեն *
Տարավ նշավակ, անկավ շարաշար:
Ա՞խ, պահի՛ր և այժմ քեզ ծանոթ Զելթուն,
Տե՛ս, որքան վերքեր և որքան հարված
Ցուր մեջքի վրա տանում է մաշված,
Եվ շունի ոչ ոք ո՛չինչ օգնություն:
Եղենազործ են իշխանք աշխարհի.
Դոքա լեն լսում մուլճերի զարկեր,
Որից գոսացած և արտասվալի
Փշում են Հովին այդ անմեղ զոհեր։

VII.

Երբ պետք է լուս Անարդարություն,
Ճնշող, խարշամող մտքի ծաղիկներ,

* 1862 թվին, օգոստսա ամսին, Զելթունցիք շարդեցին տաճիկ զորապես Ազիզ փաշայի կանոնավոր զորքը և շատ թնդանոթներ խեցին։

Այս հաղորդումը պիտո է տոնախմբվի հայրենասիր շրբ-շաններում, որպես փառավոր առհավատլյա հայկական քա-շարտության։

Երբ գոռօզների խոլամտություն
Պիտո է գրկե կորստյան ստվեր.
Մինչև ե՞րբ պետք է մնա զորավոր
Զարության կողմը, որ վանդակներով
Կապել է մեր խելքն, մեր հանճարն հզոր,
Որ պետք է լցներ աշխարհ հրաշքով.
ՄԵՇԱ, որ միությամբ ձեռք ձեռքի տրված,
Գիտության դրոշով մի սուրբ գունդ կազմած,—
Փետք է լուծեինք անլուծանելին,
Եվ աստվածանա՛ր մեր աղատ հոգին,

VIII.

Բայց ահա շատ մոտ արձակ ասպարեզ
Բացվում է աշքիս Խոնում են աղքեր
Ուրախ երգերով. նորա պարզերես
Չգիտեն, ի՞նչ է կապանք, շղթաներ...
Աղատ են նորա... և ամենայն բան
Ենչում է միայն սուրբ աղատություն,
Եվ չէ երևում բնության նշան...
Սեր, և Արդար գործ, և Եղբայրություն
Իշխում են ղոցա.— և առհասարակ
Մաղկում է հանդիսատ, և Բաղդ, և Վաստակ...
Այս՝, սերմերը, կարծեմ, աճում են,
Երբ ազգերն յուրյանց պիտ' կառավարեն;

ԱՆՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

I.

Ո՞վ անհոգ տգետ և թեթևամիտ,
Ե՞րբ պետք է զորս գաս ուղիղ ճանապարհ,
Ե՞րբ պետք է զարթնի քո անկործ հոգիի,
Ինչպե՞ս ես տանում այդ լուծը վատթար:
Զէ՛, քո նպատակ պախարակելի,
Եվ չունիս առջեղ մի այլ նպատակ,
Ճակատիդ վերա ես նախատինքի
Կարդում եմ միայն զղվելի՛ կապանք,
Այսպես է պտուղ, ո՞վ թշվառական,
Երբ անարգեցավ Աստուծո պատկեր,
Երբ սուրբ հանճարը բանականության,
Ապականեցին ճճի՛ք և ցեցեր:

II.

Ո՞վ տգիտություն, գաւան ահավոր.
Դու, միշտ փոխելով քո կերպարանքը,
Թեավորվում ես և ես զորավոր,—
Որ թունավորես մարդկեղեն կյանքը:
Եվ քո խորամանկ, քո շար մեքենան

Գիտե գրավել շողուն ճաճանչով
Թուզլերի սրտեր, սրոնց կրթության
Տաճարն չկարաց ծավալել լուսով:
Եվ ինձ շատ անդամ դու փորձ փորձեցիր
Գրել պաշտոնյա քո անփառք կուռքին.
Դու, որպես պարզ օր բեզ ցուց տվեցիր,—
Բայց շատ վասահ էր իմ մատադ հոգին.
Նա դիտաց պատճել բաղցր սատանան —
Եվ նա որդեգիր գնոց դիտուրյան:

III.

Բացվի՛ր ընդարձակ, իմ հոգու տաճար,
Կամիմ բաջությամբ գնալ ճաճապարհ.
Եվ լմեղանչել խոզիս սրբության
Սրբի՛ր իմ առաջն. թող պարսավական:
Ջրախոսությունք ինձ շխափանեն,
Եվ զիխիս ուղեղն թող շապականեն:
Մարրի՛ր, մշտկի՛ր իմ լայն առպարեզ,—
Կեցցե՛ Գիտություն — պաշտոնյա եմ քեզ:
Խոստովանությումբ ծունը եմ խոնարհում,
Որ դու ես միակ Արարիշ լուս.
Խելթիս բանալին քեզ եմ նվիրում.—
Արա ինչ կամիս — եղիցին կամք քո:

IV.

Երբե՛ք և երբեք խոնարհու չէ
Իմ պարանոցը աշխարհիս առաջն, —
Թեև շարշարվեմ, թե օրս հառաշ.
Աղա՛տ թող փայլե իմ կյանքի արև:
Կեղծավորություն, անարժան գործեր,
Հոգիս կաշառել ոսկով կամ գանձով, —
Ես պետք է խեղդեմ այդ անարգ կիրքեր,
Որ կյանքին նայեմ համարձակ աշխով:
Հաստատ քայլերով գործս կոկում,
Թեև փշով լիբ լիներ ճանապարհ, —
Արդար քրտինքով ինձ հա՛ց կճարեմ, —
Եվ այնտեղ ինձ վարձ — բարի և ո՛չ շար:

1864 թ.

ԽՐԱՏ

Ես ձեղ ցավում եմ, դուք մի հետեւք
Գիշերաշրջիկ անառակներին,
Որոնց մեռելու անձը կիսաբեկ
Հողում է անկյանք ախտերի ծոցին.

Որոնց արհեստն է նշավակ հաղթություն,—
Խլել ամոթը ողջախոհ կուսի,
Եվ որոնց կյանքի գործունեություն
Անմիտ ցնորք է — հավասար զրոյի:

1864 թ.
Կուսով դաստակերտում.



Որքան և պերճ չշարդարվես,
Թոլորն զուր է, սիրելի,
Որքան հասակդ լրծոմըուս,—
Այդ շորերն քեզ չեն գալի:

Դեղեցկությունը չէ կարոտում
Փալլողության արտաքին.
Միայն շտեսն է պահանջում,
Որ աղջկներն զարդարվին:

Եվ մեղ շուտով հավանելի,
Թե ներկա էր պարզություն,
Թե քղանցքը քո մենթանի
Չլիներ այնպես ոլորում:

Եղի՛ր այնպես, ինչպես որ կաս.
Քո գործը չէ գրավիլ:
Ապա թե ոչ — ևս հանապազ
Կամիմ ա'նձըդ պարսակել:

1864 թ.
Ամառանոցում.

ԱՆՏԱՌԻ ՄԵՋ

Ո՞վ դու վաստակած օտար անցավոր,
Ե'կ, հանգստացի՛ր. այստեղ կեցություն
Կարող ես գտնել, քեզ հովանավոր
Կլինեն ծառեր, և մի զվարթուն
Ոզի կստանաս:— Արքի՛ր, ներշնչի՛ր
Բարեխառն զեփյուռ և օդ քաղցրության:
Թե հիվանդ ես դու — ինձ հավատացի՛ր —
Քո զգայարանքը և քո գոյություն
Եվ կնորդվեն և կառողանան:
Եվ մի բարի քուն այնքան անդորրիկ
Կփակեն աշերդ, մինչ վարդանման
Այդք կը շողա, և նորածաղիկ
Կավետե քեզ օր: Այստեղ, սիրելի,
Թոշում են ժամե՛րն աննկատելի:

1864 թ.

Ամառանոցում.

ՄԵԾ ԹԱՏՐՈՒՆԻ ՄԵՋ

I.

Նայեցե՛ք աչ կողմ — առաջին հարկում,
Դիտակ ուղղեցե՛ք. մաքուր աղավնին
Անզույզ շնորհով է գեղեցկանում.
Ծաղկում է գարուն նորա շրթունքին:
Զկարծե՛ք, որ սա լիներ նոցանից,
Որոնց բարքն ու վարքն է կասկածելի,
Որ խորհրդավոր այն քողի տակից
Աւքեր առնելով շատ ամոթալի:

II.

Որ վաճառելով և խիղճը և սկր,
Աշխարհիս վերա այլ արվեստ չունին,
Միայն զզվելի անպարկեշտ հուկաբը
Յուրյանց գլխի մեջ պտըտավում էին,
Որոնք պատրաստ են որոգայթ լարել
Եվ փորձանքի մեջ ձեր անձը ծգել,
Որ ընդգեմ կոչման գեղեցիկ սեռի
Մեղրեր են դորձել ձեղ անբուժելի:—

129

III.

Ո՞վ, թե մեկի մեջ այս կարծիքս ծագի,
նա ինքը պիզծ է և չունի հոգի.
Աղնի՛վ պատանիք, ատեցե՛ք դորան —
Այդ գունատ ժառանգ հեշտասիրության:
Նա, աշքերը ցած, այնքան երկլոտ էր,
Որ թե անցնելով հայացք ձգեիր,
Որպես մի սալոր, շառագունում էր.—
Անբարբա՛ռ էին շրթունք գեղալիր:

IV.

Համեստ է բարբը և բաղցը շարժված,
Նորա պարանոցն է շուշանագեղ.
Աշքեր կենդանի, սիրով ներշնչած,
Եվ նորա վերա ամեն բան շքեղ:
Շատ ախտաբորբոք երիտասարդներ,
Մաղկած մանկության վառուն շնորհով,
Եվ շատ մեծատունք, և շատ հարուստներ,
Ասկու բռնության դավաճանելով.—

V.

Բախտավոր էին, թե այդ կախարդիւ,
Այդ մաքուր կույսը մի ժպիտ բաշխեր,
Եվ նորա պատկերն, այնքան գրավիլ —
Ամեն ո՛ք յուր մեջ դրոշմած ուներ:

Ահա վարագույրն ընկավ թատրոնի,
Ողբերգությունը վերջացավ ահեղ,
Բայց ոչ ոքի սիրուն ուրիշ վիշտ չունի,
Թի և՛ս տեսներ աղջիկդ անմեղ:

1864 թ.

ՊԱՆՏ, ՆՅՈՒԹԱՊԱՇՏ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻ

I.

Բայց դուք իմացե՞ք, որ այս օրինակ
հմ սովորությունն — անդադար շրջել,
Անընդել ձորին, անժարդարնակ,
Որպես սիրելուս այցելու լինել,
Ազրյուրի կողքին նստել խոխոշուն,
Եվ լսել նորա տրտում շշնչուն,
Արմանալ Հովվի սրտաշարժ սրնգին
Եվ գգվել սիրով մայոզ գաւներին,
Հեռանալ մարդից, անտառ երազել,
Օրով տաղտկանալ, գիշերով սթափիվել,—
Իմացե՞ք, դեռ այդ շէ՝ նշանակում
Որ ես անգործ հմ, մենակ աշխարհում,—
Ո՞չ, այդ այն է, որ վառ է միշտ հոգիս
Եվ շատ քավո՞ւմ եմ քեզ, ծիծաղելիս:

II.

Բայց դու, որ անարդ ճանապարհներով
Ճուսահատվել ես աշխարհի կյանքից,

Որ կայենի պես ահով ու գողով
Փախչում ես արդար ընկերությունից,
Որ օր ու գիշեր ցուրտ, որպես դամբան,
Հաշիվների մեջ թաղված ես հոգով,
Որ անզգա ես և, որպես անբան,
Չկամիս զրկել ընկերով շերմ սիրով,
Կեղծավոր, խավար և արծաթասեր,
Դո՞ւ ես խորթ որդին, դո՞ւ ես անընկեր:
ՏԵ՛ս, ի՞նչ անտառ է, ի՞նչ արձակ հովիտ,
Ի՞նչ անհմ, ո՞վ մարդ, անկյանք է հոգիդ:
Ա՛յս, բնության հետ, և բաղավոր եմ —
իմ տիսոր տազերս թո՞ղ ես կցորդեմ:

III.

Եվ նյութապաշտը չունի պատասխան.
Մեռած է հոգին. միտքը գուացած
Խավար ախտերից ընշասիրության,
Պատճառ, փողն է նորա մեծ Աստված:
Նստած է պոետն և մտածում է.
Առվի ալիքը, մեղմ թափալվելով,
Նորա մտածմունքն հափշտակում է, —
Եվ նա երգում է առվի հետ սիրով:
Բայց ահա կյանքի գործերից քրտնած,
Եվ հասարակի օգտին պարապած,
Հառաջ է գալի ժիր Քաղաքացին,
Առողջ, անտրտունչ և հաղթամարմին:

«Ո՛չ Դու և ո՛չ նա որդի բնության,
Եվ փայտելու չէ ձեր գլխի վերա
Սուրբ արեգակը բարեբախտության,
Ձեր համար, ասեմ, պայծառ օր Հկա:
Ես եմ հաւաքատ մշակն աշխարհի,
Եվ իմ կյանքի մեջ ամեն մի վայրկյան
Չափած կշռած է և յուր տեղն ունի.
Ես անձնազն եմ հասարակության,
Ե՛կ, Պոետ, քաղաք, այնտեղ գո՞րծ գործիր,
Հասարակի բազդն ու օգուտն երգի՛ր.
Դու այն ժամանակ անդամ ես ազգի,
Եվ արժանի ես մեր սուրբ հարգանքի—
Այս Քաղաքացին ասաց պոետին,
Ծուա՛պ քայլերով գնաց յուր գործին:

1864 թ.
Բոգորսոնի.

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՎ ՆՈՐԱ ՈՐԴԻԹՅՈՒՆ

Եվ գեղեցիկ է Հայաստան աշխարհ,
Բայց գեղեցիկ չեն նորա բուն մարդիկ,
Հայաստան կանաչ, Հայաստան դալար,
Բայց լոր ու ցամաք նորա խեղճ որդիք:

Ահա սթափված ազգեր ամենայն
Դիմում են առաջ հզոր քայլերով,
Ահա՝ բարձրացավ դրոշը ազգության,
Բայց Հայն քնած է կորսալան քնով.

1864 թ.
Այառանոցում.

ԱՆԱՀԻՏ

Ո՞վ դու Անահիտ, դուստր ոսկեծին,
Ո՞ւր է քո զարդերն, գործած գոհարից—
Ճակատը սեղմած ծունկերի միջին,
Արյունո՛ւ շիթեր ժաղկում են աշբից:

Ո՞ւր թագավորներ հարազատ զորքով
Սուրբ հանգստությանդ արթուն պահապան.
Նոքա ծածկվեցան մահի խալարով,
Քեզ միայն մնաց թախիծ անվախճան:

Ո՞վ դուստր լուսո, չքնա՛ղ արեգակ,
Այդ ինչպե՞ս եղավ, որ անիվն բաղդը
Դավաճաննեց քեզ, երկնի կապուտակ
Զլացավ քո փառք — անկար գո՞ւր բանտի:

1864 թ.

ՈԳԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(Երևակայական)

Ո՞վ կույս մանկագիղ, կո՞ւլս արհելքի,
Հրեշտակ սիրո — բայց ո՞չ թեավոր.
Մի հատիկ գոհար փշրված թագի,
Կույս ես իմ հոգու, տաճա՛ր փառավոր:

Անմեղութենով փայլում ես պայծառ,
Որպես շուշանը հայոց դաշտերի,
Քեզ այդ շուշանից, հոգո՛ւս սիրահար,
Հյուսում եմ պսակ անթառամելի:

Առաջին անգամ ես այն անմարմին
Քնքությունը տեսա կանացի,
Ա՛խ, տեղատու է շրթունքիդ վարդին
Նրբագեղ քո՞ղը արևարացի:

Ես շատ նայեցի խաղաղ աշքերով
Ջմալլիշ սերիդ փայլատակության,
Վիշտըս փարատեց գարնան զեփյուռով
Վա՛ռ ժաղկահասը վա՛ռ գեղեցկության:

187

Ես աշխարհիս մեջ շատ կանայք ունսա,
Եվ շատ կանանց հետ ես սիրանվեր
Զգացմունքներով ոգեխառնեցա,
Բայց այժմ նոքա-նոքա մի ստվեր

1864 թ.
Ամառանոցում.

ԽԱՆԱ ՄԵՌԱՎ

Ո՞վ դու նազելի, որ երգիշն այնպես
Այրվում էր ախտով գրկախառնել քեզ,
Որին անկաշառ պարզնել էր սեր,
Անտե՛ս արեցիր քո ոսկի հուզերու

Երբեմն հրեշտակ, երբեմն շար դև
Զեացար նորան անհաստատ սիրով.
Շատ վշտացրիր աշխարհիս առջև,
Վշտացա՛ր և դու, բայց մահի գնով;

Մինչդեռ Փերոսը ոսկեվառ կառքով
Նոր արշալուսի բացում է դռներ,
Դամբանիդ վերա զերմ արտասուրով
Թացում է երգիշն թարշամած վարդեր,

Դու դագաղումն ես — քո պատկերն պայծառ
Կրում եմ իմ մեջ, որպես սրբություն,
Ո՞վ այսուհետեւ իմ սրտի համար
Կարսղ է բերել նոր հիշողությունն

Ո՞վ նախամեծար ընկեր սիրելի,
ինչո՞ւ փոխեցար դու այս աշխարհից,
ինչո՞ւ իմ կոքքքը այնքան ցավալի
ձնշում է մի նոր, մի կծու թախիծ:

Գեղեցիկ է կյանքն, բայց, ա՞յս, նա չունի
Ա՛յ հաստատուն կայք, ո՛չ տեսղություն.
Ա՞յս, թե նազելիս մնար կենդանի,
Եվ չցածաքե՛ր նորա զորություն:

Սպիտակ սալան քեզ վերջին ընծա՛,
Եվ խոնավ գամբա՛ն և մի հավերժ քուն.
Կարծեմ, սոցանից ավել բան չկա,
Թիեւ, առում են, կա այլ դրություն...

Եվ դո՞ւ, մեզ երդող այս տիսուր խոսքեր,
Ծուտով կստանաս քո կյանքի վախճան.
Ծուտով կրոն քնարիդ լարեր,
Որ այնքա՞ն հնչեց մեզ տա՛ղ տրտմության:

1864 թ.

ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Սո՛ւրբ արքեցության անմեղ տարիներ,
Մաքո՛ւր հրճվանքի դու անհոգ օրեր,
Ձեզ երգել եմ ես. երբ անուշահոտ
Ժպտում էիք ինձ, որպես առավոտ:

Պայծա՛ռ մանկություն, ո՞ւր է ներգաշնակ
Քո մեղեղիքը, քո քնքուշ վիշտեր,
Եվ հով, և արե, և սիր անուշակ,
Եվ երշանկություն, և դալար վարդեր:

Թե դուք գնայիք, անցաք հավիտյան,
Եվ դառնալու չես, իմ լաղցը եւազ,
Ա՞յս, մի՞թե, Աստված, ալիք ծերության
Պետք է ծածկեն ինձ,— ո՞վ դառն պատուհան:

Ա՞յս, մի՞թե և ես մահի զգեստով
Պիտո է կաղամ մի ոտի վերա.
Մի՞թե վիղըս ծուռ, դողդոշուն ձեռքով
Նեցուկ պիտ' առնեմ, որ փոքրիկ ուժ տա:

Արի՛ մանկություն, արի՛ և այսօր,
Թո՞ղ մի ժամ ևս լինեմ բախտավոր.

Մաղկազարդ գարնան ուռիների տակ,
Թո՛ղ դարձիդ կենաց լցնե՛մ ես բաժակ:

Ցոլացե՛ք փոքր ես, բովե՛ք անզին,
Այցելո՛ւ եկեք նվաստ ձեր երդին,
Հոգուս նպատակն փառքո՛վ կնքեցիք,
Եվ այն ժամանակ բարյա՛վ մնացեք:

1864 թ.

ՍԻՐԱԿԵՊ

Նա սեղմում էր ժպտալով,
Կուրծքի վերա իմ ձեռը,
Եվ խիստ ազնիվ դարձվածով
Պատմում էր. ի՞նչ է սերը:

Նա ասում էր. սերն է կրակ,
Որ, թե վասիլ նյութ շտան,
Նույնպես հանգչում է արագ,
Որպես կայծ մի էլեկորյան:

Սերն է աղրյուր քաղցրության,
Սիրող սրտի արշալույս.
Սե՛րն — վառ լավտեր մանկության,
Մատաղ կյանքի ոսկի հույս:

Սիրո ձայնն է կախարդիչ,
Նորա հնչմունք խանդակաթ,
Բայց առավել զմայլիչ
Երբ լեղվով է հարազատ:

Սիրի՛ր, որքան կարող ես,
Արքան փայլում է արև
Կյանքիդ օրերն նետի պես
Թռչում են արագաթեւ

Կգա մի օր, մի սև օր,
Երբ մեր այզը ոսկեշող
Կիւավարվի, — և անդոր
Մեղ կծածկե մի բուռն հող:

Իմ սիրելի, գգույշ կաց,
Որ լեզուդ շար չխռուի.
Պատճառ, ոչինչ զեռ շասած,
Ընկերդ արտավում է:

1864 թ.

ՄԱՅԻՍ

Երկինքը պա՛րզ, օրն մայիսյան.
Ես ճեմում եմ բուրաստանում,
Սիրտս ուրախ է, ես, ժպտալով,
Վարդ եմ բաղում, փունջ եմ հյուսում:

Թեթև դեփյո՛ւռ, կանալ ափեր
Անուշության հոտ են փշում,
Եվ սոխակի դայլայլիկը
Քաղցր սկանչիս է հասանում:

Նա մի վարդից դեպի մյուսն
Աստուածում է ուրախալի,
Նա հեշում է դաշնակաձայն, —
Ինձ յուր արվե՛ստն է ցույց տալի:

1864 թ.

ԱՐԱՐԱՏԻ ՇՐՋԱԿԱՅՔԸ ԵՎ ՆՈՑԱ
ԱԶԴԻԵՑՈՒԹՅՈՒՆԸ

I.

Քաղցըր բամբիռով այստեղ վիպասանք —
Այդ մեծ սոխակներ հին Հայաստանի —
Երգեցին Հայի և փառք, և պարծանք,
Եվ Հաղթանակներ թագավորների
Այդ վայրենացած քարանձավներում,
Ուր այժմ միայն բռեր են կենում,
Լսվում էր թնդուն կորով նետերի
Հայոց մեծափառ, դյուցազն Մեծերի:
Ահ, օրեր գնացիք և այդ խորշերին
Մնաց մի տիտուր տպավորություն...
Նոքա հիշեցին յուրյանց ցանկալին...
Բայց ձմեռն փշեց, ծածկվեցավ գարուն:

II.

Այդ լուռ տեղերում կարող եք կարծել,
Որ դեռ լէ անցել մարդկության համար
Դյութական դարը. և չե՞ն առասպել
Առասպելները, որ հրաշարար

Ավանդեցին մեզ անցած է մարդիկ,
Երբ գերբնական երևույթներով
Երևան եկան հազարավոր դիք, —
Որոնց պաշտեցին երկուոված սրտով,
Այստեղ բնությունն է ամենաիշխան,
Եվ շատ նման է այն բռնավորի,
Որ անգութ լախտով հարստահարության
Կամեր խլել կամք հպատակների:

III.

Թարձր սարերի ձյունապատ շղթան,
Որպես մի տիտան երկինք վերուղղած,
Եվ խոր անդունդներ, ուր հազարամյան
Անշունչ լոռություն թներ տարածած
Թագավորում է և քարուտ ձորեր,
Ուր, որպես առյուծ, բաշ ծածանելով
Վագում են արագ, փրփրաղեղ գետեր,
Դիպլելով ժայռին և փշրսկելով, —
Այս բոլորն, առևս համշտակում են
Անկախությունը ազատ էակի.
Նա պիտ' հավատա պաշտե կուրորեն, —
Այստեղից աղբյուր տգետ խավարի:

1864 թ.
Ամառանոցում.

ԵՆՔՆԱԳԻՏԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կան բռպեք, երբ ամեն բան
Ենթարկելով քննության;
Երկմտում եմ, և, համարյա,
Վարարմունքիս ելք չկա:

Ես պնդում եմ, որ կանխակալ
Մտքիս կարծիքը հերքեմ,
Եվ զիտությամբ հանդիսանալ,
Առ իմ անձը նանաշեմ:

Առանձնացած ես մտածում եմ,
Որ գոյությունս զարգանա.
Այդտեղ Ես եմ, այդտեղ ես եմ,
Այդտեղ չկան դու և նա:

Ես եմ լակ, և իմ մեջ կա
Տիեզերքի մեծություն,
Իմ մեջ Աստվածն այն գերակա,
Այսինքն նշարտություն:

Ես մտնում եմ սուրբ տաճարը
Առարկալին մտածության,
Եվ քննում է իմ հանհարը
Անշարժ օրենի գոյության:

Ես չիմ նայում նյուրի վերա,
Որպես ծնօւնդ դիպվածի
Ես խնդրում եմ պատճառ նորա —
Ընդհանուր կապ ափեղերքի:

Եվ տիեզերքն է զիր ահազին.
Ես սերտում եմ ալֆարետ,
Որ վանկ կապե իմ սուրբ հոգին,
Որ զրուցեմ նորա հետ:

Մե՛ծ է իմաստն այդ մեծ գրքի,
Մե՛ծ է նորա Հեղինակ,
Ես անցավոր — որդի հողի.—
Ես Անանց — անժամանակ,

Նա պատճառ է իներ յուրյան.
Միշտ Զորություն գործունյա.
Նա ներին նիմք և հաստաքան
Եվ ես շինված եմ նորա:

ՄԻ ԶՎՈՐԻ ՄՅԱԿԱՆ

Ուրախություն քեզ անպակա՛ս,
Ռվ դու մանուկ սիրելի.
Ելե՛ս, ծաղկե՛ս և ծերանա՛ս,
Տալով պտուղ արժանի:

Որպես ծաղիկ, մանուկ, քաղցր ես,
Եվ շնորհագեղ, որպես օր:
Մանո՛ւկ, մանո՛ւկ, ինձ շամարես,
Միշտ կաց այդպես լուսավոր:

Նայի՛ր վերե, տե՛ս, ի՞նչ սիրուն
Այնտեղ փայլում են աստղեր,
Եվ անթի՛վ են, և շողշողո՛մ,
Որպես երկու քո աշեր:

Այնտեղ, հոգյակ, բնակվում է
Մեր սուրբ Հայրը երկնքի,
Նա՛ է, որ մեզ ուղարկում է,
Եվ Կյանք, և սեր, և հոգի:

Նա ծագում է յուր արեգակ
Ամենայն օր քո վերա,
Որ զվարճանաս, որպես թռչնակ,—
Օրհնի՛ր Անուն սուրբ նորա:

Ունի Որդի մի Միաժին,
Նա՛ է փրկիչ աշխարհի.
Նա խաչ ելավ, տվեց հոգին...
Որ դու լինիս մա՛րդ բարի:

Նա սիրելով յուր թշնամիք,
Օրհնեց Խաչին և ներեց,
Եվ մեզ գրեց յուրյան որդիք,
Միրե՛լ միմյանց պատվիրեց:

Նա հեղությամբ հաղթեց Զարին,
Եվ մեզ ասաց, որ և մենք
Հետևենք այդ օրինակին,—
Գհապարտանա՛նք մենք երբեք:

Մանո՛ւկ սիրուն, աղոթք արա՛,
Երբ դու գլուխդ խոնարհած,
Համրուրում ես պատկերդ ահա՛,
Ուկենկար զարդարած:

Եվ ժպտում է, որպես շուշան,
Անհոգ մանուկն մոր գրկին,

Այսպես թոշնակը ճյուղի վերահ,
Օրհնում է յուր հրեշտակին:

Եկե՛ք Հայոց Եկեղեցի.
Այնուղ կտեսնեք զմայլված
Պայծառ դիմքը այդ երկնացի,
Գարնա՞ն վարդը կիսաբաց:

1864 թ.

ԱՆԹԱՂԴ

Նա աղջի՛կ էր այնպես կայտառ,
Իի մանկական աշխուժով.
Նա նայում էր այնպես պայծառ,
Մի շա՛տ պարկեցած հայացքով:

Նա անմեղ էր. անդորրություն
Միշտ ողջունում էր նորան.
Նա ծաղկում էր ուրախ, անհոգ,
Որպես վա՛րդը մայիսյան:

Մինչ ծագում էր արեգակը,
Մինչ ժամում էր առավոտ,
Երգ երգելով նա ճեմում էր
Ծաղկոցի մեջ քաղցրահօտ:

Նա թափում էր սիրո շոնչը
Մանուշակների վերա,
Անփորձ սիրտը թրթում էր,
Որպես թոշնակն մոտակա:

Թայց այժմ տեսե՞ք, ի՞նչ հոգու վիշտ
Նշմարվում է աշբերում.

Քնքը՝ չէ էակ, թառամել է
Այդքան մանուկ հասակում:

Գույնը թռած, անբախտության
Կնիքը դրած է ճակատին.
Կյա'նը շին խոսում անմահո՛ւթյան
Երթունքը այն երկնային:

Շատ կուսական, անմեղ հույսեր
Խավարված են և շիշած,
Շատ պարզամիտ զգացմունքներ
Նորա՛ մեջ թունավորված:

Այսպիս լինում է մահապարտ,
Երբ, հանելով խոր հոգոց,
Դահճի կացնին նա լուռ, հանդարտ
Խոնարհում է պարանոց:

Ա'խ, ո՞ւր գնացին, իմ գեղեցիկ,
Խաղաղության վարդեղը.
Այդ ի՞նչ բռպեք չարաբաստիկ
Խեցին քո հանգիստը:

Եկեղեցում լուռ կանգնած է,
Անշարժ, որպես գերեզման,

Փեսայացվի խելքը գնում է,
Զեռը բռնած աղջկան:

Այդ փեսա'ն է, ա'խ, այդ փեսա'ն,
Որ ախրում է աղջիկը.
Նորա սիրար, նորա կամքը
Վաճառե՛լ են ծնողիք:

1864 թ.

Արի աշերն շաղսպում են,
Որպես աստվերն երկնքում,
Հայացքի մեջ աստվածեղեն
Բոլոր դրա խոն է ցոլանում:

ՀԱՆԳԻՍ ԽՄ

Դու իմ Հանգիստ, Հավատ և Հույս,
Ծով անսահման բարության,
Դու, զո՞ւ դարձյալ սառը հոգուս
Կյանք ես ցողում հարության:

Յողա՛, աղքյուր կենդանության,
Յողա՛ առատ հոսանքով.
Եվ իմ ժամերը դառնության
Թո՞ղ խորտակվին քո շնորհիվ:

Ե՛կ պոետի անկեղծ աշխատ,
Եվ ապագա օրերին
Ես կավանդեմ անոն անո՞ւզ
Կապուտաշյա գեղեցկին:

Այն գեղեցկի, որին այնքան
Դափնի պսակ հյուսեցին,
Եվ պատանիք ախտաբորբոք
«Պարտեզ փակված» կոշեցին:

Մե՛ծ են երկինք, մե՛ծ է աշխարհ,—
Բայց սիրոս մեծ է նոցանից,
Եվ առավել իմ սերս պայծառ
Այն լուսավո՞ր աստղերից:

Շատ գանձեր կան, շա՛տ և ակներ
Օվկիանյան հատակում՝
Շատ զգացմունք կան, շատ խորհուրդներ
Սիրո՞վ վառվածի սրտում:

1864 թ.

ԵՐԳ ՄԵՌԱՆՈՂ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԻ

(Նմանողություն Պօբելյուրավի «Մալայ
դրոց, յ սպառագութ»):

Ազնի՞վ ընկեր, մեռանում եմ,
Բայց հանգիստ եմ ես հոգով.
Իմ թշնամիքս ես օրհնում եմ,—
Որնո՞ւմ եմ քեզ Աստուծով:

Հեռանում եմ, անզի՞ն ընկեր,
Չգնահատած ոչ ոքից.
Բայց հավաստյավ անձնանկեր
Ազդիս մշակ կհաշվիմ:

Ազնի՞վ ընկեր, շմոռանաս.
Անդավաճան, զիրոմ սիրով
Ես սիրել եմ իմ հայրենիք,—
Գնա՞ և գու նույն շավզով:

Խեղությունը ճայոց ազգի
Կարեկցարար մտածի՞ր.
Ոսկեգրքույկն Եղիշեի
Քաջ առաջնորդ քեզ ընտրի՞ր:

Այնտեղ սուրբ կրոն, ազգ միարան
Ազատ կամքով և խիղճով.
Այնտեղ Վարդան, անձահ Վարդան,
Ցուր խնկելի քաջերով:

Հայրենիք,— սեղան սրբության —
Ես Աստուծո առաջի
Շատ կաղաշեմ, շատ կարտասվեմ,
Որ ծագե քեզ նոր արե:

Իմ մտերիմ, մահս մոտ է,
Բայց հանգիստ եմ ես հոգով,
Որովհետև խիղճս արդար է,
Ճշմարտության շատագով:

1864 թ.

ԳԵՐԻ ՀԱՅԻ ԱՂՈԹՔԸ

Թո՛հ ենք թեզնից, ո՛վ թարերար,
Օրհնյա՛լ լինի միշտ քո անուն:
Թո՛ղ արդար արեղդ այդ լուսավառ
Թերե յուր հետ մեզ փրկություն:

Ո՛հ, ուրախ օ՛ր շընորհիր, Տե՛ր,
Մեր խղճալի հայրենիքին
Նորա սիրուն սարեր, դաշտեր
Օրհնում են քեզ եռանդագին:

Մի տար, Աստվա՛ծ, որ կործանիի
Կուսակրրոն Հայոց աշխարհ.
Թո՛ղ բազցը անուն Հայաստանի
Մնա կենդան միշտ մեր համար:

Թա՛ց մեզ դուռն քո ողորմության,
Հեռու, Մովսես մեզ ուղարկի՛ր.
Որ այս դժնյա Եգիպտոսից
Ադեմյա՛ց մեզ տանեն երկիր:

Ո՛հ, այն աշխարհ, ուր առաջին
Քարողեցավ Ավետարան.
Փայլեց դրոշը ծիրանածին,
Կանգնեցավ հաշ քրիստոսական:

Ուր նվիրական նահատակներ
Դիմ վիշապին զինվորեցան
Պատերազմի կանաչ զաշտեր
Նոցա արյունով ներկվեցան,

Ուր հայրեր մեր երանելի.
Գրիգոր, Ներսես, Մեսրոպ, Սահակ,
Մեծարեցին անուն ազգի,
Եվ ննջեցին ծաղկապսակ:

1364 թ.

ՄԻՀՐԴԱՏ

I.

Ահա դեղեցիկ մի թերակղղի
Հի հարավային տհսարաններում:
Ալքիդ առաջեկ կասլույտ դաշտ ծովի, —
Գաշար ծածկված է անթիվ նավերով...
Եվ ևս տրտում եմ, բայց իմ տրտմություն
Անհաւասնում է շգիտեմ ինչո՞ւ.
Ճւ կը տս պարզեցավ, և ուրախություն
Տեսն' ք. դալիս է, կարծեմ, այցելու
Մանոթ է այդտեղն մեղ պատմությունից.
Անոր դարերն չեն համարձակվել
Տոշել հիշատակն երկրի երեսից
Եվ ավերակի ոտի տակ դնել

II.

Այստեղ Պոնտացին — փառավոր հերոս,
Նենգության նյութը կարող Հռոմի,
Մեծ հակառակորդ, որով Կեսարոս
Չկարողացավ ստանալ դափնի.
Այստեղ Միհրդատ, նորա լեգենն,

Պատերազմի փառք և բաղդի հանճար
Այստեղ մթնել է դոցա հորիզոն,
Եվ ահա սափորն և հետք շիրիմի:
Նայեցե՛ք այստեղ, զարթնել կարող չեն.
Եվ հող են նորա, երկրպագեցե՛ք,
Եվ թող ձեր սրահին փոքրիկ հառաշեն, —
Հերոսի նշխարք, մարդիկ պատվեցե՛ք:

III.

Անկավ Միհրդատ, անկավ և Պոնտոս,
Եվ ո՞ւր է հետքը նախակին մեծության.
Ո՞ւր է քո պարծանք, ով աշխա'րհ գոռող,
Երբեմն կյանքի դու բնակարան:
Ո՞ր փիլիսոփոս, կամ ո՞ր իմաստուն
Կարող են ժամ մի կենդանացնել,
Այս զամբանական խորին լուսիուն
Հարության կյանքի թնդունով լցնել, —
Անմի՛տ ցանկություն, և տխուր հօգով
Իմաստասիրել մնաց մեղ միայն,
Թե՛ն, և մէ՛նք այս օրինակով
Պիտո է դրկներ հո՛ղն ոչնչության:

1864 թ.

ՄԱՍԻՄ

I.

Մասիմ, քեզ միայն աղոտ երազով
Կարող էի ես երեակայիլ,
Եվ արվեստավոր, սերտած տո՛ղերով
Քո գեղեցկության մեծությունն երգել:
Հեռու ցնո՞րներ ես ականատես
Նշմարում եմ լյառն. կանաչ ասպարեզ;
Որպես մի կապերտ, ձգվում է ալստեղ,
Եվ Հայաստանի ես արյունահեղ
Հիշում եմ վիճակ: Որքա՞ն ոստիներ
Փորձել են այսուղ յուրյանց դորություն.
Եվ Փակեղ, և Խաչ, և ատրուշաններ
Կարմիր առվակով ներկե՛լ է արյուն:

II.

Այստեղ երկրորդ Հայրի մարդկեղեն ցեղի
Տնկեց բազմացնուղ ուող խաղողի,
Որի տերմով խսկուն ծածկվեցավ
Նույն բոպեին, երբ որ թմրեցավ:
Չեզ լավ հայտնի է, որ ես մի հերձված

Սորանով կրոնիդ պատճառելու չեմ.
Աստվածաշնչի խոսքերն եմ կրկնում,
Եվ ավանդություն, դարերից եկած,
Թեհ ատելի բան չեմ համարում,
Եվ մեծ հանցանք չէ այդ նոյին, կարծեմ,
Թեպետ և,— որդին Հորն հետևելով,—
Աշխարհը լցվեց դո՛ւդի իսկ արվեստով:

III.

Թո՞ղ Քաջք, ո՞վ Մասիմ, շթեապարեն,
Որպես այցելու քո քարայրներին,
Թո՞ղ Մուղաները բնակիչ լլինեն
Անմարդաբնակ քո մութ խորշերին.
Թող այսուհետեւ, թողած բոլորից,
Մերկանդամ մնաս քո նախնի փառքից,
Մունըր խոնարհած, ես ինձ բաղդավոր
Այժմ կարծելով, քան մի այլ երգիչ,—
Թեզ հարկ եմ տալի. դու մինչև այսօր
Սովոր ես աղոթ հմայքդ թովիչ,
Եվ թոթովում եմ, որպես երեխա,
Քե՞զ, Ազա՛տ Մասիմ, վերջապես տեսա:

IV.

Տեսա ահավոր քո ստորոտներ,
Ամպի մեջ կորած քո ցոլուն կատար,
Եվ առողջացան քնարիս լարեր,

Եվ քեզ երգ հյուսեց խոսքերով հարմար։
Որքա՞ն երկյուղած զգացումներով,
Աղոթք շրթունքին, դողդոջ ոտներով
Մոտեցել է քեզ Հայ ազգի որդին,
Որպես այցելու խեղճ Արտավագդին։
Կրծեցե՛ք, շներ, ժանգուտ շղթաներ,
Թող լույս տեսանե անիծյալ ժառանգ *.
Այժմ Հայաստան չունի դարբիններ,
Որ զորանային սոսկալի կապանք։

1865 թ.

ԽՈՐՀՈՂԱՎՈՐ ԳԻՇԵՐ

I.

Ա՛խ, ես չեմ կարող չփովել այդ գիշեր,
Այդ անո՞ւշ գիշեր, ուր իւաղաղական
Դաշըն խումբերով գալիս են ժամեր։
Ահա՝ լուսինը՝— ի՞նչ անմահական
Հիշում է դա ինձ գաղտնիքն այն անգին,
Որ ամենայն մարդ, որտի հատակում
Վարագուրելով, — գրախոս աշխարհին
Զկամի հայտնել և չէ հավատում,
Բայց թե երջանիկ այս անդորրության,
Եվ անպատասխան այս միայնության։
Ա՛վ, ի՞նչ մրմունչով այդպիսի գիշեր
Սովոր ենք ինկել մեր առաջին Սիր,
Թափել արտասուր, մաքո՛ւր արտասուր,
Հառաշել մենակ, որ շտեսնե՛ք դուք։

II.

Ահա նույն ուսին և նույն իսկ թփեր, —
(Ես երկրորդ անգամ տեսնում եմ դոցա).
Փոքր ցա՛ծ իշիր. նոր բացված վարդեր,

* Մեր պատմության մեջ կարգում ենք հետագա ավանդությունը — երբ Արտավագգ Ի-ը, ընդունելով թագավորության հառավարությունը, սկսեց զանգատի լուր հոր՝ Արտավագի երկրորդի դիմ, ասիրով. «Ես ի՞նչպես թաղավորիմ ավերակներին» (որովհետ Արտաշեսի մահին շատերը ևս մեղքըն յուրանց բառ սովորության), — այս պատճառով հանգուցրալ Արտաշես անիծեց Արտավագը և ասոց. «Ծիր զնալու ժամանակ թող քեզ բռնեն քաշքերը (շար սղի, զե), տանեն Մասիս սարի վերա, այնտե՛ղ մեսու միշտ և երե՛ք լույս շտեսնեաւ Հայ պառավելքը զրուցում էին, թե Արտավագդ մի այրի մեջ կապված է շղթաներով, և երկու շնչ հանապազ կրծում են այդ շղթաները, որ նա ազատովի և վերջ տա աշխարհին, բայց դարբինների երկաթ ծեծելու ձայնից դարձյալ զորանում էին շղթայքը։

IV.

Կարող են ամբող'ս սփռել քո վերա:
 Մո՛տ գնա, ի՞մ հյուր, նոքա անփուշ են,
 Ա՛յս, տե՛ս դու, ո՛քան ուրախ ժպտում են:
 Դեռ անցյալ գարնան, Մայիսի հնգին,
 Ես այստեղ էի, և հոգուս ընկեր
 Նույնպես այդտեղ էր. Նա նայեց վարդին —
 Եվ ես հյուսեցի փունջ նորան նըվեր
 Ա՛յս, առանց սիրո ի՞նչ է մանկություն.
 Ասա՛, նո՞ւին չէ, թի խորին ծերություն
 Թե սերը զնաց, զրկանք աշխարհի
 Ես հանձն կառնեմ, և գալո՛ւստ մահի:

III.

Ահա և հովիտ, Ի՞նչ պայծառ կանաչ
 Ճոճում է նորա մակերնութին:
 Ի՞նչ ծաղկի ազգեր և հետ, և առաջ...
 Ես շե՛մ նախանձում այլիս դրախտին:
 Եվ կապուտակը շքեղ երկնքի
 Իմ հաշտ հայացքը փաղաքշում է,
 Եվ երկու աշերն շիկացեր կուսի
 Եվ նկարո՛ւմ է և ինձ հիշո՛ւմ է:
 Թե՛ լսիրեիք զուր ունայնություն,
 Հարձերի աղմուկ, շռայլ պերճություն, —
 Դուք կարող էիք, մարդի՛կ մոլորդալ,
 Այս արքեցության մեծությունն զգալ:

1865 թ.

ՍՈՒԱԿ

Սոխակն երգեց և մոռացավ
Քաղցր քունը դիշերի.
Նա ողջ գիշերն արտասվեցավ,
Արգես սիրտը սիրողիւ

Եվ նա ասաց. ինչո՞ւ համար
Զկա ոլինչ պատասխան.
Եվ նա գիտեր զորա պատճառ.
Սերը չէ ինքնանավան:

1865 թ.

ՍԻՐԵԼԻ

Ծա՛նըր օրեր, զնայե՛ք շուտուկ,
Գնա՛ ձմեռ Հյուսիսի.
Գարուն, կանաչ ե՛կ թերուկ,
Թող արձակվի ոստն վարդի:

Ես գարնան մեջ հողուս սերը,
Սրախս լարերն թաղեցի,
Որ գարնան հետ քո պատկերը
Գովասանհմ, սիրելի:

1865 թ.

ԶԱՆԳԱԿ

Որպես գլուգոց բանտի ղոների
ինձ տաղտկալի է այդ զանդակի ձայն,
Գրել, մտածել ինձ տնկարելի.
Լոիր, ո՞վ զանդակ, կույր ծիսի նշան,

իմ հոգու լարերն թող ազատ շարժվին,
Որպես ազատ է իմ մտածություն.—
Սրտիս լսելի ես իմ մեծ Փրկչին
Ահա՝ երգում իմ օրհնաբանություն:

1865 թ.

ՎԵՐՋԻՆ ՀՐԱՄԵՇՏ

Ես ձի նստաւ Դեպի Մոսկվա
Ուղղեցի իմ ճանապարհ.
Մորս արտասուբն այլ չտեսա.—
Արագ գնաց երիվար:

Ո՞վ արտասուբդ, մայր իմ անգին,
Պետք է սրբե, ասացիւ—
— Ես կը մնա՞մ այն սուրբ օրին,
Մինչև դառնաս, իմ որդի:

Եվ գնում են հետզհետե
Եվ շատ օրեր, շատ տարիք,
Մորս արտասուբն ժովանում է.
Եվ շումի՛ ժամ երջանիկ...

1865 թ.

Այստեղ կմեռնեմ. այս բլուրն ահա
Կառնու դիակը ցուրտ կամարի տակ։
Տարերք կփոխվին և աշխարհ՝ կերթա—
Կերթան և բլուրն, և իմ հիշատակ։

ԿՐՈՆԱԿՈՐԻ ԱՂՅԹՔԸ

Անհաս ջորություն, որ ժավալվում էս
Անթիվ շնչավոր էակների մեջ,
Որ ամենայն բան տնօրինում էս,
Որ իրրե կանթեղ վառվում էս անշեղ։

Որ ստեղծել էս մարզը իմաստուն,
Քան այլ շնչավորք քո հրամանի,
Որ բաշխել էս նուրբ բանականուրյուն,
Մինչ հայացք միսել անդունդք երկնքի,

Որ կարողապես տվել էս Հանճարին
Քափանցիլ ստորինք, քննել և զննել
Ընդերք տիեզերքի, սիրել բոլորին,—
Տո'ւր հոգուս գալոցքն այսօր գուշակել։

Եղեմի դրա՞խտ, թե խավա՞ր գեհեն՝
Պիտի հաստատես նորան օթևան,
Թե այս վա՞տ դամբան... Ո՞վ էս հողեղեն...
Խլո՞վ բացեցի դուռն անմահության։

1865 թ.

ՄԵԾԱՍՈՒԲՆ

Այս ի՞նչ իշխան է և ի՞նչ մեծատան,
Որ ձեզքեց յուր աղջն, մատնեց սուրբ արյուն.
Փոխեց կրոնից, պատառեց նորան,
Եվ զափաղանի հարվածների տակ,
Տվեց մողովուրդը Գալին ինքնիշխան.—
Ստացավ անփառը գործի մրցանակ:
Եվ դառն արտասուր Հայ ծնողների
Քիւց որպես ծով. նորա չգտան
Խորթ կրոնի մեջ յուրյանց հայրենի
Վարդապետություն — տիսրեցան, մեռան,
Այդ ի՞նչ իշխան է, — ինձ զուր ասացե՛ք, —
Հապա երեսին զորա թքեցե՛ք:

1865 թ.

ԻՏԱԼՈՒԺԵՐ ԵՎ ԻՏԱԼՈՅԻՔ

(Ճիշտպարզուն դեպի անցածը)

I.

Ինչո՞ւ, ինչո՞ւ իտալացիք,
Չէ թնդում քաղցր երգեհօն,
Ինչո՞ւ, քնքուշ իտալուհիք,
Թողել եք ձեր պիանոն:
Մոռացել են դոքա ասես
Փափուկ սեղը կանացի,
Սրում վրեժ, կարիճի պես,
Դիմում են վրանը ոսոխի:
Արակես տան մեջ, նույնպես կովում
Կանգնած են հեղ և հպարտ,
Գնդակներին կուրծք են ուղղում,
Եվ շրթունքից չէ՝ դնում վարդ:

II.

Զարմանո՞ւմ եք, ինչ ասում եմ.
Թե զուր նոցա տեսնեիք

Խաղաղ օրով, երբ քաղցրադեմ
Բռնած կիթառն գեղեցիկ,
Փափուկ մատերն արծաթելար
Նվագարանին դիպէկով,
Պարտեզի մեջ ծաղկադալար, —
Դուք կլսեիր անխոռվ
Սիրո ձայնը, սիրո հոգին,
Հյուսած սրտի թերերից,
Սիրե՛լ դիտե Խոտալուհին,
Ջրկված բոլոր աշխարհից:

III.

Շուրջ ճակատով շուշանագեղ
Ծածանվում են թուխ մազեր,
Մե սաթի պես հոնքեր շրեզ,
Վառ աստղի ջուխտ աչերի
Դուք լսեցե՛ր, երբ զրուցում են.
Ամբողջ զրախտ փափկության
Զեր սրտերը կախարդում են,
Որպես տավիզն էույան
Եվ սոսիսի զսոռող հոգին
Մի՞թե շպետք է նվաճի,
Եվ հաղթության արժավինին
Դոցա առջև տարածվի:

IV.
Խոտալուհի՝ և ձեզ նման
Արևելքում մի անգամ
Զեր քույրերը դինվորեցան
Թշնամու զեմ անգամ,
Արյան զնով Հայաստանին
Գնեցին նոքա փրկություն,
Եվ թաղեցին հողի ծոցին
Անմեղ ծաղկած կուտություն:
Մեռան նորա. բայց կմեռնի՝
Նոցա գործի հաղթանակ:
Դուք դմ' պի դաշտ, մենք կենդանի
Անինք նոցա հիշատակ:

V.

Իտա՛լիա, աշխա՛րհ փառքի,
Դու, քո կուրծքը զրահով
Ամրապնդած, հաղթանակի
Կամիս պսակվել դափնիքով:
Մի՛թե խոպառ պետք է ձնշվի
Այդ ազգային զորություն,
Եվ առվի պես արյունդ թափվի,
Հերոսներիդ սուրբ արյուն
Մի՛թե ձեռներն, մի՛թե սրեր
Քո ոխերիմ թշնամու

Պետք է բերեն բեղ նոր ավեր,
Եվ ստրկանաս դարձյալ դու:

VI.

Ինձ ասացե՞ք. ո՞վ ձեզանից,
Արի մեջ մարդու սիրո կա,
Չխեղգվելով արտասուբից,
Կարող է մնալ անդգամ,
Տեսանելով այս ողբալի
Սրածության ավերած,
Եվ սրբությունն իտալիայի
Նշավակով անարդած:
Անիժում եմ չար մամանակ,
Երբ թուրբոնը գիշատիշ,
Տնկեց այստեղ յուր գրոշակ
Եվ խաբերա՛, և մատնի՛շ:

VII.

Մի կա՞մք, մի շո՞ւնչ ձեզ օգնական,
Առե՞ք սուսեր — և հառա՞չ.
Դուք սիրո ունիք ասպետական,
Հարձակվեցե՞ք ձախ ու աջ:
Ազնիվ գործին ինքը Աստված
Ռւղարկում է յուր վահան:
Իտալիա՛, փա՛ռք անմոռաց.

Կթնդա ձայնը փրկության:
Նորից, նորից անուշահոտ
Կարձակվի քո մրտենին,
Նոր արշալույս, նոր առավոտ,
Եվ ավետյա՛ց ձիթենին:

VIII.

Եվ անցածիդ գեղեցկություն
Յուր գագաղից կոարթնի,
Միայն ավե՛ր և պղծո՛ւթյուն
Ավստրիան կրնկունի:
Իտալիա՛, դու զորավոր,—
Եվ կեցցե՛ն քո զավակներ,
Իտալիա՛, ես հոգեոր
Բերում և քեզ իմ տաղեր:
Եվ հայի մեջ կա կհնդանի
Ազատության արձագանք,
Եվ թո՛ղ շասեն, որ հայն լունի
Ո՛չ ազատ կամք և ո՛չ կանք:

1864 թ.

Ա. ՆԱԶՅՐՅԱՆՑԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Անձեռագործ դու մահարձան քեզ կանգնեցիր,
Ոչ հոգանյութ, որպես երկաթ կամ որձաքար.
Հըգոր գըրշով, սուրբ վաստակով և անձանձիր
Շունչ կենգանի և հետ մահվան հանդիսացար:

Ահա նոր Ազգ և նոր Լեզու յուր ձիթենին,
Քո քրով բուօած, քեզ է բերում, ո՞վ Սահեփանոս
Խաղաղ մնա՛, մի՛ վրդովվիր. քոնն է դափնին,
Խավարի մեջ մեզ լույս ծագող Պոռմեթեռա:

Աշխարհ ծնար, և աշխարհիս դարձար մշակ,
Բայց չը տհասր այս աշխարհից անդորրություն.
Աշխատավոր մարդկան բաժին է փշյա պսակ,—
Ահ, քրտնաշան ոսկրներիդ խաղաղություն:

1879 թ.
Մոսկվա.

ԲԱՆԱՍՏԵՂՈՒ ԴԱՄԲԱՆԻՆ

(Նվիր Մ. Սադարյանցի հիշատակին)

Ահա արևմտւոք և օրհոսական,
Որպես զիշերվա թանձրամած խավար,
Վրա տվին ինձ, մահինս իմ կալան.
Ոչ մի հուզս չմնաց նոր կյանքի համարտ
Կյանք, անուշ երազ մատաղ օրերիս,
Սիրուն ցնորքիդ անցավ ելեէջ.
Եվ վերջին լարը մեռնող քնարիս
Պատըռվեց, որպես սիրտը կուրծքի մեջ
Երբ որ ինձ թաղեք, մի՛ արտասպագին
Սաղիկներ ցանեք դագաղիս վերա.
Ի՞նչ հարկավոր է անշունչ դիակին,
Որ մահից հետո սիրո կուռք դառնաւ
Մանուկ օրերից, հուսով սիրավառ
Երգ ես երգեցի ոգնորության,
Բայց ինձ չըլսեց գոռող այս աշխարհ.
Վա՞յ ձեր վարդերին, որ ահա լը կան:

Եվ թող քնությունն՝ միակ գեղեցիկ,
Ողջունե երգչիս վերջին հրաժեշտին,

Եղ երասխաջոր մարգերի ժաղիկ
Անթառամ իւրնկե հայրենի այգին:

Ազատ թուխպերից, թող պայծառ շողա
Սրեղն երկնքին միջօրեական,
Եղ հա՛վերծ մատաղ կյանքի պես խաղա,
Եղ լուսավորե իմ կորած դամբան:

1890 թ.
Մասկու,

ԶՈՂԵՐ

Մեռավ իմ մուղան, հանգավ և կրակ.
Անտառը լցվեց չոր տերեներով.
Երկինքը ծածկվեց, փափակ տրեպակ.—
Ել ես չե՞մ ապրում ուրախ երդիրով:
Եվ աստեղազարդ բոլորակ զմբեթ.
Եվ արծաթափաց ջրերի խոխոչուն
Եցիս շնն խոսում բանասուղձի ձեռ,
Եվ ոչ այցելում ավերված իմ սուն:
Այժմ ինձ մնաց միայն փշրանքներ,
Մայր մտավ աճա և նշուիլ վերջին,—
Հանում եմ զրահս, և դեն, և զարդեր,
Հանձնում եմ զորանց մանուկ սերնդին:
Բայց թող հայկական որդիքն իմանան.
Որ իմ սուզա նոցա զիճակն է եղել.
Որ երբեք վախլուկ զինվորի նման
Թշնամուս առջե վահան չիմ ձգել,
Չեմ երկրպագել ես ոսկի հորթին
Եվ ոչ կուռքերին պաշտել օտարի.
Այլ միշտ հոգեսր կարուս ծարավի,
Տվել եմ արժանն ամեն մի ժարդին,
Չեմ տաշել զաղաղ, ու մատաղ կյանքի

Կանալ ծառի պես ծաղկել են հուզաեր։
 Սրսկել եմ դորանց ջրով կենդանի,
 Ար գալոց աղքին լինեն պտղաբեր։
 Եվ հոգուս վրա այսօր խսկ խավար
 Կիտվել է որպես մըրըրիկ ծովի։
 Չորս կողմս ծիծաղ, և խնջույք, և թառ,
 Բայց ահա և ձայն կալանավորի։
 Մաշված ու ղեղնած դիակի նման
 Լախտեր շափելով կաշեհան մեշքին,
 Քաշում են անպարտ, անմեղ Հիսուսին...
 «Ազատ թարաբրա՝ գող և ավազակ։
 «Ազատ և ծաման»։ Վճռեց Եվլուպան։
 «Խեղդեցեր դրան, ջարդեցեր կզակ։
 «Որ այլես մեղ բողոք չկարդա»։
 Եվ թող հայկական որդիքն իմանան,
 Որ և այժմ, կանգնած հայրենյաց շեմքին,
 Լարում եմ ջղերս, որ շթուլանան
 Դիմակաց լինել ահեղ փորիրին։
 Քշտիր կռներդ, կտրիճ աննման,
 Ա՛ռ սուր, հրացան, քլունդ ու կացին,
 Դժվար ճանապարհն անցիր անսասան։—
 Աշ ու ձախ քանդիր, թե որ արգելք կան։
 Ահա նորածին և մանուկն եկավ՝
 Սուրը ազատության տաճարին ընծա։
 Մանուկ Հայաստան տեղից շարժվեցակ
 Դիմեց համարձակ դեպի Գողգոթա։
 Եվ գարնանալին ծաղկազարդ դաշտեր

Փոխսկեցին կտրմիր. կապույտ ծիրանի.
 Կարմիր փոխսկեցին ծովի ալիքներ,
 Տաշտախիլ գարձավ ալզին հայրենի.
 Ա՛Յ, մի՛ վախենար թե նահատակի
 Գըլուխը թուավ դահճի երկաթով։
 Կը գա ժամանակ, երբ հայթանակի
 Նա երդ կը հնչի դափով, ծնծղայով,
 Իր զա ժամանակ, երբ ամեն մի դուռ,
 Տնկած իր առջե թարմ արմավենին,
 Փառավոր նորան կը կանգնե մատուռ
 Եվ անուշանոտ գոհերի բազին։
 Ահա նորածին և մանուկն եկավ
 Սուրը ազատության տաճարին ընծա։
 Մանուկ Հայաստան տեղից շարժվեցակ,
 Դիմեց համարձակ դեպի Գողգոթա։
 Հենց նահատակի սուրը ոսկորներից
 Նոր լույս է ծագում աշխարհիս վերա։
 Հենց Գողգոթայի լերան կատարից
 Կանգնեց նոր Աստված, և անմեղ արլուն,
 Դեպի կյանք մարդիկ կանչելով մահից,
 Տարավ վարդագույն նոր պսակ մշշա—
 Այսքան հազթող է արյան զորություն։
 Հյութ աստվածեղին, հելուկ լուսեղին,
 Եվ ծիրանածին գրոշ վրկության։
 Թո ամեն մի շիթ, ամեն մի հյուլեն,
 Նոր դար է կազմում ստրուկ մարդկության։
 Եվ ամուր բանտեր, քարե պարսպով,

Գիտես սաստկությամբ թափալի գեաին.
Կոռներ և զաշտեր սղողել ծովով.
Վանդակից հանել անձար թշվառին։
Ահա նորածին և մանուկն եկավ
Մուրը ազատության տաճարին բնծա.
Մահուկ Հայաստան տեսից շարժվեցալ.
Դիմեց համարձակ դեպի Գողգոթա։
Փայլից արելք նոր արշալույսով,
Անձես շրացավ և ժանդ հնության.
Նորոգման սպին, կլանք ավեսելով,
Արյունից կրոնց պսակ հաղթական։
Նահատակները փռվեցին զեանին.
Գետինը կակդեց նոր սերմի համար։—
Նոր գործը մնաց մեր նոր սերնդին։—
Եվ այսուհետեւ առաջ անդադար
Ահա լուսածին և մանուկն եկավ,
Գեղեցիկ՝ սրպես ազատն ինքն աստված։
Արարի բազկով շինել սկսավ
Ազգապահության հրաշալի շինված։

1890 թ. Մոսկվա.

ՊԱՆԴԱԲԻԿԱՏ ՀՈՐԻ

(Նվեր Ռ. Խովարյանցի հիշատակին)

Հողի կապանքից հոգին ազատված,
Երկնքի անվերջ տարածության մեջ,
Թոշում էր ուրախ, նորան զրկարաց
Ազունում էին աստղերը անշեց։

Եվ քերովբեներ այնուել վեցթեյան
Հանգիպում էին խընկով, բուրվառով։—
Հանկարծ ցոլացավ փայլակի նման
Աթոռն սոկեղեն, լի գոհարներով։

Հանգիստ էր տիրում մշտնչենավոր
Մարտիրոսների օթեաններում.
Եվ սըրանց գլխին պսակ փառափոր,
Ինչպես արելք, հրավառ շողշողում։

Աահում էր այնուեղ և կենդանի չուր,
Որպես երեխի արտասունք մաքոր.
Եվ զրախտահազն թըփերի միջին
Աւագոս էր ասում ամենակալին։

Այսպան կախարդիշ, չըաշալի պատկեր
Ու մի հողեղին, մի մահկանացու
Յուր կյանքի օրին երբեք տեսած չէր,
Եվ ոչ մեծություն զգացել աստուծու:

Եվ մտավ հոգին խոստացած աշխարհ,
Ուր մեր աշխարհի ոչ հոգս կա, ոչ վիշտ,
Ուր և մեծ, և փոքր միմյանց հավասար,
Եվ Աղոնայի * ներկա նոցա միշտ:

Եվ տըխրեց հոգին հողեղին մարդու,
Եվ շընտելացավ Դրախտի վարդերին,
Ուզում էր թողնել վիճակ կենսատու,
Ուզում էր ասել յուր հըրեշտակին,

«Թո՛ղ ինձ, թո՛ղ, գընամ դարձյալ այն կայան,
Ուր ցավ, արտասուր և տառապանք կան,
Ուր քաղցրության հետ կա և դառն բաժակ.
Ուր օձն է սողում և վարդենու տակ!»

«Եսր ունիմ սըրտումս, լայն այս երկնքից.
Ամփոփել յուր մեջ չէ կարող դըրախտ.
Խավար գիշեր է երկինք աստղալից,—
Այնքան լուսավո՞ր երկրային իմ բախտ:

«Թո՛ղ ինձ, թո՛ղ, գընամ դարձյալ այն կայան,
Ուր ցավ, արտասուր և տառապանք կան,
Ուր քաղցրության հետ կա և դառն բաժակ.
Ուր օձն է սողում և վարդենու տակ!»

1891 թ. ապրիլի 9.

* Աղոնա կամ Աղոնայի, բառ երրայերին՝ նշանակում է աստղած:

ԱՆԳԻՆ ԳՈՀԱԲ

I.

Ափսո՞ս, աղավնյակ, որ գու շես ծընած
Աշխարհստեղության վեցերորդ օրին,
Երբ ճարտարապես արարին աստված
Կանանց փափկությամբ նկարեց Եվային.
Դո՞ւ այն ժամանակ կլինեիր պատկեր
Եվ չնաշխարհիկ սիրո գաղափար.
Դո՞ւ անամպ երկինք, նա ամպ ու ստվեր
Եվ ոչ հողեղին ոք քեզ հավասար:
Որի սեաթույր մազերը կիտված
Սալք-ծալք ցրված են բարակ ուսերով,
Եվ վառ աշքերի դյութող հայեցված
Երբեմն սրտակից փայլում է սիրով,
Բայց և երբեմն, ամպի պես թխպած,
Կրա՞կ է թափում այրող կայծերով:

II.

Անարատ որպես լընքնձած ցորեն,
Մեղսապարտ երկրի մաքուր քավարան,
Ա՛խ թե մեղքերը րիզ չպաշարեն.

Եվ դու մնաս իմ միակ զոհարան,
Թեթև փշելով մաքրափայլ օդի,
Քո անուշաբույր շունչն եմ ես զգում,
Եվ խոխոչաձայն խաղում առվակի
Քո մեղմ, սիրալիր զրույցն եմ լսում,
Ծառի տերեներ, հեղիկ շարժվելով,
Նազուկ ոտերիդ հիշում եմ շարժված.
Եվ ծաղիկները, քեզ բարեկլով,
Ուզում են ասել, որ դու ես աստված.
Դու համեստ աստղիկ, ամաշկուտ լուսին,
Դու իմ խնդություն և վիշտ իմ խորին,
Դու իմ պայծառ օր և տիխուր գիշեր,
Իմ միակ կյանքում դո՞ւ միակ ընկեր:

1891 թ.
Մոսկվա.

Հ. ԵՎ. Թ. ՏԵՐ-ՀԱԿՈԲՅԱՆՆԵՐԻ
ՀԱՐՄԱՆԻՔԻ ՔՍԱՆՀԻՆԳԱՄԵԿԻՆ

Կես գիշեր է, կուռ սենեկուռ
Հանդարտ բայլով, փոքր ինչ զբաղված,
Ման եմ զալիս. և անկյունում
Տհանեմ. քնարս պատին կախած:

Տերկի պես դողդողալով,
Ես մոտեցա հին ընկերիս.
Խելքըս թռավ. բայց մեղմ ձայնով
Կանչեցի ես. ողջույն քնարիս:

Առա նորան և խնդագին
Փայտայիլով, լավ մաքրեցի.
Կարծեմ, լարերը պակաս էին,
Բայց տակալին դեռ արծաթի:
Եվ արծաթի տարեղարձին
Այս տողերը ինձ հնչեցին:—

Քաղցավոր զույգ. որ մտաք աշխարհ
Սիրտ սրտի հետ և միաբան,
Սիրով գնացիք ձեր ճանապարհ,
Լուսապայծառ ասողի նման:

Որ մանկության առավոտից
Արդար վաստակ եք վաստակել,
Որ անտրառունչ այս աշխարհից
Երբեք աշխարհ չեք անիծել:

Եւ՛ր գեղեցիկ, սե՞ր հոյակապ,
Ամեն տեղ քո շունչն եմ լուսում.
Դու մարդկության հզոր շաղկապ,
Ամեն լավ բան դու ես ստեղծում:
Եվ այդ Զեր սերն Աստված օրհնեց,
Նայեց երկինք և հաշտ աշքով.
Թեթև զեփյուռն Զեղ ողջունեց,—
Եռաց և կյանք բոլոր շնորհով:

Արկելքի շողքը շողաց
Աղամանդի գոհարներով.
Շողաց և շաղք շողշողուն
Մարգարտափայլ կաթիլներով:
Շողաց և ծովըն ծիրանի
Երկու շքնաղ նավորդի հետ.
Մինը պասկյալ իսկ թագուհի,
Մյուս անխոնչ ճարտարապետ:
Քա՞զ նավորդներ. Զեր գալն բարի.
Զեկ գեղեցիկ պսակ արծաթի.
Այս օր հանդես ամուսնական,
Կեցցե՛ք, կեցցեք այժմ և հավիտյան:

Թոշում էի ևս հզոր թևերով, —
Չըկա՞ր ինձ արգելք, չըկա՞ր բռնություն:

ՀԱՆԳԱՄ ՔՆԱՐ

Այսպես, իմ քնար, այսքան ժամանակ
Սիրելով հանգիստ և դատարկություն,
Իբրև ժայռերից սեղմված մի գետակ,
Մնացիր անշարժ Խոսնա՞կ դու շարժուն,
Չըհընչց լարերդ և ոչ մի դաշնակ:

Ապրում եմ մենակ և առանձնացած,
Անմասն խառնաձայն ըգբոսանքներին.
Ապրում եմ, որպես մարդերից փախած:
Աչք չունիմ նայել աշխարհիս կյանքին,
Տատառկի նըման տապալված զետնին:

Ո՞հ, մի կանչեք ինձ, որ ձեզ բան Երգեմ,
Որ ձեր լսելիքն երգով փայփայեմ.
Թե ինքն Սպոլոն նորից փունջերով
Զարդարեց ձակատու, ևս, հետ քաշվելով,
Կասեի նորան. «Մընա՞ս դու բարով»:

Անց կացան օրերս, անցավ և դարուն,
Երբ գեղեցկացած մանուկ ուժերով,
Իբր սըրաթոիլ արծըվի կորյուն.

Ահա և այս թերթս, սեղանիս վիրա,
Առաջ որ զըրիլու թաթախում էի, —
Դառնում էր իսկույն կենզանի վըկա
Սըրտիս գեղմունքին, և մարգարեի
Խոսում էր լեզվով, որ այժմ չկա:

Ա՛խ թե և մեր սիրտն ծառի պես լիներ, —
Չըմեռը կանաչ տերեից թափվեր.
Անառը որ գար, — մանուկ աշխաժուի,
Բանաստեղծական ելեջներով
Յուր թմրությունից նորից ըսթափվեր:

1892 թ.
Մոսկվա.

ՎԵՐՋԻՆ ՓԱՓԱԳ

Երբ ցուրտ դիակդ, կյանքից զըրկված,
Մըտնի տապան, իմ անգին,
Վերջին շունչըս քեզ եմ նվիրած,—
Եվ ինձ տեղ տուր քո կողքին:

Թո՞ւզ Գաբրիելի փողը ճնշե,
Թո՞ւզ գա անեղ դուռտաստան,
Իմ նազելի, մեզ այդ փուլթ չէ,
Սիրո զըրկում անոտան:

Թե ինձ հասնի երանոթյուն
Եյն լուսեղեն աշխարհի,—
Մեր հոգի ծածկ, հողե անկյուն
Քո՞ղոք ինձ բան մասն անմահի:

1893 թ.

ՕԳՆԵՑԵՔ

Արև բացվեց սարի ծերին,
Հետն էլ գարուն վարդը ձեռին.
Բայց տիսուր սիրոս չգտավ մի լար,
Որ թշվառին երգեր «մի՛ լար»:

Քոռ աշբղի պես, շոնդորը քոքած,
Որբերի խաթեր դռնե-դռու ընկած,
Հայոց հին երգիշն հին երգ է երգում,
Որ թե սիրում եք Փրկիշն երկնքում,
Առեք նրա հաշն և մտեք աշխարհ,
Օգնեցեք որբին, այնքան վշտահար,
Աստված բարաբյաթ տա ձեր տուն-տեղին,
Զեր կալին, հանդին, թաղին ու գեղին,
Զեր բարեսեր կյանք և աղնիվ ալյուն,—
Ասացեք, այս լէ՝ մեր անմահություն:

Արև բացվեց սարի ծերին,
Հետն էլ գարուն վարդը ձեռին.
Բայց տիսուր սիրոս չգտավ մի լար,
Որ թշվառին երգեր «մի՛ լար»!

1898 թ. գեկտեմբերի 25.
Մոռկլա

Հայոց պետք

Տամանակարգից մեջ

Հառներորդ տարին ձեմարանիս հիմնադրության աճա՛րական է, մի ցանկալի տպավորություն բերելով բոլոր քարյացակամ սրաերին Այս՝ ՀԽՍՀՆ ապրի ապրել է նա զեղծցիկ հառաջաղակմանթյամբ։ ՀԽՍՀՆ տարի զնացել է յուր դժվարին և լի՛ ձախորդությամբ ճանապարհը։ Գոհությո՛ւն նորա անցյալին, որ կազմել է մեզ մի գալարուն ներկա, և գոհություն նորա ներկային, որ տալու է մեզ մի տուազել նախանձելի ապագա։

Դեռարո՞ւս պատանիք, ճրագա՞ն եղե՞ք այդ սուրբ ասպարեզի վրա, պատրաստեցի՞ք ձեզ որդի մարդկության և ազգության. ո՞հ, քանի՞ մեծակշիռ էր ձեր մատադ կյանքի խորհուրդը, թի ձեր թանկապին ժամանակը. գործ զնեից նորա զարգացման և հաստատության, քանի՞ բարձրանալու էր ձեռարանը արժանի պարծանքով, որ պատրաստ է օժանդակել ձեզ ամենայն միջոցներով, եթե միայն կամեիք ուսանել ազնիվ ու անխոռվ աշխատասիրությամբ։

Ազնիվ սրաեր, լցվեցն ք ամենաքաղցր շոշափմունքով պատրաստ կացեք բերել ձեր անկեղծ չնորդակալիքը այդ վա-

ուավոր օրի տոնախմբության, զիտե՛ք, — սիրո և երախտագիտության զգացմունքն է, որ մեծարելի է կացուցանում ժարդուս անունը — Ծնորհակա'լ լինինք խոսովանող սրտով պատվական հողարարձուիս Խաչատրո Հովակիմյան Լազարյան, որ լուսավորաց գործակցությամբ բարեկարգել է վիճակը մեծարանիս և ոչինչ չ' խնայել նորա պայծառության համար թե նյութապե՛ս և թե բարոյապե՛ս:

Խաղաղությո՛ն Զեզ, ազգասի՛ր Հիմնագիրը Շհմարանիս, Զեր անունը անմոռաց է, Զեր զործը անմահ, որ առա վերստին անմահանո՞ւմ է այս տոնախմբության օրը:

Եօախտազետ հնզինակը

1864 թ. սեպտեմբերի 10.

Ազնի՛վ բնկեւ, շմոռանաս,

Անդավանան, զերմ սիրով

Ես սիրել եմ իմ հայրենիք, —

Դնա' եվ դու նո՞յն շավիղով:

(Երգ մեռ. Հայրենասիրի, 202 երես)

ԱՐ ՌՆԹԵՐՑՈՂԸ

Թե ծանր սիրուցին հասարակության
Դարձավ քո համար նյութ մտածության,

Թե սրտիդ վերա ծանրացավ ներկա,
Որպես քո կյանքի մի մեծ առարկա,

Քե՛զ, ազգի անդամ և ազգի որդի,
Հմոնի վիշտը առաջարկեցի:

ՆԱԽԵՐԴԱՆՔ

Довольно людей кормили сластями.
У них от этого испортился желудок;
нужны горькия лекарства, едкая ис-
тина.

Лермонтов
(Гер. наш. вр.)

I.

Ժամանակակից գրում եմ լեզվով,
Որ ամենայն մարդ կարդա, հասկանա,
Որ շնայք այլ ակնօցներով,
Որ յուր սեփական քննությունը տա.—
Կյանքը ինձ ասաց. Մանո՛ւկ, քեզ դափնի,
Գնա՛ նոր խորով բան մի դրուցեւ,
Եվ լաբիրինթոս մութ գրվածքների
Համցա՛նք համարիր ազգիդ նվիրել:

II.

Եվ ես հնաղանդ այդ առողջ ձայնին,
Զկամիմ նմանիլ անառակ որդուն
Զոհում եմ գրիչս կենդանի լեզվին,

Որքան ձեռնհաս իմ կարողությունն
Մանո՛ւկ հրաշագեղ, թոթո՛վ ոգելից,
Գու աշխարհարար մեր սրտի թարգման,
Դո՛ւ մեզ հարազատ ծննդյան օրից,
Թո՛ղ քեզ նախատեն մարդիկ հնության,

III.

Նորա տեսնում են միայն թերություն,
Միայն զեռ անհյութ, մանուկ խակություն.
Չեն լսում ձայնը մարդարեական
Նորա ապագա ներդաշնակության—
Նա ևս կը բացվի, կաճէ զվարթագին,
Կը ժանրաբեռնվի որպես պերճ ամառ,
Եվ քնքուշաշարժ սրտի լարերին
Եվ գտնե և խոսք, և հնչյուն հարմարի

IV.

Զկամիմ հարկ տալ անպետք ապրանքին,
Այն ոլորածո ճարտասանության,
Ես համարել եմ նորան մահու գին,—
Ամենամեծ գործ բթամտության,
Նորա մեջ տեսա մոռայլը հնության,
Բայց երբեք շտեսա ներկայի հոգին.
Խորամանկահյուս բաներ խոսեցան,—
Ես հետևեցի պարզ լոգիկային...

V.

Եվ օդ սղոցել կացնե բառերով,
Եվ միջնադարյան տարածել փոշին,
Բողոքում է խիզճս երկսայրի սրով.
Այդ սեփական չէ մեր ժամանակին,—
Ալեկոծվեցան ծերերն հնասեր,
Փրփուրը ժայթքեց մորուքի վրա.

«Վա՛հ, անմիտ կարծիք, զա՛հ, անմիտ խոսքեր,
Հե՛, անտես առնենք լեզուն Աղամաս,

VI.

Որդեր եռացին և լայն բացվեցան
Նոցա առաջն դժոխքի դռներ,
Եվ, ո՛վ կատաղի մոլեռանդության,
Եկա՞ն, կիտվեցան նախանձի լեռներ.
Լեզո՞ւ սրեցին, աղե՞ղ լարեցին,
Որ առատ-առատ նետեր արձակեն.
Դատապարտելի գործ ձևնարկեցին —
Ինչո՞ւ — որ աղդին խավա՞ր ժողովեն...

VII.

«Ինելքըգ ցնդել է, լեզվագա՞ր լակոտ,
Անպետ ապրա՞նք է ճարտասանություն»:
Եվ նոցա գոռոք զըզըրդում է օդ,
Որպես մրմոռ քամու սոսափյուն...

«Թթամտությո՞ւն», գոչում են ծերեր,—
Անեծք է վիժում անդուն բերանից.
Եվ մորուքների մի կանգուն ձարեր
Դոխում են որպես ահազին հողմից...

VIII.

Անխռով եմ ես, եթե իմ վերա
Ամբաստանության գան դիզվեն բեռներ.
Ե՞րբ են բան տեսել, ինչպես որ նա կա,
Ճշմարտութենից վշտացած ալքեր:
Կորի՛ր, Զարասէ՛ր, լոի՛ր, Ամրարի՛շտ,
Ես պիտի ճեղքեմ քո նենգ մեքենան,
Պիտի խորտակեմ սրտիդ սատանան,—
Պիտի ժամանեմ ես նավահանգիստ:

IX.

Ո՛չ քեզ, ո՛վ մուղա, բարձր Օլիմպից
Կանչում եմ այստեղ, Հողանյութ երկիր.
Դու ինձ մի՛ հյուսիր պսակ դափնիրից.—
Այն քնարներին կիսաթել շնորհի՛ր.
Իմաստակների ցնդած ուղեղին
Դեռ ունիս աղդել թովիլ զորություն,
Ճաշի՛շ, ո՛վ մուղա, — թո՛ղ թևագործին,
Թո՛ղ հարբեն — հետո ի՞նչ ճարտարություն.

X.

Առասպելական կեղծյալ տիտաններ
Թո՞ղ խօսականի ընդունին պատկեր,
Հրեշների շարքն երևութանան,
Եվ բոյոր ցնորք լայնափոր հնության:
Վեհափա՛ռ ոսպէ՛ր, քնա՛ր լարեցեր,
Ո՞չ ձեր պապերը Հոռմ փրկեցին.
Առանց հանարի զուռնա փշեցե՛ք,
Թո՞ղ աշխարհ լսե, թո՞ղ փառք տա երգին:

XI.

Մազրածուների դործերն ցավագար,
Աղաշում եմ ես, ժամ մի դազարեն,
Որոնք համոզումներ, ուխտյալ գաղափար
Այսօր պնդում են, որ էզուց հերքեն.—
Անտաշ մրոզներ, որ գարշ քսություն
Հանապաղ ոնիք ձեզ հազորդակից,
Կապեցեր ոսկով ձեր սովուն լեզուն,—
Առափել օգուտ ունիք գորանից:

XII.

Անցավ ժամանակն երևակայել
Ավագուտ գաշտում զալար ծաղիկներ,
Եվ գաղարեցե՛ք ցնորարանել
Հայի մեծության ոսկի երազներ:

Մեք խավարի մեջ մինչ գլուխ թաղած,
Կամինք հասանել երկնի բարձրություն,
Մեք բարոյապես անշափ հնտ ընկած,
Սխում ենք մեզ խունկ և հարգու անուն:

XIII.

Մեք զարմանում ենք և ժափ ենք տալի,
Որ Հայը զարթեց յուր երկար քնից.
Բայց մենք շնոր ահանում այն սարսափելի
Փոսք, որ նորան փորում են տակից.
Եվ մեզ զուլով, և մեզ խարելով,
Չե՞նք բացում արզյոք դուռը կորսայան,
Ո՞չ անմտությամբ, ո՞չ շար ձևոներալ
Զգում ենք կամուրջ մեր թշվառության:

XIV.

Մաշեցինք մեր խելքն անօգուտ գործով,
Գիշեր ու ցերեկ անպատճեց անցան,
Մենք շխրառվեցանք անցածի սխալով,
Ճեռնարկեցինք մենք ամենայն բան,
Մակեցինք գրիչ ոսկու ճաճանչին,
Վաճառեցինք սիրտ և ազնիվ հոգի.
Լոհցավ մեր մեջ իիդնը մարդկային,
Եվ մնաց ավեր հյանքը հայ ազգի...

XV.

Եվ աղք գոշեցինք, և օդի վերա
Գրեցինք հիմքը նորա կրթության, —
Եվ մենք խաբեցանք, որպես երեխա,
Եվ Հայի վերքը մնաց անդարձան
Խավար գրվածներ, կաղ, կույր, բռնադատ
Բանաստեղծություն և թարգմանություն
Տվեցինք Հային, և նա հուսահատ
Փակեց ականջներ և մտավ յուր տուն։

XVI.

Զգեց'ք փետուրն աղավնեական,
Մերկապարանոց եկե՛ք դուք հանդիս, —
Թո՛ղ լավ ճանաշե աշխարհ ամենալյն,
Ար ագուավ եք դուք կամ բու սեատես
Այստեղ կտրում եմ իմ խոսակցություն, —
Ես շտապում եմ իմ վեպքը պատմել.
Մենք կհանդիպենք մինչ ի տեսությո՛ւն,
Զեր հետ հաշիվը դեռ չէ՛ վերջացել...

XVII.

Ո՛վ դու Մոսկվա, քո փողոցներում
Արգեն խոնում է հանգեսն շտապով.
Այլք ժողովզում են մագաղիններում
Պատրաստել տոնին ընտիր ճաշկով

Նորագույն զարդեր, փողապատ, ձեռնոց,
Քորոց, նուրբ բեհեղ, շալեր մետաքսի,
Պատմուման, սալոպ, լոռնետ, հովանոց,
Թաշկինակ բատիստ, մանյակներ ոսկի,

XVIII.

Քողեր մեծարվեստ ասեղնազործած,
Բուռնուս գունդգույն վերջավորներով,
Եվ նոր զիարեկներ ոսկեթել նաշխած,
Եվ բարակահյուս ժապավեններով.
Եվ ամենայն բան, և ամեն լաթեր,
Որով պարապ մարդ կարող էր պճնել,
Եվ որ գեղագետ, և որ նորասեր
Ֆրանսիացու խելքն է ստեղծել.

XIX.

Իի են բազմությամբ ժողովարաններ:
Թնդում է թատրոն բաղցր երաժիշտով:
Աշ-Ճախ թերելով ճոճում է ոտեր
Դերասանուհին, — ի՞նչ արվեստով:
Մափահարությունք ցածից, վերեկց,
Խլացնում են մարդուս լուելիք,
Եվ թատրոնասերք բաղկաթոռներից
Չոնում են առատ սիրո հետ դափնիք:

XX.

Բայց նայի՞ր, Մոսկվա, սենյակ մտնելով,
Փակում եմ դռներս երկար միջոցով.
Սածկվեցե՛ք ուրեմն, ազմուկ աշխարհի,
Եվ թիթեաբայլ զերասանուէի...
Ողջույն ձեզ, պա՛տեր, ամրաշին հիմնած,
Եվ ծաղկանկար թղթով զարդարած,
Ողջույն ձեզ, գրի՛շ և թանաքամա՛ն,
Ողջույն ձեզ, աթո՛ռ և զրասեղա՛ն:

XXI.

Դեպի գո՛րծ ուրեմն, մի՛ գուցե հանգչի
Սրտիս փափաղը ոտեր հյուսելու
ի՞նչ պիտի անեմ, թե աշքը դիպչի,
Եվ կիսատ զործիս ուրախանաս դու
Այժմ խնդրում եմ. թի բարեկամներ,
Թե շարյացակամբը, ինձ հետեւցե՛ք.
Չծոե՛ք գրածո րոտ հաճույքին ձեր,
Ահա՛ և կեռի. — Հա՛պա լսեցե՛ք:

Գլուխ 1

Ты хочешь знать давно — о чем моя печаль
Которой никогда и не могу забыть!
Не спрашивай о том; тоску мою
Кто может излечить?

Байрон

(Чайльд — Гарольд пер: Минаева)

Ոչ ջրերի մոտ, ուր թոշունների
Նվագում է պարն քաղցր մեղեղիք,
Կամ անտառներում, ուր աերևալի
Եվ կանաչազարդ աճում են սոսիք,—

Կամիմ կեռի կյանքը նկարել.
Այնտեղ սրբազն էին մեջաններ,
Որ քերթողները հաճեցան պատվել,—
Այժմ չե՛ն կենում այնտեղ մուզաներ:

Այլ քաղաքի մեջ — և այն ահագին,
Ուր կենցաղական հոգներն եռում,
Ուր ամենայն մարդ տեր է յուր գործին,—
Այնտեղ է կեռն ձեզ ներկայանում:

Թե ո՞վ էր կոն, և ի՞նչ նորա ցեղ —
Չեզ ասելու շիմ, — այդ ավելորդ բան.
Մի հին հայ տանից, և այն ո՞չ շքեղ,
Մագում էր կոնն — Այսքան բավակա՞ն:

Ոչ թե երկուող կա, իմ բարեկամներ,
Որ մեր կոնք մնում է ծածուկ.
Ռ' շնչո՞ւ ասեմ — երբ օգուտ շուներ,
Եվ խնդրում եմ ձեզ չնեղանաք դուք:

Մայր մի ուներ ծեր: Նորա տեսության
Խիստ փափաղում էր կոն կարությ
Քաղվում էր հոգին, և առվի նման
Արտասուր հարուստ թափվում էր աշքից:

Մի մայր էր միայն, ծերության ալիք
Արդեն խորշումած ճակատի վերան
Տպավորել էր յուր տիսուր կնիք, —
Մասամբ կոնը պատճառից նորան:

Եվ սիրում էր շատ այդ ալեռը.
Երբեմն, ասում են, մաշված վշտագին
Կը մեռներ կոն. — բայց պառակ մայրը
Ցուր հիշատակով սաստում էր ցավին:

Ուներ մի քանի և բարեկամներ,
Որ, ինձ անհայտ է, մի կուրութենով

Խորտակել նորան ոտով ու գլխով
Զանազիր էին, — կոն այդ գիտեր:

Եվ այդ վայրահաշ անառակներից
Խիստ վշտացել էր առաքինություն,
Եվ խռովել էր Աստված դոցանից.
Խոռվ էր, այո՛, և ճշմարտություն...

Մարդիկ սովոր են, մանավանդ անկիրթ
Եվ ասիացի նեղատես հոգով,
Հայհոյել մի մարդ, մի անկաշառ սիրաւ,
Եվ ամեն գործին նայել շար աշքով,

Ինչ ատելի է բարեխոհ սրտին —
Դոքա գրկում են և համբուրում են,
Ողջոյն լրտալով սովոր հրեշտակին —
Բանսարկու զեր նախապատվում են:

Իմ ցավըս այն է, որ այդ գարշելիք
Պղտորում են կյանքն պարզամիտների.
Թեև ի վերջո են այպանելիք,
Պատճառ, չկա բան, որ լրհայտնվի:

Միտ շունելով ես երկարանել
Կոնի նախկին կրթության մասին,
Ընթերցողներից կամեի խնդրել,
Որ այդ պարսականք ինձ շհամարին:

Այսքան. Առողջ նման չէր նոցա,
Որ մտանելով համալրսարան,
Կամ թե բարձրագույն մի ուսումնարան,
Զկամին զնել պարտք յուրյանց վերա:

Ողջունել հոգով մայրենի լեզվին,
Ենչել նորա կյանք նորից մկրտվել,
Որպես մտածող անդամ յուր աղքին,—
Ընդունակ անձը նորան նվիրել:

Եվ մի ազգ թշվառ, որ բարոյապես
Հասել էր գրեթե յուր անփառք մահվան,
Կարո՞ղ էր հուսալ դոցանից մի պես
Վերանորոգիլ հարության նշան:

Առն յուր բոլոր ուսման շրջանից
Այսքան ինչ կարաց հետևեցնել.
«Ես պիտի լինիմ մարդ ազատ, անրիծ,—
Եվ ես կարող եմ իմ աղջը սիրել»:

Աղատ մարդ... որքա՞ն սա ավետական
Խոստանում է մեզ անգին հավաստիք.
Առանց լիաձեռն ազատության,
Զկա լիաձեռն և կյանք երշանիկ:

Եվ ազատություն կարող է լինել,
Թե դադարինք երազ երազել,

Թե գործելով դաշտ մտավորական,
Խեղդեինք ցնորք — տգետին սիփական:

Եվ բարոյական ուղղություններից
Մինը ոմեր նա հաստատոն կանոն.
«Բարի գործել», — այս, ասում էր կյանքից
Է այն հազվագյուտ մեզ մավզուենու:

Բարի գործելով մենք ընդհանրաբար
Կարող ենք գտնել բազոր աշխարհին.
Ես բաղդավոր եմ, թե այդ բաղդն ունիս
Եվ գու և հարուստ, և տնանկն անճար:

Ո՞վ հայրենակիցք, քանի՞ եք թըվով,
Որ այդ աշքերով նայեիք կյանքին,
Որ վայելուիք խաղաղ, անխոռվ
Այդ բարի վիճակ, այդ բազոր քաղցրագին:

Քանի՞ եք թվով, որ վեհանձնաբար
Սկսեիք գործը հասարակության.
Որ ծէեր, ծաղկեր, ամոր բարձրանար
Ուկ տաճա՛րը սուրբ բարօրության:

Որ լուս և ուսում ալցելու լիներ
Եվ քո պալատին, և քո խրճիթին,
Որ յուր բաղդն ու կյանք առատ անձրևեր
Քրտնած, աշխատած ազգիդ ճակատին:

Տիտուր, միակերպ անցանում էին
Լոռնի օրերն. սրտառուշ զրկված
Հարազատներից, տվել էր վշտին
Աճելով աճել, աշխարհից փախած:

Բայց և հարազատք, արժան է ասել,
Զկարձեմ, որ վիշտն Լոռնի սրտի
Կարողանային մի օր փարատել.—
Ո՞վ, շատ կարծր է սիրուն այդպիս մարդի:

Նա կյանք չէր փարում ճգնավորական.
Եվ, միշտ խնդրելով խոսք ու զրուցներ,
Պատրաստ էր մեխել ձեռն մտերմության,—
Բայց ընդգեմ էին դորան շատ փորձեր:

Ոչ մեծ հանդիսներ, ոչ այլ խրախճանք
Կարող չէր նորան հաղորդել ծիծաղ.
Նա որոճում էր մի ներքին վարանք,—
Ի՞նչպես կարող էր լինել նա ուրախ:

Եվ ցրտասառուց խավար դադաղի
Երբեմն ճակատին այելուծվում էր,
Եվ կծու խայթը ներքին տանշանքի
Խալաղ բռպեք թունավորում էր:

Ոչ ոք չգիտեր հարցանել նորան,
Ի՞նչ է պատճառը այդ դառն զրության,

Եվ համբը կուրծքից ոչ ձայն, ոչ հնչյուն
Չէր գալի վշտի բացահայտություն:

Բայց թե խորամուխ հայացք ձգեիր,
Փոքր առ փոքր նշմարանք ցավի
Գուշակում էին, որ նա վշտակիր
Սըգում է կորուստն հարազատ ազգի:

Նա տեսանում էր, որ անօրինակ
Ազերությամբ ներջնած ցեղեր,
Կյանք են նվիրում որպիս նահատակ,
Մահաբեր դաշտը ծածկում են զոհեր:

Նա տեսանում էր և իտալական
Շաղկապյալ սիրո միությամբ կնքած
Հաջողակ գործը, և գարիբալդյուն
Զենքի հաղթություն, այնքան հոշակված:

Փրկության Քրիստոսն հաղորդիլ ձայնով
Ընթացավ աճա ազգերի միշին.
Զարթեց բեռնավորն նորոգլած ոգով—
Ողջունեց սիրով հասարակ գործին:—

Փայլում է որոշն մեծահոգության,
Թափվում է արյուն հայրենասերի.
Իրավունք, պատիվ, նշանք ազգության
Վերականգնում են որպիս մի կաղնի:

Ո՞վ ձայն Աստուծո, — և աշխատյալներ
Գալիս են՝ հանդէի մեծ վաստակներից,
Երկրպագությունք, դափնի պսակներ
Թերում են նոցա ամենայն կողմից:

Լուսավորություն, որպես արեգակ
Հարազատ հողի երկնակամարին,
Սկսում է սփռել ճառագայթարձակ
Եվ ուսում, և կյանք, և բազդ մեծագին:

Եվ բանությունը — այդ վատթար գազան,
Անգութ կորսափ գրկում է հարված,
Մոլի իշխաններ և ոգեկործան
Բարձր գահութից գլորվում են ցած:

Գլորվում են ցած, — և այդուեղ դոցա
Պատրաստ է գամբան արհամարհանքի.
Ազատ ճանապարհ բացվում է ահա
Եվ յարդու հոգու, և մարդու մտքի:

Բայց Հայոց ազգը — տիսուր անապատ...
Անբույժ նետերով խոցված վիրավոր.
Խավար, նյութապաշտ, երկշու և վհատ,
Սիրող շարություն և փառք անցավոր:

Ահա, ո՞րպիսի մտածություններ
Խոր շարժում էին կեռնի հոգին.

Նա՝ մինչև անգամ միջոց չգիտեր,
Որով ձեռնուու լիներ յուր ազգին:

Եվ սորա համար առավ նա յուր ձեռն
Այս մինակ հնառա, որոշեց զրել
Թյուր սկըզբները այն կարստարեր,
Որով Հայի կյանքն իսպա՛ռ էր խախուցել:

Առն համատիք ընկերներ ո՞ները
Նոցանից շատերն պարծում էին,
Նր Հայ են ծնվել, բայց Հայի խոցեր
Նոցա խաղաղ կյանք խանգարում չէին:

Նոցա նպատակ — սէափառություն,
Նոցա խոսքերը — անշան հնլյուն:
Ազգ ու հայրենիք, պարծանք ու պատկ,
Կրկնում էին, որպիս մի թութակ:

Անգործ պճնասերք, փառքից մոլորված,
Քան թե երազել կանգնումը Հայի.
Լավ լինելու չէ՞ր, որ կոկված, ծգված
Կուլ տայիք փոշին դուք մեծ աշխարհի:

Այնտեղ կարող եք գտնել սիրեկան ...
Տամուհինգ, տամեռումեց, տամեռոթ տարեկան.
Հրեշտակի լեզվով ֆրանոիացիք
Եվ Ռուս, և Լեհ, և Ֆերմանացիք:

Նոցա կերպարանք փալում են սիրով,
Բայց միայն, ափսո՞ս, զահերի շնորհով.
Երբ օրի լույսը դոցա ողջունեց,
Այս, սերը փախավ, գաղտնիքը բացվեց:

Այդ ձեր բանը յէ՛. զուք ծառայական
Կարող եք հարկ տալ դոցա հաճույքին,
Քողոքուն սրտով եղեգնի նման
Երեք տակ ճկվել և մնալ վարձին:

Հայտնի է, որ Հալք խիստ են այս մասին,
Եվ չեն ընդունում խնձորն փորձության,
Թեև սիրո ախտ դոցա ցույց տային
Ծքեզ առյուծքը մեծ աշխարհական:

Այսպես սովոր ենք կոչել «մեծ աշխարհ»
Ուր խալտաճամուկ ամբոխը ունայն,
Քիթք վեր բաշած, սիրում է տխամար
Պերձությամբ փալիկ, ձայն տալ մհծության:

Մեծ են խոսքերով, բայց վհատ հոգով,
Վերջացած աղնիկ ձգտողութենից,
Գատարկության մեջ կյանքը մաշելով,—
Աղորմելի են թշվառականից:

Չըսիրեց կեռն և ո՛չ իսկ մեկին,—
Ապավինեցավ լուռ առանձնության,

Փախավ ժպիտը, և խեղճի հոգին
Չըսուավ կայծ մի մխիթարության:

Նա զուրկ չէ՛ր սերից. մի ժամանակ կար,
Երբ սիրո անուց խորհրդածություն,
Որպես անձրեւ գարնան զովարար,
Տալիս էր և կյանք, և նոր զորություն:

Ո՛վ սեր, ո՞ւմ արզյոք, որի մեջ մատաղ
Դեռ եռ է գալի մանկական արյուն,
Քնքուշ պատրանքով, ո՛վ ողի շքնաղ,
Չես դրել թակարդ դեպ ի գերություն,

Եվ պոետական երևոյթներով
Ո՞ւմ շրջակայրը չես լուսավորել,
Որ կենդանությանդ վառված նշուլով
Քեզ սրտի խորքում սեղան է կանգնել

Սա՛ռն է այս դարը,— և ես ավելի,
Քան թե մեկ այլ ոք, արհամարհում եմ
Նյութապաշտությունն նորա անհոգի,—
Հակառակ դարիս, Սե՛ր, քեզ երգում եմ:

Երգում եմ թույնը դառն հարվածներիդ,
Որից ծաղկում է բաժակը կյանքի,
Եվ քո, որպես օծ, գալարուն ժպիտ,
Եվ զժո՛խք, և զրա՛խտ հրապուրանքի:

Սիրելով միայն ևս ճանաշում եմ
Զարդարո՞ղն աշխարհ, Ատեղծողն երկնի,
Սիրելով միայն ևս բարձրանում եմ
Դեպ ի վեհավայրն Արարշապետի:

Եվ ևս մտախոհ կուսի աչքերում
Գտանում եմ այն, որ գիրք մի գեռ ևս,
Որ ոչ իմաստուն յուր գրվածներում,
Ո՛չ պոետն երգով շավանդեցին մեզ:

Թե ցուրտ կանոնը նյութապաշտների
Առորք շնմիդ վերա ուսք կոխեր, ո՛վ Սեր,
Մեզ կը կաշկանդեր ձմեռ սոսկալի,
Եվ հետքըդ անգամ երևելու շէր:

Եյլ ևս ուրախ եմ. դու ենթակա չես
Ոչինչ իմաստակ եզրափակության,
Եվ դավանում եմ բեզ առաջվա պես.
Կանոնը չունի մուտք քո ավագան:

Բայց ներողություն, որ ևս այս անգամ
Ընդմիջեցի խոսքս և թել զրուցիս.
Ինքրդ մտածի՛ր, աղնի՛վ բարեկամ,
Չեմ կարող լոել, ի՛նչ թանկ է սրտիս

Եվ ևս մի մարդ եմ ո՛չ առանց մեղքի,
Եվ ևս սիրել եմ առանց հանաքի,

Սիրել եմ մենակ, և բազգն անարդար
Չէ՝ զարդարել իմ սիրո ճանապարհ:

Թեև կոնք սիրեց անհաջող,
(Դուք այդ կիմանաք — այլևս երկու տուն),
Բայց այս դիպվածից չկարծես, ընթերցո՞ղ,
Որ կոնք և ես — նույն ենք, մի արյուն:

Հսի՛ր, առնում եմ թելը պատմության,
Թո՞ղ նստի ախտը քո ինքնահավան.
Այդ ներեկու չէ երբեք քեզ Աստված. —
Խորթ է սիրո հուրն սրտիդ քարացած:

Կոնք սիրում էր մանկության օրին,
Այն մի նազելի պարկեշտ աղջկէ կը.
Փոքրիկ, փափկամորթ ուներ նա ձևոները,
Նորան շուտ թողոց հոգով վրդովված,
Երբ նախանձն ձգեց նորա մեզ կասկած, —
Եվ այս է սիրո ընկեր անմեկին:

Իսկույն նկատեց աչքը սրատես,
Որ զիշեր ցերեկ, որպես մի սովեր,
Հածում են ախտոտ այն դժոխերես
Նորա հետքերով երիտասարդներ:

Որքան շերմեռանդ սիրում ևնք մեկին,
Նույնչափ հետամուտ ևնք նորա սրտին.

Ամեն մի կասկած, խոսք վատահամբավ
Սիրուհու վերա — պատճառում է ցավ:

Սպասում է գութ. կրակված աշքեր
Թափում են նախանձ վրեժխնդրության,
Եվ պատահում է, ո՞վ ախտ մահարեր,
Որ զո՞հ է գնում քնքուշ առարկան:

Արյունաշաղախ անկավ Դեղինման
Կատաղութենից սիրող ամուսնու,
Բայց մեղավո՞ր էր կրակու Յթելլո՞ն, —
Նախանձը խոռվեց կուրծքն Ափրիկեցու

Թեև դժվար է, որ մեր ժամանակ
Մի երիտասարդ, գրգռված նախանձից,
Խեղքեր ամուսին յուր բարձերի տակ,
Եվ ինքը խեղդվեր ահագին ցավից:

Այժմ տղամարդիկ ըստ մեծի մասին
Մեր կանանց համար երկյուղալի չեն.
Նոքա հետեւում չեն այն ոն Մավրին,
Թէ անսրբության հետք ինչ նշմարեն:

Բայց միայն նոքա մի այլ կին կրնարեն,
Առնելով լոկ ինչ հավատարմություն,
Եթե սա խարեց — և նոքա նորեն
Կըդանեն յուրյանց բաղդավորություն:

Արդեն մանուկ այգն արձակվեցավ վառ. —
Փայլեց արեելք. օրի հոգսերով
Լցվեցավ աշխարհ: Քաղցր դայլայլիկով
Ողջունեցին օր թոշունների պար:

Անգործ ժողովուրդն արդեն կառքերով
Խնդրում է յուրյան ուրախություններ.
Բայց կո՞ն. — կեռն հուսահատվելով
Թափում է սրտի կոկիծ ու վիշտեր:

Եվ նա քայլայված հողով և մարմնով
Նման է, ասես, ծովին ալիկոծ.
Արտավախտոն հոնքերն կիտելով,
Վերջապես հանեց մի շատ խոր հոգոց. —

«Տիսուր նայում եմ ներկայի վերա —
Բոլոր գոյությունս արյո՞ւն է կոխում,
Եվ Հայի կյանքը կորակոր ահա
Մի աքսորանքի խուց է երկում:

Արածայր նետեր, դաշնակ և նշտար
Տցիում են որտում, — դեղաթափ լո՛նին,
Խոցված է ուղեղս. լեռնացած խավար
Պաշարում է ինձ. — նո՞ր զոհ տարտարին:

Հա՛յն, որ կործանիլ արծաթսիրություն
Պաշտում է որպես նոր ավետարան,

Հայն, որ ծախել է յուր ազատություն,—
Կարո՞ղ է հաշվիլ անդամ մարդկության,

Որ բարոյական ցավի մեջ խեղդված,
Գարշում է գիտել խորհուրդը կյանքի,
Որ անշարժությամբ վիճակագրած,—
Կարո՞ղ է հուսալ մի ապագայի:

Հայն, որ չէ ողբում յուր հայրենիքի
Հոյակապության փրատակները,
Որ մոռացել է յուր զյուցագների
Հիշել արյունով կնքած գործերը.

Հայն, որ չէ ծածկում կուրծքը զրահով—
Ալրել խավարը անշեշ կրակով,
Գնալո՞ւ չէ զոհ անդարձ կորսայան,
Որպես զնացին մարդիկ աննշան:

Զկամիմ այսօր, ո՞վ սուրբ ազգություն,
Զբուցել քո հետ կաշառված գրշով,
Հեռու մեղանից շողոքորթություն,—
Թող ողջունե՞ն, քեզ ծերերն պիղծ գրկով:

Քի՞զ, ա՞զգ, սիրում եմ, բայց ոչ այն սիրով,
Որով սիրել են քեզ մինչև այսօր.—
Այն մեղք է եղել լի շարութենով,
Ել տգիտության կեղծավոր ցնոր:

Եվ այդ նման էր այն հիվանդության,
Որից գարշեցան հմուտ քժիշկներ.
Չունեիր նշան գու կենդանության,
Լուծվել էր մարմնիդ զգայարաններ:

Եվ ահա՝ ինչու, թշվա՛ռ հայրենիք,
Չունեիր զու բաղդ և ազատություն,
Եվ ահա՝ ինչու քո ցավուտ որդիք
Խեղդվեցան, անկան անդարձ գերություն:

Այս, թե մի ժանտախտ կարեի բերել
Այդ հայրենասեր խելագարներին,
Եվ մի ահազին գերեղման պորեկ,
Եվ նո՞ր սկըսբունք ավետել Հային:

Ապօրինավոր որդիք ազնիվ մոր,
Զեր հետ է խոսքս.— Եկե՛ք հրապարակ,
Դուք, որ պնդում եք թաղել այն հզոր,
Այն անթաղելին ներկա ժամանակ:

* *

Դո՞ւք, աղվեսք, որոնք առաջաստ պարզած,
Առատ շահվում եք հաջողակ հողմից,
Որոնք սուրբերի զգեստով ծպտած,
Մծում եք հյութը խեղճ Հայի կյանքից:

Որոնց մեջ տարերքն այնպես են խառնըված,
Որ բնությունը ինքը սարսափած,

Կարող էր գոշել. «Ահա ձեզ մարդիկ,
Գնայուն մեռյալներ, գեհենի որդիք»:

Ո՞չ, խեղճ Հայ, խեղճ Հայ, քեզ պատառեցին
Սյոյ ոչխարենով փաթաթված գայլեր.
Գլխիդ զարկեցին, գանձերդ խեցին—
Վավաշ հարճերին տանելով նվեր:

Եվ եղիպտական դժնյա ախտերով,
Անբա՛խտ ժողովուրդ, վարակված ես գու.
Հարստահարող երկաթի բազկով,
Ո՞չ, կը լափե քեզ կորուստ մահացու:

Անգի՛ն հայրենիք,— ցավերիս պատճառ,
Մահ է ընթանում ճակատիդ վերա.
Հափշտակության ողին շարաշար
Մրում է երկսալյր գերանդին դժնյա:

Սոսկալի տանջանք, անթաղ դիակներ,
Ծղթայք և կապանք, և դառն արտասուր,
Անգութ կոտորած, և մրմունջ, և սուգ,
Եվ հարազատիդ արյան առուներ,—

Դեռ այս դժոխքին դու պիտի տանիս.
Թշնամու կողմը դարձյալ կը շարժվի,
Դեռ վերջին բաժա՛կը պիտի ըմպես,—
Եվ այն բաժակն է օրհասականի:

Իսկ թե հորիզոն բացվի կրթության,
Կը բացվի և քեզ դուռը փրկության.
Նորից կը ժաղկեն քո բուրաստաններ,—
Նոր կյանք կը շնչեն մեռած անդամներ:

Եվ Հայությունը... և, ո՞վ դու ցնոր,
Ի՞նչ ես ինձ տանջում, աշխարհի առջե
Ուրացանք Հային և Հայի արեւ—
Ի՞նչ պիտի ասեն հետինք սրգավոր:

Հայրենի ազգ իմ,— տիսուր անապատ,
Դեռ կարող էի խեղդել արտասուր,
Թե զառն անցածից քաղելով խրատ,
Թու վատ սերունդը մեկներ քեզ բազուկ:

Թի այդ քո թշվառ վիճակի վիշտը,
Մերկացած դեմքով յուր դժխտային,
Ուտեր, թափանցիր թոռներիդ սիրտը—
Բոպե՛ քեզանով գոնյա ցավերին:

Որդի՛ք մոլորյալ, դուք պիտ՝ հասկանաք
Այդ նախատինքը հայրենի անվան,
Պիտի հետ բերեք ազգության պսակ,
Թի չկամիք դուք գնալ գերեզման:

Խո՛ր ազգ, ո՞վ նոր ազգ, դու չես խոստանում
Հայության լինել պատվար և նեցուկ.

Հայն հառաշում է, — ոու չես նվիրում
Համազգացության նորան արտասուր:

Նո՞ր ազգ, անփառք է կյանքիդ ասպարեզ,
Թե ազգիդ համար քրտինք շըթափես.
Մեռած էիր ոու, որպես գերեզման,
Թե շքնացիր մշակ ազգության:

Այս, ոուք զգացե՞ք ձեր մոր խիստ կապանք, —
Դորան կարոտ է թշվառ հայրենիք.
Ապա եթե ոչ — անշինչ անարգանք
Ազգը կը դնե ձեր վերա կնիք:

Թո՞ղ քաղաքական մեծամեծ գործեր
Ալսօր չանցանեն ձեղ համար ունայն,
Թո՞ղ ծաղկեն այսօր քաշառողջ սերմեր
Անզին շինվածի ազգասիրության:

Թող տխուր անցյալ մեր համար փոխվի
Մի պայծառազարդ փառավոր ներկա,
Որ վերաճելով ազգության ծիլեր,
Երեան հանե ունե ապազա:

Եվ այն ժամանակ, ո՞վ օր ոգելից,
Որոտալու է ձայն ազատության.
Զախցախված, փշրված անարգութինից
Փողփողելու է գրոշն ազգության:

Փառավոր ճակատ հայրենասերի
Ճարդարելու են դափնիք փառավոր,
Որ նահատակ է փրկության ազգի,
Արձան կը տնկեն մշտնշենավոր:

Դարեր են գնում, դարեր են գալի —
Ավանդությունքը անհետանում են.
Միայն արգասիք ազգաշեն գործի
Հասարակ երգով անմահանում են:

Ես մեռանում եմ, որպես շնչավոր,
Բայց բարի գործերս մեռնել կարող չեն.
Նորա անմահ են, որպես երկնավոր
Արարշի արիեղերը, թեև դարք սահեն:

Այսօր ծնել ենք, որ էգուց մեռնենք,
Որ մեր հողիցը նոր ազգեր դուրս գան.
Մենք, որպես ալիք, միմյանց փոխում ենք, —
Այսպիս է վճրոն մարդկեղեն կոչման:

Եվ նորա համար իմ կյանքն ունի գին,
Որ պիտի շնչվի և ոչնչանա,
Որպես ձաղիկը աշնան միջոցին, —
Ենից փոթորիկ — և ահա՛ լրկա:

Եվ նորա համար ես բանավոր եմ,
Որ մինչ հետին շունչ պիտի մշակեմ,

Միշտ մտածելով և բարձրանալով,
Գիտության Հո'րը ձեռներըս պարզեմ:

Ո'վ սուրբ Հայրենիք, այդ ինչ գորություն,
Որ կապէ քո հետ սերը մեր սրտի,
Ինչո՞ւ մենք պայծառ, երբ բարօրություն
Արտերիդ վերա զեղում է ոսկի:

Ինչո՞ւ մենք ամպած, երբ խոնարհում ես
Փառավոր ճակատ,— մենք մրգալից
Չարի առաջն կանգնում ենք, որպես
Դարեւոր կազնին անշարժ նետերից»:

Մի՞թե, բնթերցո՞ղ, դու չես նկատում,
Որ վառ է Ասոն որպես մի հնոց,
Տես ի՞նչ հոսանքով է նա ծավալում
Ազգասիրության այն սրբազն բոց:

Այդ հառաշանք է հոգով խոցվածի,
Մի խորին կսկիծ վշտալի սրտի.—
Միրտ, որ պատրաստ է խսպառ պատառվել
Եվ հիվանդ ևղոր փրկություն գնել:

Ճիշտ մրգած, գիշեր դիլական...
Ցուրտ երա՞ց... բժժա՞նք... և քունը աշքիս
Հափշտակվում է — վշտի ուրվակա՞ն...—
Ո՞չ վերը, ո՞չ հանգիստ ալևկոծ մտքիս:

Ի՞ո շարագործ չեմ, ինչո՞ւ կապուտակ
Չէ մպտում երկինք: Ո՞ւր օրեր վարդի.
Ակա՞զ, վաղ ընկան տարտարի հատակ,—
Աշխա՞րհ Աստուծո, բանտ ես զգվելի:

Թարշամում է սիրտս — ակա՞նչ գվեցեք.
Այնուեղ կը լսեք մի տիտուր շրջուն,
Արպես տերենը ծառից կիսարեկ,
Տալիս է մահին հիվանդուտ աշուն:

Թնիր ավեցե՞ք և մի ժամ պարապ,—
Դիպի արեկելք կանաչազգեցիկ,
Ահի պարանոց, որպես մի կարապ,
Արտախ կը թռչեմ անգին Հայրենիք:

Կը թողում հյուսիս, բնության դագաղ,
Եվ հիշատակներ պատանեկության,
Եվ բարեկամներ, և կույս մի շքնաղ,
Որ սեր շնչեց ինձ պղատնական:

Այո՛, այն կույսը, որ իմ սրտիս մեջ
Անվալեց և սեր, և խաղաղություն,
Երբ ցնորների քաղցր ելևել
Բացեց ինձ դրախտ և անմահություննա...

Եվ հիշատակը հեռու անցյալի
Հիշեց Ասոնին երջանիկ օրեր,

Երբ ոգեզմայլիշ և հրաշալի
Առաջին սիրո փալում էր լապտեր,

Եվ ներկայացագ նորա առաջն
Մաքուր առագաստն հրեշտակ գեղեցկի,
Եվ մեզի տակից նշմարեց արկ,—
Երգեց ակամա այսպես մեղեղի:

1.

Թող լըսահեն ցողուտ շիթեր,—
Ժա՛յտ է, որ ոռոգում են.
Ո՛չ մանուշակ և ոլ վարդեր
Այդ շիթերից կը բանեն:

2.

Ո՛չ սեր իմ մեջ մշտածաղիկ
Կը նորոգեն քաղցրազին.
Ա՛խ, զժոխը և վիշտ շարաբաստիկ
Արդեն դոքա շարժեցին:

3.

Որպես հրեա թափառական
Ամեն տեղ եմ, — ո՛չ մի տեղ.
Ո՛ւր է վարում բազդիս ուռկան.
Մի՛ հարցանիր կույս անմեղ:

4.

Ես չկամիմ, որ խանգարվի
Ոսկի դրախտը մանկության,
Որ քո աշերդ ցավով լցվի,
Դամ թե հայացք սիրարժան:

5.

Դու տեսե՞լ ես ալեկոծ ծով,
Երբ փոթորիկ մի ուժգին
Տարրերվում է մրմռալով, —
Այդպես է և իմ հոգին...

6.

Իմ կյանքը ինձ բեռք դարձավ,
Վերա հասավ սկ գիշեր,
Անուշ ժպիտը հոգուս փախավ, —
Առովա՞ծ օրհնե քո օրեր.

7.

Ոխտանի խաղարկություն
Թող փայլե քո երեսին,
Եվ սսխակի նվազածություն
Միշտ հնչե՝ քո ականջին,

8.

Ես քեզ մի օր փայփայեցի,
 Որպես պայծառ աղավնյակ,
 Սիրո ժողին քեզ կոչեցի
 Եղի երկնային, և հրեշտակ:

9.

Ելլ ալժմ ների՛ր, ճակատագիր
 Վերաս դրեց լուծ սաստիկ.
 Ես պիտ' շրջեմ երկրից երկիր—
 Մինչ գտնեմ հայրենիք:

10.

Եվ հայրենիք... բայց ո՞ւր է նա.
 Քանի՛ գնաց արտասուր —
 Երբեք նորան ես շտեսա...
 Գե՛թ երազում վաղանցուկ:

11.

Եվ հայրենիք... բայց ո՞ւր է նա.
 Ահա սարեր ծածկվեցան,
 Եվ արեգակն և ծով ահա'
 Մեր աշքերից հեռացան:

12.

Ա՛յն հայրենիք, որ կապարյա
 Եղթաներով կապկապած,
 Անբույժ խոցեր կուրծքի վերա, —
 Բնավ դարձել է ավերած:

13.

Մի՛րտ իմ, սի՛րտ իմ, վշտի հատակ,—
 Պարտե՛զ թունոտ բուզմերի, —
 Զգացի՛ր ցավդ և այդ վիճակ.—
 Գուցե վերջն է բարի:

14.

Գուցե, գուցե մի օր կը գա,
 Մի թանկագին ժամանակ,
 Երբ Հայի բեռն կը հեշտանա.
 Կըմպե կրթության բաժակ:

15.

Մնա՛ս բարյավ, մաքո՛ւր հրեշտակ,
 Թո՞ղ քո սիրտը լմորմոքի.
 Թեև մեռնենք այլ տառղի տակ,—
 Բայց մա՞զը մեզ կը դուգե:

Պետք է նկատել, իմ ընթերցողներ,
Որ կեռն հաջող գիտեր, շնորհած
Գրքերից, տողել ոգելից երգեր.—
Ազգու էր քնարն, լարերը վարժված:

Երբ առանձնություն տիրում էր նորան,
Երբ հարձակվում էր դեօ վիշտերի,—
Ճապուկ մատներով ներդաշնակածայն
Զարկում էր քնարին. խիստ ախործելի
Տարածվում էին դաշըն ակորդներ.
Եվ գիշերային անդորրությունը
Նորա կախարդիլ կյանքով լցվում էր,—
Քամում էր կեռն յուր տաղտկությունը:

Երբ կենցաղական փոթորիկներից
Ալեկուժվում ենք երկար միջոցով,
Երբ ներքին ծանր պատերազմներից
Խոսվում ենք մենք կամքով և հոգով.—
Մենք գորանալով ճիշում ենք օրեր,
Ամենապայծառ ըոպեր մեր կյանքում.—
Մանկության գուտարը — այն առաջին սեր—
Մեր մոայլ մորում է կենդանանում:
Մեզ մի անգամից չեն թողում հրճվանք,
Հանկարծ չեն գնում և վառ մանկություն.
Եվ մենք զգալու չէինք մեծ զրկանք,
Թեև ուրանար մեզ ուրախություն.
Բայց անմահ զրախտն այն նվիրական,

Որ նախկին սերը հառաջ է բերել,
Բայց ոգեսորյալ ժամերն ոյութական
Երբեք չենք կարող մեր մտքից հանել
Արդարն ալդ սերն կարող է թագել
Կամ թե խավարել, բայց ոչ թե հանգել.
Այսպես երկինքը, ժածկված ամպերով,
Յուր հստակ կապույտ գիտե պահպանել,
Որ գիտե սիրել, և որի սիրաց
Բերել է յուր հարկ սիրո տաճարին,—
Զէ մոռանալու այդ քաղցր վիշտը.
Թեև ծերանար ծերություն խորին,
Եվ ոչինչ չկա այնքան ցավալի,
Երբ մենք կտրում ենք, հրաժարվելով,
Ճշողությունքը և կապը սրտի,
Անհրաժեշտին հնազանդելով:
Գեռ երիտասարդ է, իմ բարեկամ,
Առն, քո միտն է, որ նա սիրում էր,
Ի՞նչ զարմանք բան է, թե վերջին անգամ
Հավիտյան նորան հրաժեշտ ասեր...»

Առն տիրում էր մենակ,
Սիրաց հնչում էր վիշտ և տաղտկություն.
Եվ թե կատարված էր յուր նպատակ —
հնայելու չէր կյանքի գոյություն:

Եվ բարոյապես յուր կոշման վերա
Խորհրդածելով, որտեղից ձգել

Թուսաստանի մայր քաղաք Մոսկվա,

Հետ շնայելով փախչե՛լ և փախչե՛ր

Առաջին գլուխը Լոռնի Վշտի

Խնդրում է այստեղ ճաշակել վախճան,

Իսկ մնացորդը կը շարունակվի, —

Այն իրավո՞ւնք է ոգեորության,

Նա հարավ կերթա, Հյուսիս կըթողնե,

Եատ բան կտեսնե Կովկասյան կողմեր.

Նորան Կովկասը ժամ ինչ կը գրավե,

Ար վարդյա քաղե նորանից փուշեր...

Որ զգայակից է խեղճ Լոռնի,

Գիտեմ, այդ ազնիվն կը ցավե նորան,

Բայց որ գրկել է նախանձը շարի,

Նոր վարմ կը լարե կատակերգության:

Եվ այդպես են միշտ ընթացել Հայեր.

Խորթ է նոցա ձայն սրտի համոզման.

Նախանձ ու նախանձ — խավարի սերմեր —

Առատ, լիածեռն վիժել են միայն:

Թո՛ղ կոծվի կործքը խավարասիրի.

Նորա վաստակը նորան կըծածկե,

Եվ արդարության թարմ արմավենի

Անարվեստ վաստակն միշտ կը պսակի:

Թո՛ղ բառահյուսը, բզզալով անքուն,
Մրե յուր տողերն, որ քանի գաժան,
Նույնչափ գրվածի և արժողություն,
Նույնչափ քերթողը հաճ և բավական:

Իմ ընթերցողներ, պարծանք Լոռնին.
Նորան չէ զիպշում պատրանքը փառքի,
Թէ պիտ' սպասե՞ք զիո դատաստանին
Հրապարակ հանած կատակերգակի:

Երեկյան տգետք, որոնց պիտո էր,
Արպես խարավիլակ պահ դրան զնել,
Այժմ, իմ Աստված, առատ զովեստներ
Չեղած տաղանդով կարծում են ինձ էր...

Այո՛, խմբագիր մի խելացնոր.

Գուցե ձեր գործին կը ծափահարե,

Բայց կրիստիկոսն — այդ սուրբ դատավոր,

Ի՞նչ վարձ կամ վճիռ պիտի հատանե:

Ի՞նչ է ցանկությունդ, անբաղդ իմաստակ,

Արդեն քեզ խեղջեց Հնության փոշին,

Գալոց սերնդի, թշվառ նշավակ,

Ի՞նչո՞ւ զու ծնար. — վա՞յ այդպես կյանքին...

ԳԼՈՒԽ II

Люди привыкают к злу до такой степени, что считают жалобы неразумием, если не преступлением.

Дж. Ст. Милль

Երանին նորան, որ նախապաշար
Մերժելով կարծիք, սիրել է լսել
Սրաի համոզման, և անհիշալար
Սուրբ ճշմարտության կողմն է համբուրել:

Երանին նորան, որ նախամմեծար
Առնելով պատիվ սնոտի փառքին,
Ազատ գնում է կյանքի ճանապարհ,
Չեռք պարզելով լուր նպատակին,

Որ բացել է սիրան ուսման առաջն,
Զրահավորված ընդգեմ շարության,
Որ ներծնչելով գիտության անձրի,
Պտղագործել է հոգու անդաստան:

Իցե՞ թեև Հայն, մի օր սթափված
Խավարի գրկից, նախանձող լիներ
Այս մեծ խրատին, և, պայծառացած,
Յուր մեռելություն լուսով փարատեր:

Իցե՞ թե, Աստված, Հայն խոստովաներ
Յուր անոսրամիտ առաջնորդների
Վարդապետություն, յուր մտքի վերքեր,—
Եվ թափեր դոցա, որպես թույն իժի:

Հայն գոսացել է, վա՞յ նորա օրին,
Անգութ խավարի գավազանի տակ.
Եվ խեղճի կյանքը և խեղճի հոգին
Ապականվելով, զարձել է փլատակ:

Խավարն է Հային ճակատագրել
Կապույտ երկնի տակ հրանյութ շանթեր,
Եթե ոչ այդպես, պիտո էր կարծել.
Հայը կը փալլե՞ր, հայը կը տիրե՞ր...

Ո՞վ են վարժապետք այդ անբախտ աղջի:
Ո՞վ քարողիներ լուսավորության,
Ո՞ւր են դպրոցներ գիտությունների,
Քանի՞ աշակերտ ուսումնառության.

Հայ ազգ, ինձ ասա՛, ի՞նչ վարժապետներ *
Ունիս գու քո մեջ դաստիարակիլ,

* Ոչ որ թող կողմնակի մեկնություն չառ մեր խոսքին,
իրեւ թե մենք հարձակում էինք հայտի անձին վերա. արդպես
յատածողը ամեններն յէ հասկացել մեր զործի ներքին կազը ու
խարճարպու:

Վարժապետ և ի վերջո աղջասեր, կողնուաւց ասելով, ու
սինք ապացույց ոչ թե մի Մարկոս, մի Կիրակոս, մի Մարտի-

Ար հատանեին խավարի սկրմել,
Քո բարօրության այնքան խափանից:

Հայ աղդ, ինձ ասա՛, ի՞նչ ես ինձ տանջում.—
Եվ լոռում է ազգ, չունի պատասխան.
Նա յուր արտասուրն է միայն սրբում,
Եվ ցուց է տալիս վերքը խեղճության:

Նա կամի առել, որ անապատ եմ,
Ուր շատ վարժապետ մտավ և ելավ,
Շատ բաներ խոսեց լոկ և անխոհեմ—
Եվ դորանով ցավս շըթեթեացավ:

Այն մարդիկ էին անբարոյական,
Ճշմարիտ լուսից միշտ աքսորական,
Անկյանք, անպոտով, ծերությամբ ճնշված,
Հնության փոշով համարյա մեռած:

Այն փարիսեցիք, որ տրտնցալով
Խաչեցին Քրիստոսն առողջ կրթության,
Եվ Հոժարասիրտ խավար զնալով,—
Որդե՞ր նոցա մեջ միայն շատացան:

բռս, այլ, համարյա բնդհանուր աղղոյին վարժապետությունը
Եթե մեզ ներեք մեր զործի շափս ու պատշաճը—մենք կարող
էինք մեծարելի փառերով համոզել այդ բանի մեջ և նույնին
ինքնահավան հակառակորդը մեր Բայց թողնենք այժմ. մի
այլ ժամանակ գուցե ձեռնարկենք:

Նա կամի ասել. շունիմ աղքասեր.
Սո՛ւտ է ամենայն աղքասիրություն,
Որ դղրդեց օդ, որպես մի հնչյուն,
Որ շբերեց կրանք, ո՛չ նյութ, ո՛չ գանձեր:

Դոքա Հայասեր, և ոչ Աղքասեր.
Մեկը անցավոր, մյուսը հաստատուն,
Մինը կուր պարձանք, մյուսն կենսարեր,
Եվ մեծակշիռ առաքինություն:

Այսպես է խոսում Հայն անմիջիթար,
Սո՛ւր է ամեն բառ, որպես թև հշտար.
«Չունիմ վարժապետ, շունիմ աղքասեր».
Ո՛վ իմ սիրելիք, զատարկ չեն խոսքեր:

Հայ վարժապետներ խելոք են միայն,
Որ Մաղմոս, Նարեկ սիրտել են բիրան,
Որ զիտեն Զամշյան քիրականություն
Եվ ափեղ-ցփեղ հարտասանություն:

Որ աշակերտի գիտեն կամք ձնշել,
Նորա մատաղ կյանքն անսպատ դարձնել,
Եվ թե այդ խեղճը օգնություն կանչեր,—
Ասկտակ, փալախա և գա՞ն հարկանել,

Զայն տուր, պեղագոդ, թև կենդանի ես,
Ընդդեմ շարության զրահավորվի՛ր.

Մարդկության որդիքն, տե՛ս, անասնի պես,
Բեռնավորված են լծով մահակիր:

Հայ վարժապետներ խելոք են միայն,
Որ խիստ զահիճ են դասատվության,
Որ շատ են ապրել երկրիս երեսին,
Եվ դորա համար մեծ հարգանք ունին.

Որ ծերությունը հիվանդու գունով
Խլել է վերջին գոյության եղան,
Եվ հոգարարձու հայրական ձայնով
Կանչում է դոցա փոսը հանգաւայան:

Ինձ դուք ասացե՞ք, ո՞րքան դոցա մեջ
Սաղկած է հոգին դաստիարակշոթյան.
Զգիտեն ուսման դեռ այր, բեն, դա, եշ
Եվ ահա՛ աթոռ վարժապետության:

Ո՞րքան հայ զավակն ուսումնարանից
Կարող էր քաղել կրոն և հոգի,
Զէ՛, հույս չկա այդ վարժապետներից,
Հին է շինվածը — պե՛տք է նորոգվի:

Գորա ամբարիշտ և շատ շարաշոր,
Վա՛հ, ուրիշի սիրտն կամին բարձրքել,
Գորա հնասեր, — կրոնի տաճար
Ի՞նչպես կարող են մեջ հաստատել:

Գիտության մեջ է Աստուծո տաճար,
Եվ մեծությունը ճարտարապետի,
Ավ չէ ըմբռնել այն վերին Հանճար,
Որով ենթարկվեց տիեզերք օրենքի.

Չէ կարող այսօր յուր խղճի առջե
Ուսուցանել մեղ գործը Արարչի,—
Եվ աղոթում ենք, որ այսուհետեւ
Այդ կրոնուույցն, որպես կայծ հանգչի:

Կրոնն է վերին ըստաղություն,
Այն զգացմունք է անեղբականի,
Կրոնը նույն է, թե ճշմարտություն,
Որի թարգմանը — միտքը է սրտի:

Կրոնը չունի որոշյալ տաճար,
Նորա տաճարն է ընդհանուր աշխարհ,
Կրոնի համար սահման հատանել,
Նույն է, թե նորան լիովին ժկատել:

Բայց դուք, ո՞վ խեղճեր, միակած աշքերով
Կամիք տեսանել կրոնի մեծություն, —
Եվ ահա՛ ինչու մեռած եք սրտով,
Երբեք ձեզ չկա մի խաղաղություն:

Եվ ահա՛ ինչու մենք ձեր բերանից
Դնենք լսում մի խոսք, որ միիթարեր

Կյանքիս տրտունջը, — Ո՞ւր են ոգելից
Կրոնի ուսմունք, ո՞ւր այն մաքուր Սեր:

Ո՞ւր է այն հզոր քրիստոնեություն,
Որ կամեր բերել մեղ արքայություն,
Որ կամեր մեր քեռն թեթևացնել,
Եվ ըոլոր աշխարհ լուսով ծավալել:

Ով կրոնուսույց, ծանո՞թ է այս քեզ,
Հասկանո՞ւմ ես դու, ինչ եմ խոսում ես.
Բացատրե՞լ ես դու այս բակրեներ,
Որ սեր խոսեին քո աշակերտներ:

Դու վարժապետ ես, ասա՛ մեղ արձակ.
Դու աստվածային տառերի թարգման.
Կրթեցի՞ր սրակը, որ մի պատարագ
Խնկեին անկեղծ կրոնասիրության:

Կտկաղ է լեզուդ, և հաղիվ աճա
Հնչում է խոսքըս, որ արդարանա
Թե «քր բանը չէ, դու աշխարհական,
Ուրեմն շոնիս մա՛սըն քննության»:

Ո՞չ, իմ հայ եղրայր, ես ցափում եմ քեզ,
Ցափում եմ հոգով և ոչ խոսքերով.
Անապատ քո սիրտ — եղրայր իմ, խեղճ ես,
Անապա՛տ ես դու ցամաք ավազով:

Դու շոնիս քո մեջ ոչինչ ուսուցիլ,—
Թե ունիս — գայլ են ոչխարի մորթով.
Ո՞վ պետք է լինի սրտիդ սփոփիլ,
Երբ մենք շափում ենք մեր օդտի շափով:

Եվ մի՞թե կեռն իրավունք չուներ
Տանջզիլ ծովի մեջ հուսահատ վշտի,
Եվ մի՞թե կեռն գոշել կարող չէր,
Որ Հայի կյանքն է խո՛ց ախորանքի:

Բավական է այս, մի ա՛յլ ժամանակ
Զոհելու եմ այդ մեծագնի գործին:
Բայց այժմ, խնդրեմ, եկե՛ք և գնանք,
Հետեւնք սակավ ծանոթ կեռնին,

Ի՞նչ եղավ կեռն, տարակուսելով
Ինձ հարցանում է ընթերցասիրողն.
Կամի՞ս որ լսենք, — սկսի՛ր շուտով.
Տա՛ր կեռն կավիկաս, հառաջ տար, քերթող, —

Այդպե՞ս է, ուրեմն թո՛ղ հյուսիս օտար,
Թո՛ղ քո սիրածը, զնանք միասին,
Ուր բարձրանում է Կագրեկ մէժափառ, —
Եթ այն ժամանակ ողջո՞ւն Կավկասին,
Եսկ թե սա ծածկվի — ողջո՞ւն դաշտերին,
Փրիբածավալ գետերին ողջո՞ւն,
Ուր հառաջ կը գա քեզ նոր բնություն:

Ներիր ինձ, Մուկվա.

Կրկին անսության քեզ խոսքրու տաւով,
Երկար միջոցով կամիմ բաժանվել,
Եվ սրտիս հուզման հնագանդելով,
Իմ լևոնի հետ ճանապարհորդել.

Պատրաստ կամ—Ահա—

Սիրած գրքերից մեծ պաշար առած.—
Տիուր մեղեդիք Հեյնե պոետի,
Գեուսեի Ֆառաւու, այս անմահ քերթված,
Թափառաշրջիկ արկածըն Հարուցիւ

Երգիծանիշ դործը Հորենալի,
Եվ թեռանժեի ոգելից երգեր,
Եվ պատմությունը լրջամիտ Բեռքիւ,
Եվ Շեքսպիրի ողբերգությունները

Մի քանի համար Մեղվից Պոլիսի,
Մի քանի երգեր մեզ ծանոթ Կոմսի,—
Եվ այս բոլորը ամուր կապկած,
Անմեղ լրացրի թերթերով փաթթած—

Գնում է լևոն Խոտորնակ որպես
Ցուր սլացման մեջ ծիծառը գարնան,
Թոշում է լևոն հեռու ասպարեզ,—
Դյութիշ արկելք — ճնշված Հայատա՞ն:

Արծակ ձգում է յուրյան ճանապարհ
Օդում սավառնող արծվի թափչով,
Նա հատանում է գաշտեր ծաղկավառ,
Հայրենի երկիր ուղիղ դիմելով:

Եվ ահա քաղաք... և այն հայ քաղաք,
Այստեղ խոռված ժողովրդականք,
Պատրաստ են վարքը անտուակ
Անբարիշտ հովվի անբարոյական...

Խավար, բռնագոր և ծնունդ դահճի,
Դահճ արարով և դահճ հոգով,
Հովվում է հոտը մեր կուսավորչի
Անուղղա բարքով, թյուր քարոզներով,

Մեծ արվեստ սնի հրապուրանքի
Եվ խորամանկ է այդ շարի հոգին.
Որպես անդունդը օվկիանոսի,
Գիտե բանտարկել յուր ահեղ գաղտնին:

Որպես գիշերի թանձրամած խավար,
Նորա կուրծքի մեջ անմոռնի միտքեր
Ալեկոծվում են. նա ստրկար
Լսում է նոցա, պարզում է ձեռներ...

Եվ ամրոջ դժոխքն ամբարշտության
Ոնչում է Հովիվն. նա գաղտագողի,

Պղծելով կնիքն ձեռնադրության
նա զավաճա՞ն է յուր Հայրապետի,

Կը ճնշվես բաղդից, եզվի՞տ ինքնիշխան,
Եկ կը ճնշե քեզ առաքինություն.
Եվ այս քո պատիժ, խորամանկ զղթան,
Որ ծնանում է քո մեջ ցանկություն.

Եղթայել կամքը խեղճ ժողովրդի,
Բարօրությունը ոտնակոխ առնել,—
Ճնշելու է քեզ, Լայոլի որդի —
Պատրա՛ստ է քեզ փոսն, որ դու ես փորել:

Այն գործը միայն փառք է պահանջում,
Որ բաղաքացու փայլում է կյանքով,
Որ ազգի վիճակն է բարեկարգում,
Որ զարդարում է աշխարհս շնորհով:

Դու շար ես գործում և կամքս, որ այդ
Հանցանքի իժը մենք բարի՝ հաշվենք,
Եվ ճշմարտության լարեր որոզայթ
Դու խիստ հոժար ես, մի՛թե չդիտենք:

Ընկեր քո գործին — դժոխք սկամած.
Եվ բոլոր զեկեր քո հետ զինվորված,
Ուր շարագործ է մատնիլ մի տգեղ,
Դու տասնապատիկ Հուշա ես այնտեղ:

Պատասխանի՛ր մեզ, ո՞ւր է արգասիք
Քո վաստակների. ինչո՞վ կարացավ
